

**ԳԵՎՈՐԳ ԴԱՆԻԵԼՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարար,  
արդարադատության երկրորդ դասի պետական խորհրդական,  
իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր



**ՉԵԿՈՒՅՑ**  
**ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ**  
**«ԵՐԵՒԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻՆ ԱՌՆՉՎՈՂ ՀՀ**  
**ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԱՌԿԱ ՈՐՈՇ**  
**ԽՆԴԻՐՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ**  
**ՉԵԿՈՒՅՑՈՒՄ ԱՐԾԱՐԾՎԱԾ**  
**ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ<sup>1</sup>**

Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի «Երեխայի իրավունքներին առնչվող ՀՀ օրենսդրության մեջ առկա որոշ խնդիրների վերաբերյալ» հրապարակային զեկույցում երեխայի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության կտրվածքով քննարկման առարկա են դարձել արդիական և հիրավի իրավական համարժեք կարգավորման կարիք ունեցող հարցադրումներ: Դրանց առնչությամբ ներկայացված առաջարկությունների մի մասը, թեպետ խմբագրական բնույթի են, սակայն ևս կարող են նպաստել նրշված իրավահարաբերությունների իրավական կարգավորման բարելավմանը:

Ընդհանուր առմամբ առաջարկությունները միտված են օրենսդրական հստակեցումներին և առկա օրենսդրական հակասությունների վերացմանը: Առկա են նաև վիճահարույց հարցադրումներ, մասնավորապես, կարծում են, որոշ հարցադրումների առնչությամբ նկատվում է օրենսդրության նրբություններին ոչ համարժեք մոտեցման դրսևորումներ, որոնց հակիրճ կանոնադառնանք ստորև:

**1.** Անդրադառնալով երեխայի ծննդի պետական գրանցման ոլորտում առկա խնդիրներին,

մասնավորապես այն երևույթի մասին, ըստ որի տարաբնույթ պատճառներով դեռևս առկա են երեխաների ծննդի չգրանցման դեպքեր, հրապարակային զեկույցում առաջարկվում է «Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ ամրագրել դրույթ այն մասին, որ ծննդաբերած կինը բժշկական հաստատությունից դուրս է գրվում միայն երեխայի ծննդականը ներկայացնելու դեպքում»: Սա ծանոթ ընթացակարգ է, քանզի լայն կիրառում ունեն խորհրդային իրավական համակարգում:

Ավելին, այն առաջին հայացքից բավականին գործնական է թվում, սակայն զեկույցի հեղինակները չպետք է անտեսեին մի անչափ կարևոր խնդիր. ներկայացված ընթացակարգը, ըստ էության, հանգեցնում է ծննդաբերած կնոջ և նրա նորածին երեխայի ազատագրվմանը, ինչն անշուշտ հակասում է Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Կոնվենցիայի 5-րդ հոդվածի և Սահմանադրության 16-րդ հոդվածի հիմնարար դրույթներին, քանզի խախտվում է այդ անձանց անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքը:

Առաջարկվող տարբերակով նույնիսկ

<sup>1</sup> Չեկույցը ներկայացվել է մարդու իրավունքների պաշտպանի «Երեխայի իրավունքներին առնչվող ՀՀ օրենսդրության մեջ առկա որոշ խնդիրների վերաբերյալ» հրապարակային զեկույցի առնչությամբ 2009թ. փետրվարի 9-ին Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում անցկացված խորհրդարանական լսումների շրջանակներում:

ազատագրված են քարտեզավորված ինքն էլ պետք է վճարի իրեն ապօրինի պահելու ծախսերի համար. «Ընդ որում, եթե երեխայի ծննդականը չի ներկայացվում բժշկական հաստատությունում անվճար, օրենսդրությամբ սահմանված ժամկետում, ապա այնտեղ մնալու հետագա ծախսերը կրում է երեխային ծննդաբերած կինը»: Այսպիսի ընթացակարգ անգամ նախատեսված չէ հանցագործության համար ազատագրված անձանց պարագայում: Անհասկանալի է նաև, թե ի՞նչ կապ ունի պարտադիր կարգով բժշկական հաստատությունում պահելը ծննդականը ներկայացնելու հետ, մանավանդ, որ ծննդականը ներկայացնելու գործընթացը կախված է տարբեր անձանցից և տարբեր օբյեկտիվ հանգամանքներից:

Կարծում եմ, որ հարկ է ծննդի գրանցման գործընթացը բարելավելու նպատակով ձեռնարկել՝ վարչարարության մատչելիությանն ու գործընթացների նկատմամբ վերահսկողության գործուն լծակներ ներդնելուն ուղղված միջոցառումներ, սակայն, երբեք չպետք է տեղիք տալ նորածին երախայի և ծննդաբերած կնոջ իրավունքների ոտնահարմանը: Վերջին հաշվով, դրանով փորձում ենք օրինականացնել այդ անձանց պատանդ պահելը՝ սոսկ ծննդի փաստը հաստատող փաստաթղթի ներկայացումն ապահովելու համար:

Ի դեպ, եթե խորհրդային իրավական համակարգի պայմաններում դա կիրառելի էր, ապա ներկա իրավական համակարգում այն ներառելը որևէ կերպ հնարավոր չէ: Խնդիրն այն է, որ նախկինում բուժհաստատությունները ևս պետական հիմնարկներ էին, իսկ ներկայումս բուժհաստատությունները բացառապես բժշկական սպասարկում ու օգնություն իրականացնող կազմակերպություններ են, որոնց չի կարելի պարտադրել, որպեսզի իրենք հարկադրաբար իրենց մոտ պահեն արդեն իսկ լիարժեք բուժսպասարկում ստացած անձին:

**2.** Անշուշտ օրենսդրական դրույթների հստակեցումներին ուղղված առաջարկությունները ևս կարևոր են և դրանք կարող են պիտանի լինել հետագա իրավաստեղծ գործունեությունում:

Սակայն դրանք ևս համակողմանի վերլուծության կարիք ունեն: Այսպես՝ ծննդի պետական գրանցման հիմքերի բացակայության դեպքում պետական գրանցման ընթացակարգը հրստակեցնելուն ուղղված առաջարկությունում ներկայացված է հետևյալ ձևակերպումը. «որոշակի կնոջից երեխայի ծննդյան փաստը»: Տվյալ դեպքում անտեղի է «որոշակի կնոջից» արտահայտությունը, քանզի ինքնին հասկանալի է, որ երեխան կնոջից է ծնվում: Իսկ, եթե փորձ է արվել շեշտելու նաև կոնկրետ այն կնոջ տվյալները, որը երեխա է ծննդաբերել, ապա դա տեղին չէ, քանի որ քննարկման առարկա «Քաղաքացիական կացության ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասում կարգավորման առարկան բացառապես երեխայի ծննդի փաստն է. «Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ ծննդի պետական գրանցման հիմքերի բացակայության դեպքում երեխայի ծննդի պետական գրանցումը կատարվում է երեխայի ծննդաբերության փաստը հաստատող՝ դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռի հիման վրա»:

Ինչ վերաբերում է ծննդի ակտի գրանցման բովանդակությանը, ապա այն նախատեսված է նույն օրենքի արդեն 22-րդ հոդվածով:

Բացի այդ, առաջարկվող տարբերակը բացառում է այլ մարմինների կողմից ծննդի պետական գրանցումը, թողնելով այն բացառապես դատարանին, ինչը նահանջ է պարզեցված համակարգից՝ բարդին:

**3.** Հարկ է, կարծում եմ, վերանայել Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքի 35-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ պարբերությունները միավորելու վերաբերյալ առաջարկությունը: Ձեկույցում ներկայացված խմբագրությունում առկա է ներքին հակասություն: Այսպես՝ խոսվում է ամուսնությունն անվավեր ճանաչելու դեպքում երեխայի հայրությունը որոշելու մասին, սակայն, միաժամանակ երեխայի մոր ամուսնու հայրությունը հավաստելու պարտադիր հիմք է համարվում նրանց ամուսնության պետական գրանցումը: Ինքնին հասկանալի է, որ ամուսնությունը անվավեր ճա-

նաչելու դեպքում հարիր չէ խոսել պետական գրանցում ունեցող ամուսնության մասին:

Չի բացառվում, որ գեկույցի հեղինակները պարզապես փորձել են բացառել մոր կողմից հայրության վերաբերյալ դիմում ներկայացնելը, ինչն առանձին խնդիր է և առանձին քննարկում է պահանջում, սակայն տվյալ դեպքում նկատի ունենք այն, որ ներկայացված առաջարկությունը ոչ թե նպաստում է իրավական լուծումների հստակեցմանը, այլ՝ դրանք առավել խրթին է դարձնում:

**4.** Կարևոր է նաև խնամակալի և հոգաբարձուի ինստիտուտների հստակ սահմանազատումը, սակայն դա բնավ իրավական տեխնոլոգիայի խնդիր չէ և պահանջում է առավել խորը վերլուծություն: Այսպես՝ անդրադառնալով Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքի 39-րդ հոդվածի ձևակերպումներին, գեկույցի հեղինակներն իրավամբ նկատում են, որ դրանում առկա է որոշ անճշտություն. «հոգաբարձու» տերմինն ավելորդ է, քանզի անգործունակ ճանաչված ծնողի նկատմամբ նշանակվում է միայն խնամակալ, ինչը բխում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 31-րդ հոդվածից:

Սակայն, արդյո՞ք մենք խնդիրն ամբողջությամբ լուծում ենք սույլ «հոգաբարձու» տերմինը հանելով, կարծում են՝ ոչ: Հարկ է նկատել, որ օրենսդրությամբ հավասարապես կարգավորման առարկա պետք է դառնար ինչպես անգործունակ, այնպես էլ սահմանափակ գործունակ ծնողներին առնչվող հարաբերությունները, քանզի առավել մեծ նշանակություն ունի այն, որ ծնողի պետական գրանցման գրքում ծնողների վերաբերյալ կատարած գրառումը վիճարկող ծնողի գործունակության հետ կապված խնդիրներ են առաջացել ոչ թե հոգեկան հիվանդության (այս դեպքում անձը ճանաչվում է անգործունակ և նշանակվում է խնամակալ), այլ՝ թրմրանյութեր, ալկոհոլային խմիչքներ պարբերաբար օգտագործելու հետևանքով իր գործողությունները ղեկավարելու ունակությունը կորցնելու արդյունքում: Վերջին դեպքում արդեն ծնողը ճանաչվում է սահմանափակ գործունակ և նրա

նկատմամբ նշանակվում է հոգաբարձու:

Ուստի խնդիրը լուծելու համար հարկ էր, թերևս, ոչ թե բացառել հոգաբարձուի ինստիտուտը, այլ շեշտել, որ սահմանափակ գործունակություն ունեցող ծնողի դեպքում միայն հոգաբարձուն կարող է դատական կարգով վիճարկել վերը նշված հարցը:

**5.** Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքի մեկ այլ՝ 36-րդ հոդվածի կապակցությամբ գեկույցի հեղինակները գտել են, որ դրանում առկա է անհարկի կրկնություն, մասնավորապես նշվում է «*ծնողներից մեկի կամ մոր*» արտահայտությունը: Ըստ գեկույցի, եթե ծնողներից մեկին արդեն իսկ վերապահված է հայրությունը դատական կարգով որոշելու համար դատարան դիմելու իրավունք, ապա ինչ իմաստ ուներ հատուկ շեշտել, որ այդ իրավունքից օգտվում է նաև մայրը, մի՞թե մայրը ծնողներից մեկը չէ:

Անշուշտ մայրը ծնողներից մեկն է, սակայն հոդվածի հիշյալ դրույթը հատվածաբար է ներկայացված, որի արդյունքում էլ այդպիսի անհամարժեք տպավորություն է ստեղծվել, մինչդեռ հիշյալ հոդվածում դատարան դիմելու իրավունք վերապահված է ինչպես ծնողներից մեկին, այնպես էլ մոր կամ իր երեխայի խնամակալին (հոգաբարձուին): Այսինքն, երկրորդ դեպքում խոսք է գնում ոչ թե մոր, այլ մոր և երեխայի խնամակալի (հոգաբարձուի) մասին. «Ամուսնության մեջ չգտնվող ծնողներից երեխա ծնվելու դեպքում, եթե բացակայում է ծնողների համատեղ դիմումը կամ երեխայի հոր դիմումը, ապա որոշակի անձից երեխայի սերված լինելու փաստը (հայրությունը) որոշվում է դատական կարգով՝ *համապատասխանաբար ծնողներից մեկի կամ մոր, երեխայի խնամակալի (հոգաբարձուի), կամ այն անձի դիմումի հիման վրա, որի խնամքին է գտնվում երեխան* (ընդգծումը մերն է)»:

Տվյալ դեպքում մոր խնամակալի համար բացառություն սահմանելը ևս ունի իր բացատրությունը. մոր խնամակալը, ի տարբերություն հոր խնամակալի, հայրությունը ճանաչելու հարցում ունի ինքնուրույն գույքային շահեր:

6. Կարևոր հարցադրումներ կան նաև երեխաների քաղաքացիության առնչությամբ: Մասնավորապես, առաջարկվում է «Քաղաքացիության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և «Փախստականների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի մի շարք հոդվածներում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք կլուծեն փախստականների 14-ից 18 տարեկան անչափահաս երեխաների քաղաքացիության հարցն այն դեպքում, երբ փախստականները ձեռք են բերում Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն:

Ընդ որում, հարցի լուծման երկու տարբերակ է առաջարկվում, որոնցից մեկի համաձայն այդ տարիքի երեխաները քաղաքացիություն են ձեռք բերում փախստական ծնողների հետ միասին՝ իրենց համաձայնությամբ, իսկ երկրորդ տարբերակի համաձայն՝ երեխաները պարզապես փախստական ծնողների կողմից քաղաքացիություն ձեռք բերելու դեպքում ևս դառնում են քաղաքացիներ: Այսինքն, վերջին դեպքում երեխաների համաձայնությունը չի պահանջվում:

Հենց սկզբից նկատենք, որ երկրորդ տարբերակը որևէ կերպ ընդունելի չէ և հակասում է ավագ տարիքի երեխաների կամքը հաշվի առնելու միջազգային իրավական չափանիշներին: Ընդ որում, հրապարակային զեկույցի հեղինակներն իրենք են մեկ այլ հարցի առնչությամբ կարևորել երեխայի կամքը հաշվի առնելու հարցադրումը (մասնավորապես, ըստ զեկույցի, տասը տարին լրացած երեխայի անվան և (կամ) ազգանվան փոխումը կարող է կատարվել ոչ թե նրանց կարծիքը հաշվի առնելու, այլ՝ *պարտադիր* նրանց համաձայնությամբ): Այսպիսով, երեխայի կամքի առնչությամբ չի կարող թույլատրելի համարվել երկակի մոտեցումը:

Ինչ վերաբերում է երախայի համաձայնությամբ քաղաքացիության ձեռք բերմանը, ապա այն արդեն իսկ կարգավորված է «Քաղաքացիության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով: Պարզապես զեկույցում այդ հոդվածը վերլուծման առարկա չի դարձել: Այսպես՝ հիշյալ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետի

համաձայն, Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող և քաղաքացիություն չունեցող անձինք կարող են մինչև 2009թ. դեկտեմբերի 31-ը դիմել և ճանաչվել Հայաստանի Հանրապետության քաղաքացի: Տվյալ դեպքում խոսքը հենց փախստականների երեխաներին է վերաբերվում:

Ի դեպ, զեկույցում ընդհանրական է խոսվում քաղաքացիության ձեռք բերման մասին, մինչդեռ, կարևոր է նաև, թե ինչ եղանակով է ձեռք բերվում քաղաքացիությունը՝ *ստանալու, թե՛ ճանաչելու* միջոցով: Տվյալ դեպքում օրենսդրությամբ նախապատվությունը տրված է ճանաչմանը, ինչը անհամեմատ պարզ ընթացակարգ է ենթադրում: Այսինքն, այս դեպքում չի պահանջվում անգամ Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագիրը (26-րդ հոդված), քանզի ճանաչումն իրականացվում է պարզ ընթացակարգով. իրավասու մարմինների կողմից անձնագիր հանձնելու եղանակով:

Այս դեպքում արդեն կարող է սուսկ քննարկման առարկա լինել ժամկետը (օրենքով այն, ինչպես արդեն նշվեց, մինչև ս.թ. դեկտեմբերի 31-ն է), ինչը, անհրաժեշտության դեպքում, կարող է վերանայվել:

7. Միանշանակ ողջունելի են ալիմենտի չափը վերանայելուն ուղղված քայլերը, սակայն այս հարցում ևս հարկ է ապահովել անհրաժեշտ համաչափություն: Այսպես՝ առաջարկվում է Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքի 69-րդ հոդվածի 1-ին մասով յուրաքանչյուր երեխայի համար ալիմենտի նվազագույն չափ սահմանել ոչ թե հազար, այլ՝ յոթ հազար դրամը: Տվյալ դեպքում, որպես պատճառաբանություն է բերվում այն, որ հաշվարկի հիմքում ընկած նվազագույն աշխատավարձի չափը ակնհայտ քիչ է:

Նախ, նպատակահարմար է սահմանել ոչ թե կայուն չափ, այլ այն կախվածության մեջ դնել աշխատավարձի նվազագույն չափից (տվյալ դեպքում, դա կարող էր կազմել նվազագույն աշխատավարձի, օրինակ, քառասպատիկը և այլն): Բացի այդ, երախաների բազմաքանակության և ցածր աշխատավարձի դեպքում առա-

ջարկվող տարբերակը պարզապես չի աշխատի:

Ալիմենտի չափը ևս ենթակա է փոփոխման, ինչը բխում է նույն հոդվածի երկրորդ մասից. դատարանը կարող է ավելացնել կամ նվազեցնել օրենքով նախատեսված չափերը, հաշվի առնելով կողմերի գույքային ու ընտանեկան դրությունը և ուշադրության արժանի շահերը:

**Ց.** Լուրջ խնդիր է նաև երեխայի բնակելի տարածության իրավունքի ապահովումը: Անդրադառնալով այս հարցադրմանը, զեկույցում առաջ է քաշվել վերադառնալ այն կարգավորումներին, որոնք գործել են խորհրդային իրավական համակարգում և բնօգտագործման իրավունք են վերապահել ոչ միայն երեխաներին, այլև՝ ընտանիքի անդամներին, օրինակ՝ ամուսիններին:

Այս հարցի առնչությամբ հարկ է համարժեքորեն հաշվի առնել մի շարք միջազգային փաստաթղթերում (օրինակ, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Կոնվենցիային կից 1-ին արձանագրության 1-ին հոդվածում) և Սահմանադրության 31-րդ հոդվածում ամրագրված հիմնարար դրույթները. «Յուրաքանչյուր ոք իրավունք ունի իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու և կտակելու իր սեփականությունը: Սեփականության իրավունքի իրականացումը չպետք է վնաս պատճառի շրջակա միջավայրին, խախտի այլ անձանց, հանրության և պետության իրավունքներն ու օրինական շահերը:

Ոչ ոքի չի կարելի գրկել սեփականությունից, բացառությամբ՝ օրենքով նախատեսված դեպքերի. «Սեփականության օտարումը հասարակության և պետության կարիքների համար կարող է կատարվել միայն բացառիկ՝ գերակա հանրային շահերի դեպքերում, օրենքով սահմանված կարգով, նախնական համարժեք փոխհատուցմամբ» (31-րդ հոդված):

Միաժամանակ, այս հարցում առկա են բացառապես անչափահաս երեխաների իրավունքների հետ կապված որոշ խնդիրներ, որոնք կարող են լուծվել: Թերևս, կարիք կա անդրադառնալու երեխաների բնակության իրավունքի

ամրագրման խնդրին, այսինքն հիմքեր կան վերանայելու «Երեխայի իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով ընտանիքի անդամ հանդիսացող երեխաների բնակարանում ապրելու իրավունքի վերաբերյալ դրույթները՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 225-րդ հոդվածով առավել համապարփակ օգտագործելու կտրվածքով:

Կարծում են առնվազն երկու խնդիր կա հրատապ լուծելու՝

ա) ընտանիքի անդամ հանդիսացող երեխայի բնակտարածությունից օգտվելու իրավունքը պետք է ծագի օրենքի ուժով և կարիք չլինի պետական գրանցում պահանջող որևէ համաձայնագրի և

բ) բնակտարածության օտարման կամ այլ կերպ երեխայի իրավունքների սահմանափակման դեպքում պահանջվի խնամակալության (հոգաբարձության) մարմինների համաձայնությունը (ընդ որում, վերջին դեպքում պարտադիր պետք է համարվի ողջամիտ փոխհատուցման ինստիտուտը):

Բնականաբար, կարող է հարց ծագել, թե վերը նշված մոտեցումները արդյոք չեն հակասում Սահմանադրության 31-րդ հոդվածի դրույթներին: Կարծում են, երեխաների իրավունքների կտրվածքով՝ ոչ, քանի որ երեխաները համարվում են հանրային պաշտպանության կարիք ունեցող սոցիալական խմբի ներկայացուցիչներ, իսկ հիշյալ 31-րդ հոդվածը սեփականության իրականացումը որոշակի իմաստով կախվածության մեջ է դնում հանրության շահերից:

Ի դեպ, վիճարկելի է նաև ընտանիքի մյուս անդամների, մասնավորապես՝ ամուսինների բնակտարածության օգտագործման իրավունքի անվերապահ սահմանումը: Տվյալ դեպքում գործ ունենք բացառապես քաղաքացիաիրավական հարաբերությունների շրջանակներում լուծման ենթակա հարցադրումների հետ: Վերջին հաշվով, ամուսիններն անկաշկանդ կարող են օրենսդրությամբ սահմանված կարգով ու սահմաններում նախապես կարգավորել իրենց գույքային իրավունքների և պարտականություն-

ների շրջանակը:

Ի դեպ, գործնականում երախաների իրավունքները դատական պրակտիկայում պահպանվում են հետևյալ կերպ. անկախ այն հանգամանքից, թե երեխաների բնակտարածության օգտագործման իրավունքը համաձայնագրով ամրագրված է, թե՛ ոչ, այդ իրավունքի դադարման դեպքում սեփականատիրոջը պարտավորեցնում են փոխհատուցում տալ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 225-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով նախատեսված կարգով:

**9.** Երեխաների պաշտպանության Ազգային Հանձնաժողովի մասին: Թյուր պատկերացում է կազմվում որ, եթե Հայաստանի Հանրապետության վարչապետին կից ստեղծվում է որևէ հանձնաժողով, ապա վերջինս ձեռք է բերում նախարարությունից բարձր կարգավիճակ: Իրականում, դրանք կարևոր կառույցներ են, սակայն որևէ կերպ չեն կարող ավելի բարձր կարգավիճակ ունենալ, քան նախարարությունները, և վերջիններիս կատարման համար տալ պարտադիր ցուցումներ: Հարկ է նկատել, որ դրանք նախ սոսկ խորհրդակցական մարմիններ են, իսկ դրանց կողմից կայացված որոշումները իրավական ուժ են ստանում և համարվում կատարման համար պարտադիր միայն այն դեպքում, երբ իրենց արտացոլումն են ստանում Հայաստանի Հանրապետության կառավարության, կամ Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշումներում: Բացի այդ, նշված հանձնաժողովները պետական մարմիններ չեն, որպեսզի ունենան բարձր կամ ցածր կարգավիճակ:

Անհրաժեշտ է նկատել, որ քննարկվող ոլորտում օրենսդրության բարելավման խնդիրները ևս գտնվում են Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության ուշադրության կենտրոնում: Մասնավորապես, նախորդ տարվա ընթացքում, ինչպես արդեն նշվել է մարդու իրավունքների հրապարակային զեկույցում, մեր նախաձեռնությամբ հանվել է ծննդի պետական գրանցման համար սահ-

մանված տուրքը: Սակայն, առավել մեծ ուշադրություն է դարձվել այն անհարկի սահմանափակումների վերացման վրա, որոնք անձանց համար հիրավի անհիմն ծախսերի ու քաշքշուկների տեղիք էին տալիս:

Այսպես՝ օրինակ, «Քաղաքացիական կացության ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի համաձայն, երեխայի ծննդի պետական գրանցումը կարող էր իրականացվել միայն այն վայրի ՔԿԱԳ մարմնում, որտեղ գտնվել է երեխան (խոսքը գտնված երեխաների մասին է): Սա գործնականում անհարկի սահմանափակման էր վերածվել: Առաջարկում ենք հետևյալ տարբերակը. երախայի ծննդի գրանցումը կարող է իրականացվել նաև երեխայի բնակության վայրի ՔԿԱԳ մարմնում, եթե երեխայի գտնվելու վայրը հայտնի չէ:

Նույնաբնույթ այլ նախաձեռնություններով ենք հանդես եկել՝ կապված ամուսնալուծության, որդեգրման դեպքերում վարչական մարմիններին կամ դատական ատյաններին դիմելու ընթացակարգերը պարզեցնելու կտրվածքով:

Իմ կողմից հանձնարարություն է տրվել արդարադատության նախարարության քաղաքացիական կացության գրանցման գործակալությանը՝ հանգամանորեն ուսումնասիրելու մարդու իրավունքների «Երեխայի իրավունքներին առնչվող ՀՀ օրենսդրության մեջ առկա որոշ խնդիրների վերաբերյալ» հրապարակային զեկույցում բարձրացված հարցադրումները, դրանց առնչությամբ վերը նշված և այլ գերատեսչությունների կողմից ներկայացված նկատառումները և դրանց վերլուծությունների արդյունքում մշակել ու պաշտոնական շրջանառության մեջ դնել համապատասխան օրինագծեր:



**ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**  
**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ**  
**ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ 2008Թ. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ**  
**ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Հաշվետու ժամանակահատվածում արդարադատության նախարարության գործունեության ամփոփ վերլուծության արդյունքներով կարելի է եզրահանգել, որ ընդհանուր առմամբ նախարարությանը հաջողվել է իրագործել նախանշված ծրագրային խնդիրները և հանդես գալ անհրաժեշտ նախաձեռնություններով: Միաժամանակ, արձանագրվել են որոշ բացթողումներ, որոնց մասին հանգամանորեն կխոսվի ստորև՝ ըստ գործունեության ոլորտների նյութը շարադրելիս:

Նախարարության գործունեության բոլոր ոլորտները գործել են անխափան, ժամանակավորապես (2008թ. փետրվարի 10-ից մինչև սեպտեմբերի 1-ը) կասեցվել է միայն Մարդու իրավունքների եվրոպական դատարանի հետ կապերի աշխատանքը, ինչը պայմանավորված է եղել 2008թ. փետրվարի 9-ին նախարարության վարչական շենքում բռնկված հրդեհի հետևանքով տվյալ ոլորտին առնչվող փաստաթղթերի այրմամբ: Ներկայումս բոլոր փաստաթղթերը վերականգնված են, իսկ համագործակցությունը՝ վերականգնվել է ամբողջությամբ: Մյուս ստորաբաժանումները մինչև Հալաբյան 41/ա հասցեում գտնվող ԴԱՀԿ ծառայության շենքի թվով 5 հարկերի վերանորոգումը, որը տևել է մինչև մայիս ամիսը, աշխատել են առանձնահատուկ աշխատանքային ռեժիմով, ինչն էական բացասական ազդեցություն չի ունեցել աշխատանքի արդյունավետության վրա:

Հարկ է նկատել, որ այրված փաստաթղթերը սեղմ ժամկետում վերականգնելու գործում մեծ աջակցություն են ցուցաբերել բոլոր նախարարություններն ու գերատեսչությունները: Վերջիններս, մասնավորապես, ակնհայտ սեղմ ժամկետներում արդարադատության նախարարությանն են տրամադրել նախկինում իրենց կողմից ուղարկած փաստաթղթերի կրկնօրինակները: Բազմաթիվ դեպքերում արդարադատության նախարարությունը հնարա-

վորություն է ունեցել օգտվելու այդ գերատեսչությունների արխիվներից, մասնավորապես հենց այդ եղանակով են վերականգնվել ծառայողների անձնական գործերը, Մարդու իրավունքների եվրոպական դատարան ուղարկված նյութերը և այլն:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2008թ. հուլիսի 24-ի թիվ 870 որոշմամբ նախատեսված ծրագրային միջոցառումները, բացառությամբ ստորև ներկայացվածների, իրականացվել են սահմանված ժամկետում և որակով: Թերևս, բացառություն է կազմում Ծրագրի 49-րդ կետով նախատեսված միջոցառումը («Բաժնետիրական ընկերությունների մասին») և «Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը կառավարություն ներկայացնելու վերաբերյալ), որը կատարվել է 8 օր ուշացումով: Տվյալ դեպքում ուշացման պատճառը եղել է առանցքային հարցադրումների վերաբերյալ ստացված առաջարկությունների առնչությամբ լրացուցիչ քննարկումներ անցկացնելու անհրաժեշտությունը: Զննարկումների նախաձեռնությունը եղել է իմը, ուստի ձեռնպահ եմ մնացել կարգապահական պատասխանատվության հարց բարձրացնելուց:

Ժամկետի խախտում է արձանագրվել նաև Ծրագրի 19-րդ կետով: Այդ կետով նախատեսված էր ներկայացնել 2 օրենսդրական ակտերի փաթեթ, որոնցից մեկը («Իրավական ակտերի փորձաքննության պետական ծառայության մասին») Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծ) ներկայացվել է ժամանակին, իսկ մյուսը (մարդու իրավունքների եվրոպական դատարանի հետ կապերի պետական ծառայության մասին) Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծ)՝ ուշացումով: Ուշ-

ացման պատճառը եղել է այն, որ Հայաստանի Հանրապետության վարչապետի հանձնարարությամբ հիշյալ նախագիծը լրացուցիչ քննարկման համար ուղարկվել է Հայաստանի Հանրապետության Նախագահի աշխատակազմ, որտեղից պատասխանը ստանալուն պես, ներկայացվել է Հայաստանի Հանրապետության կառավարություն: Ներկայումս երկու նախագծերի հետ կապված ժամկետը հետաձգվել է մինչև 2009թ. մարտի 3-րդ տասնօրյակը:

Կարելի է փաստել, որ արդարադատության նախարարության կողմից պատշաճ կարգով իրականացվել են նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2008թ. հուլիսի 24-ի թիվ 870-Ն որոշմամբ հաստատված գերակա երեք խնդիրները:

Ստորև ներկայացված են նախարարության գործունեության արդյունքները՝ ըստ կոնկրետ ոլորտների և դրանց համար պատասխանատու կառուցվածքային ստորաբաժանումների.

### **1. Իրավական ակտերի փորձաքննության և իրավական ակտերի նախագծերի մշակման ոլորտ:**

**Արդյունքները:** Նշված ոլորտն առանձնանում է, թերևս, իր նկատելի ծանրաբեռնվածությամբ, ինչը, հասկանալի պատճառներով, աճի միտում ունի: Այսպես՝ նախարարության իրավական ակտերի փորձագիտական վարչության կողմից պետական փորձագիտական եզրակացություն է տրվել 819 օրենքի, Հայաստանի Հանրապետության Նախագահի 8 հրամանագրի, Հայաստանի Հանրապետության կառավարության 1105 որոշման, Հայաստանի Հանրապետության վարչապետի 168 որոշման և Ազգային ժողովի 11 որոշման նախագծերի վերաբերյալ: Այսպիսով, հիշյալ վարչությունն օրական 10 օրինագծի առնչությամբ փորձագիտական եզրակացություն է պատրաստել: Համեմատության համար նկատենք, որ դեռ երկու տարի առաջ այդ ցուցանիշը կազմում էր ընդամենը 7:

Նույն հաշվետու ժամանակահատվածում նշված վարչության կողմից եզրակացություն է տրվել 422 գերատեսչական նորմատիվ

իրավական ակտի վերաբերյալ: Ընդ որում, դրանցից 21-ի գրանցումը մերժվել է, իսկ մի մասի առնչությամբ տրվել են թերությունները վերացնելուն ուղղված առաջարկություններ: Նմանաբնույթ աշխատանք է տարվել նաև տեղական ինքնակառավարման մարմինների թվով 829 իրավական ակտերի կտրվածքով:

Նշված վարչության, նախարարի խորհրդականների ու դատաիրավական բարեփոխումների վարչության աշխատակիցների աջակցությամբ մշակվել և օրենսդիր մարմին են ներկայացվել 10 օրենքի նախագծեր, իսկ 5-ը գտնվում են նախնական քննարկման փուլում: Ընդ որում, դրանց մեծ մասը եղել են օրենսդրական փաթեթներ: Հիշյալ ակտերից, թերևս, նշանակալից դեր ունեն «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի նախագծերը: Առաջինով տարածաշրջանում առաջին անգամ ներդրվեց իրավական ակտերի ներազդեցության գնահատման ինստիտուտը, իսկ երկրորդով՝ նախադեպը չունեցող տարբերակով, առաջին անգամ կողիֆիկացվեց վարչական իրավախախտումների վերաբերյալ ողջ օրենսդրությունը, որի հիմքում դրվեցին ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանն ուղղված միանգամայն նոր ինստիտուտներ:

Հավելենք նաև, որ վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի նախագիծը բավականին ծավալուն իրավական փաստաթուղթ է, այն ներառում է ավելի քան 600 հոդված և հանդիսանում է վերջին շրջանի, թերևս, ամենածավալուն օրենսդրական ակտի նախագիծը: Ընդ որում, հարկ է եղել կողիֆիկացման արդյունքում անդրադառնալ շուրջ 60 օրենսդրական ակտի, որոնք այս կամ այն չափով պարունակում են վարչական իրավախախտումների վերաբերյալ նորմեր:

Լուրջ ձեռքբերում կարելի է համարել այն, որ դատաիրավական պրակտիկայից



առաջարկվեց հանել վարչական տույժ նշանակելու վերաբերյալ որոշումների հարկադիր կատարումն ապահովելու համար անվերապահորեն դատարան դիմելու և դրանք դատական քննության առարկա դարձնելու՝ նախադեպը չունեցող ընթացակարգը: Ներդրված նոր համակարգի համաձայն, որոշումները կարող են վիճարկվել միայն այն անձանց նախաձեռնությամբ, ովքեր վիճարկում են դրանց օրինականությունը և հիմնավորվածությունը:

Նախարարության աշխատակիցները ներգրավվել են իրավական ակտերի նախագրծերի մշակման 17 միջգերատեսչական աշխատանքային խմբերում:

*Առկա խնդիրները և դրանց լուծման նախանշված ուղիները:* Վերլուծությունը ցույց է տալիս, որ վերը նշված վարչությունն անվիճելիորեն առանձնանում է մասնագիտական բարձր ունակությունների և աշխատանքի անհամեմատ մեծ ծավալի առկայությամբ: Նման իրավիճակը անխուսափելիորեն հանգեցնում է կադրերի անհարկի հոսունության: Խնդիրն այն է, որ մասնավոր սեկտորը նախապատվությունը մեծամասամբ տալիս է հենց օրենսդրության նրբություններին իրազեկ մասնագետներին: Բնականաբար, շատերը այս ստորաբաժանումը ևս նախընտրում են, նկատի ունենալով կադրային առաջխաղացման հնարավորությունները, սակայն հաճախ ցածր աշխատավարձը համարվում է լուրջ խոչընդոտ: Այդ իսկ նկատառումով, կարծում են, Հայաստանի Հանրապետության վարչապետի հանձնարարությամբ պաշտոնական շրջանառության մեջ դրված նախագծերը լավագույն միջոցն են՝ վերը նշված հիմնախնդիրը լուծելու տեսանկյունից:

Մտահոգող խնդիրներից, թերևս, կարելի է առանձնացնել հետևյալները՝

- որպես կանոն, համարժեք ուշադրություն չի դարձվում ծրագրային կամ հայեցակարգային փաստաթղթերի վրա, ինչը պայմանավորված է այդ փաստաթղթերը ավանդաբար ոչ լիարժեք իրավական ակտեր դիտելու ոչ իրավաչափ միտումով,

- թվով 31 նախագծի առնչությամբ տրված փորձագիտական եզրակացություններում արձանագրվել են ակնհայտ անհիմն դիտողու-

թյուններ,

- առանձին դեպքերում չի հաջողվել իրավական փաստաթղթերի նախագծերը գերծ պահել քերականական և շարահյուսական անհարկի սխալներից, վրիպակներից,

- իրավական բարեփոխումներ իրականացնելու նախաձեռնությամբ հանդես գալու ունակություններ դրսևորել են միայն եզակի աշխատակիցներ:

Վերը նշված թերությունները բացառելու նկատառումով նախանշվում են հետևյալ կազմակերպարարական միջոցառումները՝

- վարչության ներսում հարկ է ապահովել որոշակի մասնագիտացում, ինչը կապահովի փորձագիտական եզրակացությունների որակի բարձրացումը,

- մշակել մեթոդական ցուցումներ՝ ծրագրային և հայեցակարգային փաստաթղթերի առնչությամբ փորձագիտական եզրակացություններ տալու վերաբերյալ,

- փորձագիտական եզրակացությունների գնահատման էական չափանիշ համարել նաև քերականական և շարահյուսական կանոնների պահպանումը:

Կարևոր են համարում նաև նեղ մասնագիտական հարցադրումներին վերաբերող նախագծերի առնչությամբ փորձագիտական եզրակացություններ ներկայացնելիս և օրինագրծեր մշակելիս առավել գործնական դարձնել նախարարության այլ ստորաբաժանումների, ինչպես նաև Հանրապետության գիտաուսումնական հիմնարկների հետ համագործակցությունը:

Ինչ վերաբերում է կատարողական կարգապահությանը, ապա առանձին դեպքերում ժամկետների գերազանցման փաստերի ուսումնասիրությունը թույլ է տալիս հանգելու այն եզրահանգման, որ դրանք պայմանավորված չեն եղել ծառայողական պարտականությունների կատարման նկատմամբ անփույթ վերաբերմունքով: Յավոք, նախագծերը սահմանված ժամկետում պաշտոնական շրջանառության մեջ դնելու համար հարկ է եղել սպասել, որպեսզի դրանց վերաբերյալ ստացվեն այլ շահագրգիռ գերատեսչությունների առաջարկությունները և դիտողությունները:

## **2. Դատաիրավական բարեփոխումների ոլորտ:**

*Արդյունքները:* Նկատի ունենալով հիշյալ ոլորտի արդիականությունը, նախարարությունում ձևավորվել է ինքնուրույն ստորաբաժանում՝ Դատաիրավական բարեփոխումների վարչություն: Այս վարչության գործունեության արդյունքում համակարգված տեսքով նախանշվել են դատաիրավական բարեփոխումների գրեթե բոլոր ասպեկտները, առանձնացվել են դատաիրավական ողջ համակարգի էական թերություններն ու բացթողումները և դրանց լուծման առավել ընդունելի իրավական եղանակները:

Վարչության աշխատակիցները միաժամանակ ներգրավված են առանցքային նշանակություն ունեցող իրավական ակտերի նախագծերի մշակման աշխատանքներում: Այսպես՝ հաշվետու ժամանակահատվածում վարչության կողմից մշակվել է 8 օրենքի, Հայաստանի Հանրապետության Նախագահի մեկ կարգադրության, արդարադատության նախարարի 5 հրամանի նախագծեր:

Վարչության կողմից մշակվել և ներկայումս շրջանառության մեջ է դրվել «Դատաիրավական բարեփոխումների 2009-2011թթ. ռազմավարական գործողությունների ծրագիրը և ծրագրից բխող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը, ինչը, ըստ էության, հանդիսանում է դատաիրավական բարեփոխումների ողջ ընթացքն ապահովող ամբողջական ծրագրային փաստաթուղթ:

Հիշյալ վարչության կողմից համակարգվել են «Ռուբեժ 2008» համատեղ հրամանատարա-շտաբային զորավարժության ընթացքում հետազոտությունների անցկացման առաջադրանքի առաջին փուլի համար անհրաժեշտ փաստաթղթերի մշակման աշխատանքները, որոնք բարձր են գնահատվել իրավասու կառույցների կողմից:

Արդյունավետ աշխատանքներ են տարվել նաև քրեակատարողական համակարգում ինչպես միջազգային կառույցների, այնպես էլ տեղական հասարակական կազմակերպու-

թյունների, մասնավորապես հասարակական դիտորդների կողմից կատարված ուսումնասիրությունների և ստուգումների արդյունքների համակողմանի քննարկման և դրանց առնչությամբ գործնական առաջարկություններով հանդես գալու ուղղությամբ: Մասնավորապես, արդյունավետ կարելի է համարել Եվրոպայի Խորհրդի հետ համագործակցությամբ 2008թ. հունիսի 24-25-ին Երևանում անցկացված եվրոպական բանտային կանոնների և բանտային կառավարման վերաբերյալ փորձագիտական հանդիպումը:

Ներկայումս վարչության գործունեության արդյունքում կայուն և արդյունավետ համագործակցության կապեր են ձևավորվել քրեակատարողական համակարգի գործունեության նկատմամբ հետաքրքրասիրություն ունեցող գրեթե բոլոր հայտնի հայրենական հասարակական կազմակերպությունների, ԵՄ եվրոպական հանձնաժողովի, Եվրոպայի Խորհրդի, Կարմիր խաչի միջազգային կոմիտեի, ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի, ՍԱԿ-ի մանկական հիմնադրամի և ՀԿԹՀԾ-ի հետ:

Վարչությունը պարբերաբար համագործակցում է արդարադատության նախարարության «Իրավաբանական ինստիտուտ» ՊՈԱԿ-ի հետ և նախարարին է ներկայացնում այդ ինստիտուտի գործունեության բարելավմանն ուղղված առաջարկություններ:

*Առկա խնդիրները և դրանց լուծման նախանշված ուղիները:* Այս ոլորտում իրեն զգացնել է տալիս մասնագետների խիստ պակասը: Խնդիրն այն է, որ այս ոլորտում ի վիճակի են աշխատել բացարձակապես այն իրավաբանները, որոնք ոչ միայն քաջածանոթ են հայրենական օրենսդրությանը և միջազգային փաստաթղթերին, այլև ունեն ակնհայտ ստեղծագործական միտք, ի գործ են համակարգված վերլուծություններ կատարել դատաիրավական բարեփոխումների հիմնախնդիրների առնչությամբ, վարժ տիրապետում են օտար լեզուներին: Ցավոք, այս դժվարությունները որոշակի իմաստով վանում են դրսի մասնագետներին, ինչի արդյունքում իրեն զգացնել է տալիս տևական ժամանակով թափուր տեղերի առկայությունը:

Կարծում են, այնուամենայնիվ, չպետք է վերանայվեն այդ վարչության աշխատակիցների պաշտոնների անձնագրերով նախատեսված պայմանները՝ դրանք մեղմացնելու առումով: Ելքը, թերևս, կարող է լինել այն, որ այդ վարչության առավել ունակ և արդյունավետ աշխատանք ցույց տված աշխատակիցները տեղափոխվեն այն ստորաբաժանումներ, որտեղ սահմանված կլինեն համեմատաբար բարձր աշխատավարձեր: Տվյալ դեպքում նկատի ունեն, ինչպես իրավական ակտերի փորձաքննության վարչությունը, այնպես էլ Եվրոպական դատարանի հետ համագործակցության վարչությունը, որոնց կարգավիճակը նախատեսվում է վերանայել:

Նկատելի բացթողումներից է նաև այն, որ վարչության աշխատակիցները, թերևս, բավարար չափով չեն ուսումնասիրել դատաիրավական բարեփոխումներին առնչվող բոլոր հիմնահարցերի վերաբերյալ միջազգային փորձն ու միջազգային դատական ատյանների նախադեպային դատական ակտերը, ինչը նվազեցնում է որոշ հարցադրումների կապակցությամբ կոնկրետ առաջարկություններով հանդես գալու իրական հնարավորությունները:

Այդ առնչությամբ հարկ է համակարգված տեսքով առանձնացնել բոլոր վիճահարույց և մեր երկրի դատաիրավական բարեփոխումների բնականոն ընթացքի ապահովման համար էական նշանակություն ունեցող հարցերը և դրանցով իրականացնել առանձին համալիր ուսումնասիրություններ:

### **3. Միջազգային իրավական հարաբերությունների ոլորտ:**

**Արդյունքները:** Այս ոլորտում նախարարության գործունեությունը հիմնականում ապահովվում է միջազգային իրավական հարաբերությունների վարչության կողմից: Վարչության կողմից, մասնավորապես, մշակվել և հետագայում հաստատվել են Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության և Սլովակիայի, Բուլղարիայի, Թուրքմենստանի ու Հունգարիայի արդարադատության նախարարությունների միջև գործընկերային համագործակցության մասին համաձայնագրերը:

Ընդհանուր առմամբ վարչություն մուտք է եղել 500 գործ, որոնցից 181-ը եղել են միջազգային պայմանագրերի նախագծեր: Վարչության կողմից այդ միջազգային փաստաթղթերի առնչությամբ ներկայացված եզրակացությունները հիմնականում եղել են որակով: Վարչության կողմից տրամադրվել են Հայաստանի Հանրապետության կողմից միջազգային պայմանագրերի ստորագրման, վավերացման կամ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի գործողության դադարեցման նպատակահարմարության վերաբերյալ 11 տեղեկանք, ինչպես նաև 7 իրավաբանական կարծիք:

Վարչության վրա են դրված միջազգային կազմակերպությունների կողմից պահանջվող՝ արդարադատության ոլորտին առնչվող հարցադրումներով ամբողջական տեղեկանքներ և ամփոփումներ պատրաստելը: Այս առնչությամբ հարկ է նկատել, որ միջազգային կառույցները մշտապես իրենց գոհունակությունն են արտահայտել ստացված տեղեկատվության լիարժեքության առնչությամբ. երբևիցե հարկ չի եղել լրամշակել նախկինում ուղարկված տեղեկատվությունը:

Վարչությունը մասնակցել է նաև Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից պատրաստվող տեղեկատվական փաստաթղթերի մշակմանը: Այսպես՝ վերջինս մասնակցել է ԵԽ խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոմիտեի զեկույցի մշակման աշխատանքներին:

Բնորոշ է նաև այն, որ վարչության աշխատակիցների ջանքերով հնարավոր եղավ ամբողջովին վերականգնել 2008թ. փետրվարի 9-ին արդարադատության նախարարության շենքում բռնկված հրդեհի հետևանքով վնասված ու ոչնչացված միջազգային պայմանագրերի բազան, և ներկայումս շարունակվում են այդ փաստաթղթերի լիարժեք հաշվառման աշխատանքները:

Իմ հանձնարարությամբ վարչության կողմից հաշվետու ժամանակահատվածում առանձնացվել են արդարադատության նախա-

րարության համար իրավասություն սահմանող միջազգային պայմանագրերը, որոշվել են դրանց համար պատասխանատու ստորաբաժանումները և պարբերաբար քննարկվում է այդ ուղղությամբ կատարված աշխատանքը: Ի դեպ, կարծում եմ, որ այս մոտեցումը անհրաժեշտ է նաև կիրառել մյուս նախարարություններում և գերատեսչություններում, քանի որ առանց այդ միջազգային փաստաթղթերի առանձնացման գրեթե հնարավոր չէ լիարժեք ու համակարգված աշխատանքներ իրականացնել՝ դրանցով նախատեսված խնդիրների լուծման ու պարտավորությունների կատարման ուղղությամբ:

*Առկա խնդիրները և դրանց լուծման նախանշված ուղիները:* Դեռևս անհրաժեշտ խորությամբ ուսումնասիրված չէ իրավական համագործակցության ոլորտում անհրաժեշտ հարցադրումների և նախընտրելի պետությունների շրջանակը: Վարչությունը պետք է կոնկրետ առաջարկություններ ներկայացնի այդ հարցադրումների առնչությամբ: Մասնավորապես, իմ կողմից խնդիր է դրվել հանգամանորեն պարզել այն երկրների շրջանակը, որոնց հետ լիարժեք իրավական համագործակցության խնդիրն առավել առանցքային ու հրատապ նշանակություն ունի:

Վարչությանը հանձնարարվել է նաև բարձրացնել միջազգային այցերի, համատեղ քննարկումների ընթացքում համագործակցության որակը: Այդ իսկ նկատառումով, հանձնարարվել է միջազգային այցերի արդյունքներով կազմված փաստաթղթերում ոչ միայն պարզապես արձանագրել քննարկման առարկա հարցադրումները, այլև ներկայացնել կոնկրետ առաջարկություններ՝ այդ երկրների դատաիրավական համակարգի առանձին ինստիտուտների կիրառման հնարավորության և նմանաբընույթ այլ հարցադրումների վերաբերյալ:

#### **4. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի հետ կապերի ոլորտ:**

*Արդյունքները:* Այս ոլորտում պատասխանատու Մարդու իրավունքների եվրոպական դատարանի հետ կապերի վարչությունը դրսևորել է պատշաճ ու մասնագիտական անհրաժեշտ պահանջներին բավարարող աշխատանք: Այդ մասին է վկայում նաև այն փաստը,

որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, առանց բացառության, բոլոր գործերով ստացված առարկությունները և պատասխանները համարել է սպառիչ և լրացուցիչ հարցումներով երբեք չի դիմել: Կարծում եմ, որ այդ վարչության աշխատանքով է մասամբ պայմանավորված նաև այն, որ նվազում է անհարկի՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարան դիմելու միտումը:

Վարչության կողմից իրականացվել են Մարդու իրավունքների եվրոպական դատարան ներկայացված գանգատների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առարկությունների, հաշտության համաձայնությունների, արդարացի փոխհատուցման վերաբերյալ առարկությունների նախապատրաստման, Դատարանի կողմից Հայաստանի Հանրապետության վերաբերյալ կայացված վճիռների կատարմանն ուղղված աշխատանքներ:

Ինչպես արդեն նշվեց այդ աշխատանքները կատարված են եղել զուտ օբյեկտիվ պատճառներով, ինչը չի ազդել այդ ոլորտում վարչության աշխատանքների ընդհանուր որակի վրա: Վարչության կողմից մշակվել են նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարան ներկայացված գանգատներին անմիջականորեն չառնչվող, սակայն վարչություն մուտքագրված գրությունների, հարցումների, նամակների պատասխանների նախագծեր:

Վարչության աշխատակիցները մասնակցել են որակավորման և մասնագիտական գիտելիքների կատարելագործմանն ուղղված մի շարք միջոցառումների:

Հաշվետու ժամանակահատվածում վարչության կողմից, մասնավորապես, կատարվել են հետևյալ աշխատանքները.

Վարչության կողմից նախապատրաստվել և Մարդու իրավունքների եվրոպական դատարանում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր ներկայացուցչին ու նրա տեղակալին են ներկայացվել Հայաստանի Հանրապետության կառավարության առարկությունների նախագծերը Հայաստանի Հանրապետության դեմ Դատարան ներկայացված 13 գանգատի վերաբերյալ:

Դատարանից ստացվել են Հայաստանի Հանրապետության դեմ ներկայացված գանգատներ և: Այդ գանգատների կապակցությամբ Հայաստանի Հանրապետության կառավարության առարկությունների ներկայացման համար Դատարանի կողմից սահմանված ժամկետներն ավարտվում են, որպես կանոն, 2009 թվականի գարնանը, ուստի նշված գանգատների առնչությամբ Հայաստանի Հանրապետության կառավարության առարկությունների նախագծերի կազմման աշխատանքները գտնվում են ընթացքի մեջ:

Բացի վերոնշյալը, Մարդու իրավունքների եվրոպական դատարանից ստացվել է նաև սեփականության իրավունքի խախտումներին, մասնավորապես պետական կարիքների համար սեփականության օտարմանը վերաբերող մոտ 16 գանգատ, որոնցով ներկայացվել են Հայաստանի Հանրապետության կառավարության առարկությունների նախագծեր:

Վարչությունն իր լիազորությունների շրջանակներում նաև անհրաժեշտ միջոցառումներ է ձեռնարկում Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների կատարման ուղղությամբ: Մասնավորապես այս կապակցությամբ կատարվել են հետևյալ աշխատանքները.

Մի շարք գործերով, այդ թվում՝ «Պայքար և հաղթանակ ՍՊԸ-ն ընդդեմ Հայաստանի», «Մարտիսանյանն ընդդեմ Հայաստանի», «Մելտեքս ՍՊԸ-ն և Մեսրոպ Մովսեսյանն ընդդեմ Հայաստանի», «Գալստյանն ընդդեմ Հայաստանի» գործերով Հայաստանի Հանրապետության նկատմամբ կայացված վճիռներով նախատեսված արդարացի փոխհատուցումն ապահովելու համար վարչության կողմից կազմվել և Հայաստանի Հանրապետության կառավարություն են ուղարկվել Հայաստանի Հանրապետության կառավարության համապատասխան որոշումների նախագծերի փաթեթները:

Կազմակերպվել են «Պայքար և հաղթանակ ՍՊԸ-ն ընդդեմ Հայաստանի», «Մարտիսանյանն ընդդեմ Հայաստանի», «Մելտեքս ՍՊԸ-ն և Մեսրոպ Մովսեսյանն ընդդեմ Հայաստանի», «Գալստյանն ընդդեմ Հայաստանի»,

«Նիկողոսյանը և Մելքոնյանն ընդդեմ Հայաստանի» գործերով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից կայացված վճիռների թարգմանության աշխատանքները և հրապարակումը:

Հիշյալ վարչության աշխատանքի բնույթն այնպիսին է, որ վերջինս առավել իրագեղված է հայրենական օրենսդրության խոցելի դրույթների մասին, քանզի դրանց վերաբերյալ համապատասխան դրույթներ են ամրագրվում ոչ միայն կոնկրետ Հայաստանի Հանրապետության առնչությամբ կայացված դատական ակտերում, ուստի բնորոշ է, որ վերջինս հանդես է գալիս նաև օրենսդրական բարեփոխումներ անելու որոշ նախաձեռնություններով:

Այսպես՝ «Պայքար և հաղթանակ ՍՊԸ-ն ընդդեմ Հայաստանի» գործով կայացված վճիռի կատարման կապակցությամբ վարչության կողմից մշակվել են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում և «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերը, որոնց նպատակն է եղել դատավարության մասնակիցների հավասարության և արդարադատության մատչելիության համար լրացուցիչ երաշխիքների ամրագրումը:

Վարչությունում, հաշվի առնելով ոլորտի առանձնահատկությունը և նեղ մասնագիտական գիտելիքների անհրաժեշտությունը, հատուկ ուշադրություն է դարձվել աշխատակիցների որակավորման բարձրացման և մասնագիտական հմտությունների կատարելագործման վրա: Այդ նպատակով վերջիններս Հայաստանի Հանրապետությունում և դրա սահմաններից դուրս մասնակցել են մի շարք գիտագործնական միջոցառումների: Մասնավորապես, 2008թ. փետրվարին վարչության ներկայացուցիչը Իտալիայի Տրիեստ քաղաքում մասնակցել է սեմինարի՝ նվիրված Մարդու իրավունքների եվրոպական դատարանի պրակտիկային և ներպետական մակարդակում դրա վճիռների կատարման հարցերին: 2008թ. սեպտեմբերի 29-ից հոկտեմբերի 3-ը վարչու-

թյան աշխատակիցների կողմից կատարվել է ուսումնական այց Բուդապեշտ, իսկ 2008թ. հոկտեմբերի 31-ից նոյեմբերի 13-ը Վրաստանում տեղի է ունեցել սեմինար՝ նվիրված միջազգային մարդասիրական իրավունքին և մարդու իրավունքներին: 2008թ. հոկտեմբերի 16-ից 17-ը Երևանում Եվրոպայի Խորհրդի հետ համատեղ կազմակերպվել է սեմինար-թրեյնինգ վարչության աշխատակիցների համար, որի նախապատրաստական աշխատանքները ևս իրականացվել են վարչության կողմից:

Վարչության աշխատակիցների համար ձեռք է բերվել մեծաքանակ արդիական գրականություն՝ հիշյալ ոլորտին առնչվող հարցադրումների մեկնաբանության վերաբերյալ:

Այս ոլորտում լուծվել է նաև յուրաքանչյուր դատական ակտի կապակցությամբ մեղավոր պաշտոնատար անձանց պատասխանատվության ենթարկելու, ինչպես նաև նրանց մեղքով պատճառված վնասը փոխհատուցելու հարցերը սահմանված կարգով քննարկելու խնդիրը: Մասնավորապես, հաշվի առնելով, որ դատախազությունն իրավասու է ինչպես քրեական հետապնդում, այնպես էլ պետության գույքային շահերին պատճառված վնասի փոխհատուցման համար հայց հարուցելու իրավասությամբ, այդ դատական ակտերը սեղմ ժամկետներում ուղարկվում են Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազություն:

Միաժամանակ, եթե դատական ակտերը կարող են իրավակիրառական նշանակություն ունենալ դատական համակարգի համար, դրանք ուղարկվում են Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարան:

*Առկա խնդիրները և դրանց լուծման նախանշված ուղիները:* Վարչության կադրերը, որպես կանոն, հաճախ են նախընտրում այլ, ավելի բարձր աշխատավարձով աշխատանքի անցնելը: Ընդ որում, ասվածը վերաբերում է նաև վարչության ղեկավարությանը, այդ թվում՝ վարչության պետին (բնորոշ է, որ վարչության նախկին պետը տեղափոխվեց ԿԲ և ստանձնեց բաժնի պետի պաշտոն): Ընդ որում, այս վարչության աշխատակիցները մեծ պահանջարկ ունեն նաև մասնավոր սեկտորում ու միջազգային կազմակերպությունների աշխատակազմերում, քանի

որ քաջաձանոթ են արդի միջազգային իրավունքի դրույթներին, դատական պրակտիկային, ազատ տիրապետում են մի քանի օտար լեզուների և այլն: Նկատենք միայն, որ նույն գործերով, որպես փաստաբան վարձված իրավաբանները ստանում են տասնյակ անգամ ավելի վարձատրություն:

Այդ իսկ նկատառումով, իմ կողմից սա համարվել է 2-րդ ստորաբաժանումը, որի կարգավիճակի բարձրացման առումով համապատասխան օրենսդրական նախագիծ է ներկայացվել Հայաստանի Հանրապետության կառավարություն:

Հաջորդ խնդիրը վարչության աշխատակիցների, ըստ իս, ոչ բավարար նախաձեռնողական գործելաճան է: Որպես կանոն, այս վարչությունը տարեկան հանդես է գալիս դատական պրակտիկայից բխող 2-3 օրենսդրական նախաձեռնությունով, ինչը համարժեք չէ այն տեղեկատվությանը, որ տիրապետում է այդ վարչությունը: Ուստի անհրաժեշտ է աշխատանքի գնահատման ցուցանիշ համարել ոչ միայն հիմնավորված առարկություններ ներկայացնելը, այլև՝ դատական պրակտիկայից բխող օրենսդրական առաջարկություններ ներկայացնելը:

Բարելավման կարիք ունի նաև վարչության աշխատանքներում անհրաժեշտ թափանցիկություն ապահովելու գործընթացը: Գործնական վերլուծությունները ցույց են տալիս, որ հաճախ մամուլում այս վարչության նախաձեռնությամբ նյութեր են հրապարակվում միայն այն դեպքում, երբ մամուլում ի հայտ է գալիս իրականությանը չհամապատասխանող տեղեկատվություն:

### **5. Զրեակատարողական համակարգի կառավարման ոլորտ:**

*Արդյունքները:* Այս ոլորտում ևս արձանագրվել են որոշակի դրական տեղաշարժեր, մասնավորապես այդ մասին են վկայում միջազգային իրավասու կազմակերպությունների կողմից կատարված ուսումնասիրության արդյունքներով կազմված զեկույցները: Մասնավորապես նկատելի աշխատանքներ են կատարվել դատապարտյալների պահման պայմանները էապես բարելավելու, նախկինում տարածված հիվանդությունների նվազման, բուժօգնու-



թյան սպասարկման որակի բարձրացման, մշակութային և սպորտային միջոցառումների նկատելի տարածման, աշխատատեղերի ավելացման, սոցիալ-հոգեբանական ծառայությունների ծավալների ընդլայնման առումով և այլն: Արձանագրվել է քրեակատարողական հիմնարկներից փախուստի 1 դեպք, իսկ զանգվածային անկարգությունների կամ այլ նմանաբնույթ դեպքեր չեն արձանագրվել:

Հաշվետու տարին այս ոլորտի համար եղել է ակնհայտ բարդ ու պատասխանատու, կապված մարտիմեկյան հայտնի դեպքերի հետ: Քաղաքական ընդդիմադիր ուժերի ուշադրության կենտրոնում հայտնված համակարգը, ցավոք, փորձ էր արվում ներկայացնել հնարավորինս վատ երանգներով: Անգամ այն բանից հետո, երբ դատապարտյալները ազատվելուց հետո հայտարարում էին, որ իրենց նկատմամբ որևէ բռնություն չի կիրառվել, հիշյալ աղբյուրները շարունակում էին վերը նշված բնույթի պնդումները: Համակարգը հարկադրված էր պարբերաբար հերքել մամուլում, և առանձին քաղաքական գործիչների կողմից հետևողականորեն տարածվող ստահող լուրերը: Միաժամանակ արձանագրվել են մի շարք մտահոգող հիմնախնդիրներ, որոնց ևս կանդիդատներ:

Քրեակատարողական ծառայությունում 2008թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ գործել է 2307 հաստիքային միավոր, որոնցից քրեակատարողական ծառայողներ են 3188-ը, վարձու աշխատողներ՝ 119-ը: Ծառայողական պարտականությունների պատշաճ կատարման համար խրախուսանքի է արժանացել 365 ծառայող, իսկ տարբեր կարգապահական խախտումների համար տույժեր են կիրառվել 153-ի նկատմամբ: Ընդ որում, 11-ի նկատմամբ կիրառվել է պաշտոնից իջեցում, 9-ը ազատվել են պաշտոնից, իսկ 7-ի լիազորությունները դադարեցվել են ժամանակավորապես:

Հաշվետու ժամանակահատվածում կալանավորվածների և դատապարտյալների միջին թվաքանակը կազմել է 3775 անձ (քրեակատարողական հիմնարկների լրակազմը կազմում է 4396 անձ): 2008թ. հունվարի 1-ի դրությամբ կալանավորվածների և դատապարտյալների թիվը կազմել է 3539, իսկ 2009թ. հունվարի 1-ի

դրությամբ՝ 3965 անձ, որից 861-ը եղել են կալանավորված (դրանցից 17-ը կին է, իսկ 39-ը՝ անչափահաս), 3104-ը եղել են դատապարտյալ (դրանցից 110-ը կին է, իսկ 37-ը՝ անչափահաս): Փակ տիպի ուղղիչ հիմնարկում դատապարտյալների թիվը կազմել է 741, որոնցից 81-ը դատապարտված է ցմահ ազատազրկման: Կիսափակ տիպի ուղղիչ հիմնարկում դատապարտյալների թիվը կազմել է 1181, կիսաբաց տիպի ուղղիչ հիմնարկում՝ 868, իսկ բաց տիպի ուղղիչ հիմնարկում՝ 152:

Նշված ժամանակահատվածում քրեակատարողական հիմնարկներից ազատվել է 1496 անձ, պատիժը լրիվ կրել է 468-ը, պայմանական վաղաժամկետ կարգով ազատվել է 562-ը, ներման կարգով ազատվել է 27-ը, խափանման միջոց ընտրված կալանքը փոխվել է 302 անձի նկատմամբ, դատարանի դահլիճից ազատվել է 130-ը, իսկ հիվանդության պատճառով՝ 7-ը: Տարբեր հիվանդություններից մահացել է 26 դատապարտյալ:

Անվտանգության առումով իրականացվել են հետևյալ աշխատանքները՝

- քրեակատարողական համակարգի անվտանգության աշխատակիցների կողմից բացահայտված փաստերով հարուցվել է 96 քրեական գործ, որոնցից 18-ով կայացվել է դատավճիռ: Նշված գործերի մեծ մասը՝ 72-ը, վերաբերում է թմրանյութերի ապօրինի շրջանառությանը,

- կատարված խուզարկություններով հայտնաբերվել է 644 ռգելից խմիչք, 169,3գ թմրանյութ, 3300 կտրող-ծակող գործիք, 9.025940 դրամ և 1240 բջջային հեռախոս,

- վերանորոգվել և բարձրացվել են «Կոշ» և «Էրեբունի» քրեակատարողական հիմնարկների պարիսպները,

- կարգապահական խախտումների համար պատժախուց է տեղափոխվել 1176 անձ, 900 անձի հայտարարվել է նկատողություն, իսկ 221-ի՝ խիստ նկատողություն, ինչը բացառել է նրանց վաղաժամկետ ազատվելու հնարավորությունը:

Հաշվետու ժամանակահատվածում մեծ տեղ է հատկացվել սոցիալ-հոգեբանական աշխատանքներին: Համապատասխան ծառայու-

թյունների կողմից կատարվել է 73 այցելություն, վերջիններիս նախաձեռնությամբ բարելավվել են ոլորտի կարգավորմանը նվիրված ենթաօրենսդրական ակտերը, քննարկվել է 1520 դիմում, կատարվել է դատապարտյալների 84 ընդունելություն: Նախորդ տարվա համեմատությամբ առկա է այդ ծառայության կողմից իրականացվող աշխատանքների ծավալի աճ, այսպես, իրականացվել է 3631 իրավական խորհրդրատություն (2007թ.՝ 3611), 514 կանխարգելիչ միջոցառում (2007թ.՝ 462), մերձավոր ազգականների հետ 309 խորհրդատություն (2007.՝ 251) և այլն:

Հաշվետու տարում ակնհայտ աճել է սպորտային և մշակութային միջոցառումների որակը և քանակը (աճը կազմել է մոտ 20 տոկոս), ներդրվել են այդպիսի միջոցառումների անցման միանգամայն նոր ձևաչափեր, այդ թվում՝ նախապատվությունը տրվել է քրեակատարողական հիմնարկներից դուրս իրականացվող միջոցառումներին:

2008թ. սահմանված կարգով դատապարտյալներին տրամադրվել է 710 կարճատև նեկնումներ, որից սոցիալական վերականգնման նպատակով՝ 659, իսկ 51-ը՝ անձնական բացառիկ հանգամանքներից ելնելով:

2008թ. պետական բյուջեով քրեակատարողական համակարգի պահպանման համար հատկացված կապիտալ ծախսերի միջոցներով նորոգման լայնածավալ աշխատանքներ են իրականացվել «Կոչ» ԶԿՀ-ում, ընթացիկ նորոգման աշխատանքներ են իրականացվել «Էրեբունի» ԶԿՀ-ում, կապիտալ նորոգման աշխատանքներ՝ «Աբովյան» ԶԿՀ-ում: Նոր կառուցվող «Արմավիր» ԶԿՀ-ի շինարարական աշխատանքների վրա ծախսվել է 114996.2 հազար դրամ: Ընթացիկ վերանորոգման աշխատանքներ են կատարվել գրեթե բոլոր ԶԿՀ-ներում:

Միաժամանակ, դեռևս վերանորոգման լայնածավալ աշխատանքների իրականացման անհրաժեշտություն կա մի շարք ԶԿՀ-ներում, ինչը հնարավորություն կտա դրանք վերջնականապես համապատասխանեցնելու միջազգային չափանիշներին: Բնորոշ է այն, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային դատական ակտերով Մարդու

իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Կոնվենցիայի 3-րդ հոդվածի (խոշտանգումների արգելում) խախտում է դիտվում նաև այն փաստը, երբ դատապարտյալի համար չի ապահովվում նվազագույնը 4մ<sup>2</sup> տարածք:

Քրեակատարողական վարչության ընդհանուր բաժնում ընթացք է տրվել 11.825 փաստաթղթի, որոնցից 1388-ը ստացվել է դատապարտյալներից:

2008թ. հունիս ամսից քրեակատարողական վարչության կազմում սկսել է գործել սպառազինության բաժանմունքը: Այս ստորաբաժանումը ձևավորվել է այն հիմքով, որ արտաքին պահպանության գործառույթները Հայաստանի Հանրապետության ոստիկանությունից փոխանցվել են քրեակատարողական վարչությանը: Համակարգի ենթակայությանն է հանձնված 268 ՊՄ ատրճանակը, 274 ԱԿ-74 ինքնաձիգը, 6 ԱԿՄ-74 ինքնաձիգը, 2 ԱԿՄ-74ՈՒ ինքնաձիգը, 150 ԱԿՄ ինքնաձիգը և մյուս հրազենը պահպանվում է սահմանված պահանջներին ու պայմաններին համապատասխան:

Քրեակատարողական վարչության այլընտրանքային պատիժների կատարման ծառայությունը ևս կայացել է վերջին շրջանում: Ուսումնասիրությունները, ինչպես նաև դատախազական հսկողության կարգով իրականացված ստուգումների արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ այս ծառայությունը սահմանված կարգով է իրականացրել իր գործառույթները, մասնավորապես ապահովվել է 1038 անձից տուգանքի գանձումը, 480 դատապարտյալի կողմից հանրային աշխատանքների կազմակերպումը, 324 դատապարտյալի նկատմամբ որոշակի պաշտոններ զբաղեցնելու և որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկումը: Վերահսկողական գործառույթներ են իրականացվել պատիժը պայմանականորեն չկիրառված 1955 դատապարտյալի նկատմամբ:

Բուժապասարկման ոլորտում կատարված աշխատանքները համապատասխանում են օրենսդրությամբ ամրագրված պահանջներին: Միաժամանակ, անհրաժեշտ նախաձեռ-

նություն դրսևորելու արդյունքում ձեռք է բերվել անհրաժեշտ քանակի դեզկամերաներ, ստոմատոլոգիական սարքավորում, ԷՍԳ սարքավորում, տոնոմետրեր, շաքարաչափեր և այլն:

Հիվանդների թվաքանակի նկատելի փոփոխություն չի արձանագրվել. 2007թ. ստացիոնար բուժում ստացած հիվանդների թիվը կազմել է 1433, իսկ 2008թ.՝ 1331, տուբերկուլյոզով հիվանդների թիվն աճել է 19-ով (55-ից դարձել է 74): Ձեռք բերված լրացուցիչ սարքավորումների և աշխատանքների արդյունավետ կազմակերպման միջոցով աճել է լաբորատոր հետազոտությունների թիվը՝ 20873-ից հասել է 23841-ի:

*Առկա խնդիրները և դրանց լուծման նախանշված ուղիները:*

Այս ոլորտը մշտապես ուսումնասիրվում է միջազգային իրավասու կազմակերպությունների կողմից, որոնք սահմանված կարգով ներկայացնում են ամփոփ զեկույցներ: Դրանց ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հիմնական քննադատությունն ուղղված է դատապարտյալներին պահելու պայմաններին: Թեպետ, պետական բյուջեից զգալի գումարներ են հատկացվում այդ խնդիրների լուծմանը, այնուամենայնիվ, դրանք դեռևս բավարար չեն մոտ ժամանակահատվածում սպառիչ լուծել կուտակված՝ հիշյալ բնույթի խնդիրները:

Դրանց մեծ մասն իր լուծումը, թերևս, կստանա «Արմավիր» նոր քրեակատարողական հիմնարկի կառուցմամբ, քանի որ վերջինս կառուցվում է բացարձակապես միջազգային չափանիշներին համապատասխան և կարող է ընդունել 1200 դատապարտյալ:

Առկա են նաև պաշտոնական պարտականությունների ոչ պատշաճ կատարման դեպքեր: Այսպես՝ արձանագրվել են թմրանյութերի ապօրինի շրջանառությանը քրեակատարողական հիմնարկների իրավասու ծառայողների մասնակցության, դատապարտյալների հետ փոխհարաբերություններում իրավախախտումների, դատապարտյալների նկատմամբ ոչ համաչափ կարգապահական տույժի միջոցներ կիրառելու դեպքեր:

Թերևս, նկատելի է, որ անձնակազմի մասնագիտական պատրաստվածությունը չի

համապատասխանում ներկայացվող պահանջներին: Խնդիրն այն է, որ նախկինում հատուկ այդ համակարգի համար կադրեր պատրաստվել են բացառապես նախկին ԽՍՀՄ-ի տարածքում գործող կենտրոնացված ուսումնական հաստատություններում, իսկ հետագայում այդ գործառույթն իրականացրել է Հայաստանի Հանրապետության ոստիկանության ակադեմիան (այդ ժամանակահատվածում հիշյալ համակարգը դեռևս գտնվել է եղել ոստիկանության համակարգում), իսկ արդարադատության նախարարության համակարգ տեղափոխելուց հետո որևէ համապատասխան քայլ կադրերի պատրաստման ուղղությամբ չի իրականացվել: Կադրերի վերապատրաստմամբ մասամբ զբաղվում է «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական ինստիտուտ» ՊՈԱԿ-ը, սակայն այն ի գործու չէ ստանձնել կադրերի պատրաստման գործառույթը:

Ներկայումս իմ կողմից հանձնարարվել է այս հարցը քննարկել Հայաստանի Հանրապետության ոստիկանության հիշյալ կառույցի իրավասուների հետ և ներկայացնել ընդունելի լուծումներ: Խնդրի առնչությամբ Հայաստանի Հանրապետության գլխավոր ոստիկանապետ պարոն Ա.Սարգսյանն արդեն տվել է իր համաձայնությունը :

Դեռևս բավարար չեն պատժից ազատված անձանց հասարակության մեջ վերաինտեգրվելուն ուղղված աշխատանքները:

Սոցիալ-հոգեբանական աշխատանքների որակը բարձրացնելու նպատակով հարկ է մշակել և գործնականում կիրառել կոնկրետ մեթոդաբանություն՝ կախված ոչ միայն ուղղիչ հիմնարկի տիպից, այլև՝ դատապարտյալների խառնվածքից: Ընդ որում, հարկ է այդ աշխատանքներին ներգրավել նաև համապատասխան գիտահետազոտական հիմնարկների ուժերը:

Անհարկի շատ են բուժանձնակազմի թափուր հաստիքները: Այս առնչությամբ իմ կողմից հանձնարարություն է տրվել իրականացնել անհրաժեշտ համագործակցություն վերջին շրջանում բարի համբավ ձեռք բերած ոչ պետական բուհերի հետ և դրանց շրջանա-

վարտների միջոցով ապահովել թափուր հաստիքների համալրումը: Նախնական գործընթացները վկայում են այն մասին, որ այդ մոտեցումը կարդարացնի իրեն, քանի որ արդեն իսկ ավարտական կուրսի բազմաթիվ ուսանողներ իրենց համաձայնությունն են տվել և արդեն իսկ պրակտիկա են անցնում համակարգի բուժժառայությունում:

### **6. Դատական ակտերի հարկադիր կատարման ոլորտ:**

*Արդյունքները:* Դատական ակտերի հարկադիր կատարման ոլորտում պատասխանատու մարմինը ԴԱՀԿ ծառայությունն է: Այս կառույցի գործունեությունը հաշվետու տարում առանձնանում է աննախադեպ բարձր ցուցանիշներով: Ընդ որում, ցուցանիշների բարելավման դրական միտում առկա էր դեռ 2007թ., սակայն 2008թ. ընթացքում դրանք կտրուկ բարելավվեցին:

Ցուցանիշների բարելավման հետ մեկտեղ, կարելի է փաստել նաև, որ զուտ կազմակերպչական միջոցառումների արդյունքում բացառվել են կոռուպցիոն դրսևորումների և այլ տարաբնույթ չարաշահումների վերաբերյալ դիմումներն ու հաղորդումները: Ինչ վերաբերում է հանրահայտ քաղաքական հողի վրա արված հայտարարություններին, ապա դրանք անհիմն են, ինչի առնչությամբ բազմիցս առիթ է եղել ներկայացնելու պաշտոնական հերքումներ:

Այս ցուցանիշները վկայում են այն մասին, որ կոռուպցիայի դեմ պայքարը չի կարող սահմանափակվել միայն օրենսդրական բարեփոխումներով, որ մեծամասամբ դա պայմանավորված է քաղաքական կամքով և անհրաժեշտ կազմակերպչական հնարքների կիրառմամբ: Մասնավորապես, ԴԱՀԿ ծառայության ոլորտում դեռևս էական օրենսդրական բարեփոխումներ չեն իրականացվել, սակայն առկա ցուցանիշները վկայում են աշխատանքների որակի բարելավման մասին:

*Առկա խնդիրները և դրանց լուծման նախանշված ուղիները:*

Գործող օրենսդրությամբ ԴԱՀԿ ծառայությունն անհարկի ստորադասվել է սնանկության գործերով կառավարիչներին, ինչն ուղեկցվում է անհարկի կոռուպցիոն ռիսկերով:

Խնդիրն այն է, որ կառավարիչների գործունեությունը հիմնականում զերծ է գերատեսչական վերահսկողությունից, իսկ դատարանների կողմից այդպիսի վերահսկողություն չի կարող իրականացվել: Համեմատական վերլուծությունը, թերևս, ցույց է տալիս, որ նույնատիպ գույքը կառավարիչների կողմից, որպես կանոն, իրացվում է ցածր գներով:

Բացի այդ, նախադեպը չունեցող ընթացակարգի համաձայն, ԴԱՀԿ ծառայությունը գործող օրենսդրությամբ պարտավոր է պարտապանին հասանելիք գումարը չբավարարելու դեպքում, անհապաղ սնանկության հայց հարուցել դատարան, ինչը դարձյալ հանգեցնում է նրան, որ աճուրդները պետք է իրականացվեն միայն դատական համակարգի շրջանակներում գործող կառավարիչների կողմից: Ընդ որում, անտեսվել է այն ակնհայտ փաստը, որ ԴԱՀԿ ծառայությունը վեճի կողմ չէ և չի կարող իր նախաձեռնությամբ սնանկության գործընթաց սկսել:

Կարևոր խնդիր է նաև դատական ակտերի հարկադիր կատարման մասնավոր ծառայության ստեղծման ինստիտուտի բացակայությունը: «Դատաիրավական բարեփոխումներ» 2-րդ ծրագրի շրջանակներում մի շարք գերատեսչություններից այցեր են իրականացվել արտասահմանյան մի շարք երկրներ, որոնցում հանգամանորեն ուսումնասիրվել է հիշյալ պրակտիկան:

Ներկայումս աշխատանքներ են տարվում վերը նշված խնդիրների լուծմանն ուղղված օրենսդրական ակտերի նախագծեր պատրաստելու ուղղությամբ: Դրանց մի մասն արդեն իսկ ներկայացվել է Հայաստանի Հանրապետության կառավարություն, ուստի ակնկալվում է դրանց շահագրգիռ քննարկում:

### **7. Իրավաբանական անձանց պետական ռեզիստրի ոլորտ:**

*Արդյունքները:* Այս ոլորտը Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից դիտարկվել է, որպես ռազմավարական թիրախ և առաջադրվել են մի շարք խնդիրներ՝

ա) բարձրացնել այս ոլորտում բնակչությանը, հատկապես գործարարներին մատուցվող ծառայությունների որակը,

բ) բացառել գործարարության գրանցման ոլորտում կոռուպցիոն ռիսկերը,

գ) հնարավորինս պարզեցնել գրանցման ընթացակարգերը և հասնել «մեկ պատուհան»-ի սկզբունքի գործնական կիրառմանը:

Վերը նշված խնդիրներից առաջին երկուսն արդեն իսկ հիմնականում լուծվել են նախարարության կողմից օրենսդրական համապատասխան նախագծեր մշակելու միջոցով (խոսքը Հայաստանի Հանրապետության կառավարության 2008թ. հուլիսի 24-ի թիվ 870 որոշման 49-րդ կետի մասին է): Դրանք արդեն իսկ օրենքների տեսքով ընդունվել են Ազգային ժողովում: Նկատի ունեն այն, որ ներդրված համակարգի դեպքում արդեն գործակալության աշխատակիցն իրավասու չէ ստուգելու գրանցվող կազմակերպության կանոնադրությունը և սխալների առկայության հիմքով դրա գրանցումը մերժելու որոշում կայացնել:

Միաժամանակ, այդ ուղղությամբ աշխատանքները շարունակվում են և արդեն 2009թ. ամբողջությամբ շրջանառության մեջ կդրվեն այն օրենսդրական ակտերի նախագծերը, որոնք ուղղված կլինեն հիշյալ խնդիրների համալիր լուծմանը:

Ձեռնարկված նաև կազմակերպչական միջոցառումների արդյունքում իրավաբանական անձանց պետական ռեգիստրի համակարգում էապես նվազել են ծառայությունների մատուցման ժամկետները, կտրուկ նվազել են այդ համակարգի առնչությամբ քաղաքացիների բողոքները:

Վիճակագրական առումով հաշվետու ժամանակահատվածում իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության գործունեությունն ունի հետևյալ պատկերը՝ գրանցվել է 5 արտադրական կոդերատիվ, 3455 ՍՊԸ, 133 ՓԲԸ, 7 ԲԲԸ, 17280 անհատ ձեռնարկատեր: Նույն ժամանակահատվածում գրանցվել է 1 կուսակցություն, 248 հասարակական կազմակերպություն, 12 կրոնական կազմակերպություն, 11 իրավաբանական անձանց միություն, 82 հիմնադրամ, 23 արհեստակցական կազմակերպություն, 59 ՊՈԱԿ, 15 ոչ առևտրային կոդերատիվ և 34 համատիրություն: Հաշվառման է կանգնել 82 լրատվության

միջոց:

Իրականացվել է իրավաբանական անձանց (այդ թվում առանձնացված ստորաբաժանումներ) փոփոխությունների 7031, ՍՊԸ-ներում կատարված գրառումների 3177 և լուծարված իրավաբանական անձանց (այդ թվում առանձնացված ստորաբաժանումների) և անհատ ձեռնարկատերերի համապատասխանաբար 1005 և 1754 գրանցում:

Վերը նշված ծառայությունների դիմաց գործակալության կողմից գանձված պետական տուրքի գումարը կազմել է 174.397.5 հազար դրամ:

*Առկա խնդիրները և դրանց լուծման նախանշված ուղիները:*

Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի ոլորտում կարևորագույն խնդիր է համարվում, բացի վերը նշվածներից, միասնական էլեկտրոնային ցանցի բացակայությունը: Այս ուղղությամբ աշխատանքները բնականոն հուն վերադարձնելու նպատակով առարկայական բանակցություններ են վարվում Համաշխարհային բանկի իրավասուների հետ: Ձեռք բերված համաձայնության շրջանակներում հնարավոր կլինի սեղմ ժամկետում ներդնել համապատասխան համակարգ, որը հնարավորություն կտա լուծել սեղմ ժամկետում և մատչելի եղանակներով գործարարներին անհրաժեշտ տեղեկատվությունը ձեռք բերելու խնդիրը:

**8. Նոտարական գործունեության կառավարման ոլորտ:**

*Արդյունքները:* Այս ոլորտում ևս իրականացվել են մի շարք էական նշանակություն ունեցող բարեփոխումներ, որոնք շարունակական բնույթ են կրելու: Մասնավորապես, արդարադատության նախարարությունը հանդես է եկել Հայաստանի Հանրապետության կառավարության 2009թ. ծրագրում այդ ոլորտի հետագա բարելավմանն ուղղված նոր միջոցառումներ ներառելու նախաձեռնությամբ:

2008թ. ընթացքում Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի նոտարիատի բաժինը որոշակի աշխատանք է կատարել Հանրապետության նոտարների կողմից քաղաքացիներին մատուցվող ծառայության որակը բարձրացնե-

լու, նոտարական ծառայությունների մատուցման առաջադեմ մեթոդներ կիրառելու, նոտարական գործողություններ կատարելու օրինականությունն ապահովելու, բաժնում քաղաքացիների ընդունելությունը պատշաճ մակարդակով կազմակերպելու և նրանց դիմում-բողոքներին պատշաճ ընթացք տալու ուղղությամբ:

Ըստ ամփոփ վիճակագրական տվյալների, Հանրապետության նոտարները կատարել են շուրջ 550.000 նոտարական գործողություն, որոնց դիմաց գանձվել են 770 մլն դրամի չափով պետական տուրք: Օտարերկրյա պետություններում գործելու համար բաժինը լեգալացրել է 12.797 փաստաթուղթ, որոնց համար գանձվել է շուրջ 64 մլն դրամի չափով պետական տուրք:

2008թ. ապրիլ ամսին Հայաստանի Հանրապետության կառավարության 2002թ. մարտի 2-ի թիվ 193 որոշմամբ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության հետ համատեղ կազմակերպվել և անցկացվել են նոտարական գործողություններին մասնակցող թարգմանիչների որակավորման ստուգման քննությունները: Քննություններին մասնակցելու համար դիմել էր 55 քաղաքացի, որոնցից քննություններին մասնակցել է 53-ը: Քննությունների արդյունքների համաձայն, մասնակիցներից անցած է համարվել 20-ը:

2008թ. հուլիսի 1-ին Հայաստանի Հանրապետության կառավարության 2002թ. թիվ 789-Ն որոշմամբ նախատեսված կարգով կազմակերպվել և անցկացվել են նոտարի թեկնածուների որակավորման ստուգման քննություններ, որոնց մասնակցելու համար դիմել էր 25 քաղաքացի: Քննությանը մասնակցել է 21 դիմորդ, որոնցից ոչ ոք դրական միավորներ չի ստացել:

Հաշվի առնելով վերը նշված աննախադեպ իրավիճակը, 2008թ. դեկտեմբերի 1-ին Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի հրամանով անցկացվել է որակավորման ստուգման արտահերթ քննություն՝ նոտարների թափուր պաշտոնները լրացնելու նպատակով: Քննությանը մասնակցելու համար դիմել էր 15 դիմորդ, որոնցից քննությամբ

մասնակցել է 15-ը: Քննությունն անցած են համարվել 5-ը, որոնցից 3-ը նշանակվել են համապատասխանաբար Արագած նոտարական տարածքի, Սյիտակ նոտարական տարածքի և Վանաձոր նոտարական տարածքի նոտարների թափուր պաշտոններում:

Հաշվետու ժամանակահատվածում քրեմարկվել է քաղաքացիների կողմից ստացված 145 դիմում-բողոք և տարբեր կազմակերպություններից ստացված 157 գրություն ու հարցում: Նույն ժամանակահատվածում ընդունելության է եկել 120 քաղաքացի: Նոտարների աշխատանքային գործունեության ստուգումներ համեմատաբար քիչ են կատարվել նախարարության վարչական շենքում բռնկված հրդեհի պատճառով:

Նոտարների համար կազմակերպվել է 3 հանրապետական սեմինար-խորհրդակցություն, իսկ Երևան քաղաքի նոտարների համար ևս լրացուցիչ 6 սեմինար-խորհրդակցություն:

2008 թվականի հոկտեմբերի 8-12-ը արդարադատության նախարարությունը, նոտարական պալատի հետ միասին, ընդունել է Լատինական նոտարիատի միջազգային միության ներկայացուցիչներին, որոնք հանրապետության նոտարների համար անցկացրել են 6 թեմատիկ սեմինար:

*Առկա խնդիրները և դրանց լուծման նախանշված ուղիները:*

Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված նոտարիատի բնագավառում ծագած հիմնախնդիրների լուծման և կոնկրետ բարելավումներ կատարելուն ուղղված միջոցառումների ժամանակացույցի համաձայն, իրականացվել են հետևյալ միջոցառումները՝

- Երևանում ապակենտրոնացվել է ժառանգության իրավունքի վկայագրերի տրամադրման գործառույթը,

- Երևանի նոտարական գրասենյակների միջև ավարտվել են ժառանգական գործերի էլեկտրոնային տեղեկատվական ցանցի ստեղծման աշխատանքները,

- բոլոր նոտարական գրասենյակներում, բաժնի հանձնարարությամբ և աջակցությամբ, այցելուների համար տեղադրվել է տեղեկատ-



վություն նոտարական այլ գրասենյակների մասին,

- Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության երևանյան գրասենյակի հետ համատեղ, մշակվել և 2009թ. հունվարի 15-ից սկսվելու է նոտարական գրասենյակներում մոնիտորինգի իրականացում,

- նոտարական գրասենյակներում կիրառվել է քաղաքացիների նախապես հերթագրման միջոցով ծառայությունների մատուցում, որպես առաջադեմ մեթոդի կիրառում, որի համաձայն յուրաքանչյուր անձ վստահ կլինի, որ նշանակված ժամին, առանց որևէ խնդրի, իրեն կմատուցվի համապատասխան ծառայություն:

Ժամանակացույցով նախատեսված են նաև այլ միջոցառումներ՝

- նոտարի ստաժորների նշանակման կարգի սահմանում, նրանց իրավունքների, պարտականությունների և պատասխանատվության վերաբերյալ նորմերի հստակեցում,

- այդ բնագավառում նոտարի լիազորությունների սահմանում,

- նոտարի էթիկայի կանոնների պահանջների և դրանց խախտման համար պատասխանատվության օրենքով սահմանում,

- նոտարի գործունեության նկատմամբ հսկողության իրականացման ընթացակարգերի սահմանում,

- թարգմանիչների կողմից կատարվող թարգմանությունների սակագների սահմանում:

Այս միջոցառումները հնարավոր կլինի գործնականում կիրառել միայն «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելուց հետո, որի նախագիծը պատրաստ է, և որի ընդունման համար ժամանակացույցը նախատեսում է ժամկետ մինչև 2009 թվականի հուլիսի 1-ը: Այն քննարկվել է նոտարական պալատի հետ համատեղ, և դրա վերաբերյալ տրվել են գործնական առաջարկություններ:

Նախատեսված միջոցառումներից Հայաստանի Հանրապետության կառավարության 2002թ. հունիսի 6-ի «Նոտարների թեկնածուների որակավորման ստուգման կարգը հաստատելու մասին» թիվ 789-Ն որոշման մեջ արդեն

կատարվել են համապատասխան փոփոխություններ և լրացումներ:

2008թ. նոտարներին հատկացվել է պաշտպանիչ ինքնատեսակետի պիտակներ և նոտարական գործողությունների գրանցման գրանցամատյաններ, ինչպես նաև կազմակերպվել են նրանց կատարած նոտարական գործողությունների ռիսկն ապահովագրելու աշխատանքները:

### **9. Քաղաքացիական կացության ակտերի գրանցման ոլորտ:**

*Արդյունքները:* Քաղաքացիական կացության ոլորտում ծառայություններ մատուցող կառուցվածքային ստորաբաժանումները հիմնականում գտնվում են տեղական ինքնակառավարման մարմինների կազմում, սակայն դրանց գործունեության նկատմամբ նախարարությունն իրականացնում է վերահսկողություն և մշակում է համապատասխան մեթոդական ցուցումներ:

Վիճակագրական առումով հիշյալ ոլորտում կատարված աշխատանքն ունի հետևյալ պատկերը.

Նախ, Հայաստանի Հանրապետության ՔԿԱԳ տարածքային մարմինների կողմից կատարվել են հետևյալ ակտային գրանցումները՝ ծննդյան ակտի 41406 գրանցում (2007թ.՝ 40792), ամուսնության ակտի 18236 գրանցում (2007թ.՝ 18144), ամուսնալուծության ակտի 3192 գրանցում (2007թ.՝ 3083), հայրության որոշման ակտի 13257 գրանցում (2007թ.՝ 13158), որդեգրման ակտի 179 գրանցում (2007թ.՝ 187), մահվան ակտի 27281 գրանցում (2007թ.՝ 26827):

ՔԿԱԳ գործակալության և ՔԿԱԳ տարածքային բաժինների կողմից գանձվել է 175.321.500 (2007թ.՝ 157.369.225) դրամի չափով պետական տուրք:

Գործակալության ՔԿԱԳ աշխատանքների և մեթոդաբանության բաժինն ուսումնասիրել է անվան, հայրանվան և ազգանվան փոխման 625 (2007թ.՝ 868), քաղաքացիական կացության գրանցման ակտերում փոփոխություններ, լրացումներ և ուղղումներ կատարելու 1463 (2007թ.՝ 826) և քաղաքացիական կացության ակտերի գրանցումները վերականգնելու 136 (2007թ.՝ 95)

գործ: Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների խախտմամբ կազմված լինելու և այլ պատճառներով մերժվել են փոխման 25 (2007թ.՝ 9), ուղղման 41 (2007թ.՝ 18), վերականգնման 8 (2007թ.՝ 4) գործ: Փաստաթղթերի անբավարարության և այլ թերությունների պատճառով վերադարձվել է փոխման 57 (2007թ.՝ 39), ուղղման 134 (2007թ.՝ 48), վերականգնման 17 (2007թ.՝ 4) գործ:

Տրվել է ընտանեկան կարգավիճակի վերաբերյալ 4917 տեղեկանք (քաղաքացիներին՝ 3025, Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությանը՝ 1892):

Սահմանված կարգով ընթացք է տրվել ՔԿԱԳ վկայականների և փաստաթղթերը ապոստիլով վավերացման 1423 (2007թ.՝ 1340) դիմումի, Հայաստանի Հանրապետության քաղաքացիների և օտարերկրյա քաղաքացիների սահմանված կարգով ամուսնության 1112 դիմումի (2007թ.՝ 1132), 3361 հարցումների (2007թ.՝ 2506), քաղաքացիների 119 գրավոր դիմումների, դիմում-բողոքների (2007 թ.՝ 60):

Հաշվետու ժամանակահատվածում ՔԿԱԳ գործակալության փաստաթղթային շրջանառությունը կազմել է 18.786 փաստաթուղթ: ՔԿԱԳ գործակալության յուրաքանչյուր աշխատակցի միջին ծանրաբեռնվածությունը հաշվետու տարում կազմել է շուրջ 2.348 փաստաթուղթ և գործ:

Գործակալության հանրապետական արխիվի կողմից ստացվել է 7703 (2007թ.՝ 6540) հաղորդում, ստուգվել և ընթացք է տրվել 2506 (2007թ.՝ 2487) հարցումների և 392 (2007թ.՝ 455) դիմումների, տրվել է 120 (2007թ.՝ 194) վկայականի կրկնօրինակ, հարցումների կապակցությամբ ուղարկվել է 153 (2007թ.՝ 183) վկայական, 1815 (2007թ.՝ 1838) ակտերի պատճեններ, 963 (2007թ.՝ 910) ՔԿԱԳ առկայության կամ բացակայման տեղեկանքներ:

1993 թվականի մայիսի 29-ին Հաագայում ստորագրված «Երեխաների պաշտպանության և որդեգրման բնագավառում համագործակցության մասին» Կոնվենցիայի դրույթների գործնական կիրառումն ապահովելու, գործող օրենսդրությունը բարելավելու և միջազգային չափանիշներին և փորձին համապատասխան

մեցնելու նպատակով արդարադատության նախարարի նախաձեռնությամբ այս տարվա ապրիլ-հունիս ամիսներին կազմակերպվել են հասարակական լսումներ (կոնֆերանս, կլոր սեղան, խորհրդակցություններ) շահագրգիռ բոլոր գերատեսչությունների՝ Հայաստանի Հանրապետության կառավարության, արտաքին գործերի, աշխատանքի և սոցիալական հարցերի, առողջապահության նախարարությունների, Երևանի քաղաքապետարանի, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ոստիկանության ներկայացուցիչների, դատավորների, ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի Հայաստանյան գրասենյակի ղեկավարության և մի շարք հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ:

Կոնվենցիայի 7-րդ հոդվածի դրույթների համապատասխան ներպետական օրենսդրության և որդեգրման վիճակագրության մասին ՔԿԱԳ գործակալությունը տեղեկություններ է տրամադրել մի շարք պետությունների կենտրոնական մարմիններին, ինչպիսիք են՝ ԱՄՆ, Ռուսիան, Իսպանիա, Գերմանիա, Նիդեռլանդներ և այլն:

ՔԿԱԳ գործակալության կողմից մշակվել է «Երեխաների պաշտպանության և օտարերկրյա որդեգրման բնագավառում համագործակցության մասին» Կոնվենցիայով նախատեսված Կենտրոնական մարմին նշանակելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը, որն էլ ընդունվել է 2008թ. հուլիսի 24-ին (ուժի մեջ է մտել 2008թ. օգոստոսի 7-ին՝ թիվ 790-Ն որոշմամբ):

Հաշվետու ժամանակաշրջանում Գործակալության կողմից ստուգվել է Վարդենիսի, Կապանի, Մալաթիա-Սեբաստիայի ՔԿԱԳ տարածքային բաժինների գործունեությունը: Ստուգման արդյունքներով բացահայտվել են որոշակի թերություններ և խախտումներ: ՔԿԱԳ մարմինների աշխատակիցներին ցուցաբերվել է անհրաժեշտ մեթոդական օգնություն, իսկ Վարդենիսի և Կապանի համայնքների ղեկավարներին ներկայացված միջնորդագրերի հիման վրա Կապանի ՔԿԱԳ տարածքային բաժնի աշխատակիցները ենթարկվել են

կարգապահական պատասխանատվության, իսկ Վարդենիսի ՔԿԱԳ տարածքային բաժնի պետը ազատվել է գբադեցրած պաշտոնից:

Գործակալության աշխատակիցները պարբերաբար մասնակցում և օժանդակում են Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից նախաձեռնած Սիջազգային զարգացման ասոցիացիայի կողմից ֆինանսավորվող պետական հատվածի արդիականացման ծրագրի աշխատանքներին, որի բաղադրիչներից մեկը վերաբերվում է քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմինների համակարգչավորմանը: Հանրապետության ՔԿԱԳ տարածքային բաժինների աշխատակիցները մասնակցել են Սիջազգային զարգացման ասոցիացիայի կողմից կազմակերպված համակարգչային դասընթացներին, որից հետո ՔԿԱԳ գործակալությանը և ՔԿԱԳ տարածքային բաժիններին տրամադրվել է համակարգչային տեխնիկա:

Գործակալությունն իր իրավասության շրջանակներում սերտորեն համագործակցել է Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի, առողջապահության, աշխատանքի և սոցիալական ապահովության նախարարությունների, Հայաստանի Հանրապետության ոստիկանության, ինչպես նաև այլ մարմինների հետ: Կազմակերպվել է համատեղ քննարկման և լուծման ենթակա հարցերի վերաբերյալ խորհրդակցություններ: Աշխատակիցները մասնակցել են Գործակալության իրավասությանն առնչվող այլ մարմինների և միջազգային կազմակերպությունների կողմից կազմակերպվող սեմինարներին:

Գործակալության պատասխանատու աշխատակիցների կողմից զանգվածային լրատվության միջոցներով իրականացվել են ամուսնաընտանեկան հարաբերությունների և ՔԿԱԳ հետ կապված լուսաբանումներ:

Հաշվետու ժամանակաշրջանում Գործակալությունը ԼՂՀ արդարադատության նախարարությանը և ԼՂՀ ՔԿԱԳ մարմիններին ցուցաբերել է անհրաժեշտ օժանդակություն:

*Առկա խնդիրները և դրանց լուծման նախանշված ուղիները:*

2009թ. նախատեսվում է իրականացնել

հետևյալ միջոցառումները՝

- նկատի ունենալով, որ Հայաստանի Հանրապետության կառավարության 2008թ. հուլիսի 24-ի թիվ 970-Ն որոշմամբ ՀՀ արդարադատության նախարարությունը նշանակվել է երեխաների պաշտպանության և օտարերկրյա որդեգրման բնագավառում Կենտրոնական մարմին, անհրաժեշտ է համարվել մշակել և Հայաստանի Հանրապետության կառավարություն ներկայացնել «Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող երեխա որդեգրելու ցանկություն ունեցող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների, օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց, ինչպես նաև որդեգրման ենթակա երեխաների հաշվառման կարգ»-ի նախագիծը,

- մշակել և Հայաստանի Հանրապետության կառավարություն ներկայացնել լրացումներ և փոփոխություններ կատարելու վերաբերյալ նախագծեր Հայաստանի Հանրապետության կառավարության 2000թ. փետրվարի 12-ի «Երեխայի որդեգրման կարգը հաստատելու մասին» թիվ 64, 2007թ. փետրվարի 2-ի «Երեխաներ որդեգրել ցանկացող անձանց հաշվառման կարգը հաստատելու մասին» թիվ 209-Ն, 2002թ. նոյեմբերի 28-ի «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալության կանոնադրությունը և կառուցվածքը հաստատելու մասին» թիվ 1919-Ն և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2000թ. հունիսի 20-ի «Որդեգրման հարցերով հանրապետական հանձնաժողովի կանոնադրությունը և անհատական կազմը հաստատելու մասին» թիվ 370 որոշումներում,

- Կոնվենցիայով նախատեսված գործառույթները իրականացնելու, պայմանավորվող պետությունների Կենտրոնական մարմինների միջև համագործակցությունը առավել արդյունավետ իրականացնելու նպատակով նախապատրաստել միջնորդություն՝ ՔԿԱԳ գործակալությանը լրացուցիչ հաստիքներ տրամադրելու համար,

- «Քաղաքացիական կացության ակտերի մասին Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կա-

տարելու մասին» ՀՀ օրենքի ընդունումից հետո մշակել և նախարարի հաստատմանը ներկայացնել «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի 2007թ. մայիսի 14-ի թիվ 97-Ն հրամանով հաստատված հրահանգչական ցուցումներում փոփոխություն և լրացումների կատարելու մասին» հրամանի նախագիծ:

#### 10. Վերահսկողության ոլորտ:

**Արդյունքները:** Վերահսկողության ոլորտում հաշվետու տարվա ընթացքում կատարվել են էական բարեփոխումներ: Նախ, օրենսդրական համապատասխան փոփոխությունների արդյունքում արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության համակարգում լուծարվել է տեսչական ծառայությունը, որին էլ վերապահված էր այդ համակարգում համալիր վերահսկողություն իրականացնելու լիազորությունը: Այդ կառույցը, թեպետ օժտված էր հարաբերական ինքնուրույնությամբ, այնուամենայնիվ, այն, ըստ էության, շարունակում էր մնալ գերատեսչական վերահսկողություն իրականացնող մարմին՝ դրանից բխող բացասական հետևանքներով հանդերձ:

Հիշյալ ստորաբաժանման գործառույթները ևս փոխանցվել են արդարադատության նախարարության աշխատակազմի վերահսկողական վարչությանը: Վերջինիս կատարված աշխատանքները վիճակագրական առումով ունեն հետևյալ պատկերը՝

- ընթացք է տրվել թվով 1742 դիմումի և բողոքի, որոնց շրջանակներում անհրաժեշտությունից էլնելով 136 դիմում-բողոքներով քաղաքացիները հրավիրվել են ընդունելության և առավել մանրամասն քննարկվել են նրանց կողմից բարձրացված հարցերն ու այդ կապակցությամբ տրվել համապատասխան պարզաբանումներ,

- Հայաստանի Հանրապետության կողմից կնքված միջազգային պայմանագրերին համապատասխան ընթացք է տրվել թվով 500 դատական հանձնարարությունների և իրավական օգնություն ցույց տալու մասին միջնորդությունների, ինչպես նաև թվով 15 ապոստիլների,

- արդարադատության նախարարի կող-

մից դատավորների նկատմամբ հարուցված թվով վեց, ինչպես նաև նոտարի նկատմամբ հարուցված թվով մեկ կարգապահական վարույթներով տարվել են վարույթի իրականացման աշխատանքներ,

- արդարադատության նախարարության կողմից հաստատված աշխատակազմի վերահսկողության վարչության 2008թ. աշխատանքային ծրագրով Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության Արմավիրի մարզային բաժնում և Երևան քաղաքի Ավան և Նոր-Նորք բաժանմունքում, քրեակատարողական վարչության «Նուբարաշեն», «Վարդաշեն» և «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկներում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալության Կապանի, Մալաթիա-Մեբաստիա և Վարդենիսի բաժիններում կատարվել են իրականացված աշխատանքային գործունեության համալիր ուսումնասիրություններ, որոնց առնչությամբ կազմվել են համապատասխան եզրակացություններ,

- ուսումնասիրվել է թվով 53 կատարողական վարույթ և թվով 4 նոտարական գործ, որոնց վերաբերյալ կազմվել են համապատասխան տեղեկանքներ և ներկայացվել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի քննարկմանը,

- թվով 4 վարչական գործերով ներկայացվել են Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության շահերը՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարանում,

- արդարադատության նախարարի հանձնարարությամբ անց են կացվել ծառայողական քննություններ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության «Արթիկ» և «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկներում:

Հարկ է նկատել, որ արդարադատության նախարարության համակարգում գործող և հարաբերական ինքնուրույնություն ունեցող

կառույցներում, մասնավորապես քրեակատարողական վարչությունում և դատական ակտերի հարկադիր կատարման ծառայությունում, ծրագրային ստուգումներ իրականացնելը միանգամայն նոր գործելաոճ է և լիովին համապատասխանում է վերահսկողության սկզբունքներին:

Նախկինում հիշյալ վարչությունը հիմնականում զբաղված է եղել դատավորների և նրանց կողմից կայացված դատական ակտերի վերաբերյալ ստացված բողոքների քննարկմամբ, ինչը ակնհայտ հակասել է դատական իշխանության անկախությանը ու իշխանությունների տարանջատման սկզբունքին:

Վերահսկողական ծառայությունն, այսպիսով, ներկայումս գործում է բացառապես Սահմանադրության և գործող օրենսդրության ու միջազգային պայմանագրերով ամրագրված սկզբունքներին ու պահանջներին համապատասխան:

*Առկա խնդիրները և դրանց լուծման նախանշված ուղիները:*

Վերահսկողության ոլորտում հարկ է լուրջ ուշադրություն դարձնել ստուգումների համար կոնկրետ կառուցվածքային ստորաբաժանումներ ընտրելիս կոնկրետ չափանիշներով դեկլարվելու անհրաժեշտության վրա: Այս նկատառումով իմ կողմից հանձնարարվել է մշակել ստուգումներ ու ուսումնասիրություններ իրականացնելու մեթոդական ուղեցույց:

Վերանայման կարիք ունի նաև դատավորների նկատմամբ կարգապահական վարույթ իրականացնելու ընթացակարգը: Ըստ էության, վերահսկողական ծառայությունը սահմանափակվում է միայն պետական մարմիններից, փաստաբաններից, ինչպես նաև քաղաքացիներից ստացված դիմումներով, մինչդեռ, հարկ է ընդլայնել անհրաժեշտ տեղեկատվության շրջանակը և պարբերաբար էլեկտրոնային ցանցով ուսումնասիրել դատական ակտերը:

Այս խնդրի բնականոն լուծմանը, թերևս, խոչընդոտում է հիշյալ դատական ակտերի ոչ բավարար մատչելիությունը, սակայն դա ևս լուծելի խնդիր է. մասնավորապես «Դատաիրավական բարեփոխումներ» 2-րդ ծրագրով նա-

խատեսված է տեղեկատվական տերմինալների տեղադրում, որոնցում կզետեղվեն նաև ուժի մեջ մտած դատական ակտերը:

**11. Կադրային քաղաքականության և անձնակազմի կառավարման ոլորտ:**

*Արդյունքները:* Հաշվետու ժամանակահատվածում կադրային քաղաքականությունում արձանագրվել են որոշ էական տեղաշարժեր, մասնավորապես, վերջին շրջանում ծառայության են ընդունվել հիմնականում համապատասխան հմտություններ ունեցող և արդյունավետ աշխատանք ցուցաբերող անձինք: Այդ նպատակով անհրաժեշտ տեղեկատվություն տարածելու և ծառայության անցնելու համար մրցույթներին հնարավորինս լավագույն կադրեր ներգրավելու ուղղությամբ համապատասխան աշխատանքներ են իրականացվել Երևանի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետի և այլ առաջավոր բուհերում:

Արդարադատության նախարարության աշխատակազմի անձնական կառավարման բաժնի կողմից հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են հետևյալ աշխատանքները՝

- կազմվել և ստորագրման են ներկայացվել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի և աշխատակազմի դեկլարի հրամանների նախագծեր (նախարարի հատվածով՝ 283 հրաման, աշխատակազմի դեկլարի հատվածով՝ 405),

- իրականացվել է աշխատակազմի քաղաքացիական ծառայողների 1/3-ի ատեստավորում և 1/3 վերապատրաստում,

- կազմակերպվել և անցկացվել են մրցույթներ քաղաքացիական ծառայության առաջատար և կրտսեր, թվով 18 թափուր պաշտոնները զբաղեցնելու համար,

- իրականացվել է «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ատեստավորումը,

- իրականացվել է «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության թարգմանությունների կենտրոն» պե-

տական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար մրցույթը,

- կազմվել և համապատասխան մարմիններ են ուղարկվել անձնակազմի կառավարման բաժնի կողմից ներկայացվող եռամսյակային, կիսամյակային և տարեկան հաշվետվությունները (քաղաքացիական ծառայության խորհուրդ, աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, սոցիալական ապահովության հիմնադրամ),

- արդարադատության նախարարության աշխատակիցներին տրամադրվել է տեղեկանքներ՝ զբաղեցրած պաշտոնի և աշխատավարձի չափի վերաբերյալ (թվով 171 տեղեկանք),

- արդարադատության նախարարության աշխատակիցներին տրամադրվել է գործուղման վկայականներ (թվով 21 վկայական),

- արդարադատության նախարարության աշխատակիցներին տրամադրվել է 28 ծառայողական վկայական,

- քաղաքացիական ծառայության գլխավոր, առաջատար և կրտսեր 27 պաշտոնների անձնագրերում կատարվել են փոփոխություններ ու լրացումներ, և վերականգնվել է քաղաքացիական ծառայության առաջատար և կրտսեր պաշտոնների անձնագրերը,

- վերականգնվել է նախարարության աշխատողների անձնական գործերի 1-ին և 2-րդ բաժինները, ինչպես նաև պահպանված լուսապատճենների միջոցով վերականգնվել է 35 աշխատանքային գրքույկ,

- զինվորական կոմիսարիատների միջոցով վերականգնվել են նախարարության 28 աշխատողների զինվորական գրքույկները,

- կազմվել և քաղաքացիական ծառայության խորհուրդ է ուղարկվել նախարարության աշխատակազմի 2009թ. ատեստավորման և վերապատրաստման ենթակա գլխավոր, առաջատար և կրտսեր պաշտոններ զբաղեցնող քաղաքացիական ծառայողների ատեստավորման ցանկերը և վերապատրաստման հայտերը,

- իրականացվել է Հայաստանի Հանրապետության իշխանության մարմինների ղեկավար աշխատողների գույքի և եկամուտների

հայտարարագրերի հավաքագրման աշխատանքները (բարձրագույն և գլխավոր պաշտոններ զբաղեցնող քաղաքացիական ծառայողների հատվածով),

- իրականացվել է աշխատակազմի քաղաքացիական ծառայողների կիսամյակային հաշվետվությունների հավաքագրման աշխատանքները,

- իրականացվել է աշխատակազմ և քաղաքացիական ծառայության խորհուրդ նամակագրության վարման գործընթացը (թվով 104 գրություն),

- իրականացվել է քաղաքացիներից և պետական այլ մարմիններից ստացված գրությունների և դիմումների ուսումնասիրության և պատասխանների նախագծեր կազմելու աշխատանքներ (թվով՝ 32),

- ուսումնասիրվել և ներկայացվել է առաջարկություն մի շարք իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ («Հանրային ծառայության մասին», «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքներ և կառավարության որոշումների նախագծեր),

- բաժնի կողմից իրականացվել է նախարարության գաղտնի հատվածի փաստաթղթաշրջանառության վարման գործընթացը (166 մուտք, 149 ելք):

Այսպիսով, հիշյալ ստորաբաժանմանը հաջողվել է սեղմ ժամկետում վերականգնել նախարարության աշխատակիցների անձնական գործերի մեջ պահվող փաստաթղթերը, որոնք ամբողջովին ոչնչացվել էին հրդեհի հետևանքով և ապահովել կադրերի հետ տարվող բնականոն աշխատանքը:

*Առկա խնդիրները և դրանց լուծման նախանշված ուղիները:*

Կադրային քաղաքականության ոլորտում դեռևս իրեն զգացնել են տալիս մրցույթներին ակնհայտ թերահավատ մոտեցումները: Լավագույն շրջանավարտների հետ զրույցներից հետևում է, որ վերջիններս, որպես կանոն, չեն վստահում մրցույթային համակարգին և միայն այդ պատճառով են զերծ մնում դրան մասնակցելուց:

Նախատեսվել է ակտիվացնել աշխա-



տանքները բուհերի հետ, առավել գործնական դարձնել բարձր առաջադիմություն ունեցող ուսանողների հետ տարվող բացատրական աշխատանքները, վերջիններիս վերաբերյալ առավել հավաստի տվյալներ ստանալու նպատակով համակողմանիորեն ուսումնասիրել արդարադատության նախարարության համակարգում պրակտիկա անցած ուսանողների գործունեությունը:

**12. Նախարարությունում ստացված փաստաթղթերի շրջանառության, քաղաքացիների դիմումների և բողոքների քննարկման ոլորտ:**

*Արդյունքները:* Հաշվետու ժամանակահատվածում արդարադատության նախարարության աշխատակազմի քարտուղարություն է մուտքագրվել 12.400 փաստաթուղթ, 625 փոխման գործ, 1463 ուղղման գործ, 136 վերականգման գործ:

Նշված ժամանակահատվածում մուտքագրվել է 2423 դիմում-բողոք, որոնցից վերահսկողության վարչությանը հանձնվել է 1240-ը, հարկադիր կատարման ծառայությանը՝ 483-ը, ՔԿԱԳ գործակալությանը՝ 119-ը, իրավական ակտերի փորձաքննության վարչությանը՝ 65-ը, դատաիրավական բարեփոխումների վարչությանը՝ 4-ը, քրեակատարողական վարչությանը՝ 303-ը, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի հետ կապերի վարչությանը՝ 8-ը, նոտարիատի բաժնին՝ 145-ը, նախարարի խորհրդականներին՝ 8-ը, մամլո քարտուղարին՝ 7-ը, փորձագիտական կենտրոնին՝ 1-ը, անձնակազմի կառավարման բաժնին՝ 48-ը, միջազգային իրավական հարաբերությունների վարչությանը՝ 1-ը, քրեակատարողական տեսչությանը՝ 22-ը, այլ ստորաբաժանումների՝ 150-ը: 107 գրություններ վերահասցեագրվել են համապատասխան նախարարություններ և կազմակերպություններ:

Նախարարություն մուտք եղած և հսկողության վերցված պաշտոնական փաստաթղթերի թիվը կազմում է 732, որոնց պատասխանը տրվել է ժամանակին:

Ընդունարանի կողմից կատարվել է, նախարարություն բազմաթիվ հարցերով դիմած, ավելի քան 70.000 քաղաքացիների ընդունելիու-

թյուն:

2008թ. ընթացքում առաքվել է 13561 փաստաթուղթ: Իսկ տարվա վերջում կազմակերպվել է արխիվային փաստաթղթերի մշակման և ազգային արխիվ հանձնման գործընթացը:

Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատանքային այցերի ժամանակ բնակչության կողմից բարձրացված հարցերի, դիմումների կտրվածքով 2007թ. ապրիլի 17-ից 2008թ. մարտի 3-ը ընկած ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն ստացվել է 294 դիմում: Դիմումներից բացասական լուծում են ստացել 2-ը, վերահասցեագրվել են 23-ը, պարզաբանումներ են տրվել 210-ի առնչությամբ, իսկ 59-ով դիմումատուները ստացել են դրական պատասխաններ:

*Քարտուղարության ընթացիկ աշխատանքների կարգավորում:*

Աշխատակազմում ստացված ամբողջ պաշտոնական և ոչ պաշտոնական թղթակցությունը ընդունվել և գրանցվել է աշխատակազմի քարտուղարությունում:

Հայաստանի Հանրապետության Նախագահից, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովից ստացված նյութերն ու «Շտապ» թղթակցությունն անհապաղ գրանցվել ու հանձնվել են զեկուցման: Մյուս թղթակցությունը հասցեատերերին է տրվել կամ հաղորդվել լոկալ ցանցով աշխատանքային 1 օրվա ընթացքում: Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարին հասցեագրված ու մուտքագրված գրությունները, նամակները և մյուս փաստաթղթերը գրանցումից հետո ուղարկվել են աշխատակազմի ղեկավարին:

Քարտուղարության արխիվ են հանձնվել նախորդ տարվա մշտական ու ժամանակավոր պահպանման ենթակա գործավարության բոլոր փաստաթղթերը: Քաղաքացիների ընդունելության, նրանց դիմումների, բողոքների և առաջարկությունների քննարկումների մասին եռամսյակային հաշվետվություն է կազմվել և ներկայացվել Հայաստանի Հանրապետության կառավարություն:

Քաղաքացիների կողմից ստացված առաջարկությունները, դիմումներն ու բողոքները ստացման օրը գրանցվել են քարտուղարությունում, ստացված առաջարկությունները, դիմումներն ու բողոքները քարտուղարության պետի կողմից նախնական քննարկումից հետո ներկայացվել են աշխատակազմի ղեկավարին կամ նրա տեղակալին: Որոշ առաջարկություններ, դիմումներն ու բողոքները քարտուղարության կողմից ուղարկվել են այն պետական մարմիններ, հիմնարկներ ու կազմակերպություններ, որոնց անմիջական իրավասությանն է պատկանում տվյալ հարցի լուծումը, կամ որոնց անմիջական ենթակայությամբ է գործում այն կազմակերպությունը կամ պաշտոնատար անձը, որի գործողությունը բողոքարկվում է՝ դիմողին ուղարկելով դրա մասին ծանուցում:

*Առկա խնդիրները և դրանց լուծման նախանշված ուղիները:* Հիշյալ ոլորտի ուսումնասիրությունը վկայում է այն մասին, որ ընդհանուր առմամբ ոլորտի համար պատասխանատու աշխատակիցները իրենց ծառայողական պարտականություններն իրականացնում են բարեխղճորեն և պատասխանատվության զգացումով: Սակայն ակնհայտ է, որ իրենց չեն արդարացնում թղթարարության այն մեթոդները, որոնք, ըստ էության, գործում են դեռևս խորհրդային վարչարարության ժամանակներից: Նկատվում է այդ ոլորտում արխիվային գործերի և փաստաթղթերի փորձագիտական արժեքավորման և գիտատեխնիկական մշակման աշխատանքների կազմակերպման, փաստաթղթերի շարժի, դրանց քննարկման արդյունքների գնահատման ոլորտում էլեկտրոնային միջոցների ներդրման անհրաժեշտությունը:

### **13. Ֆինանսատնտեսական և հաշվապահական հաշվառման ոլորտ:**

*Արդյունքները:* Հաշվետու տարվա ընթացքում այս ոլորտում աշխատանքներն աննախադեպ ծավալուն են եղել, ինչը պայմանավորված է եղել հրդեհի բացասական հետևանքները հնարավորինս արագ մեղմելու և սեղմ ժամկետում աշխատակիցների համար նվազագույն աշխատանքային պայմաններ ստեղծելու անհրաժեշտությամբ: Այս խնդիրը հաջողվել է լուծել, մասնավորապես, արդարադատության

նախարարության ֆինանսատնտեսական բաժնի կողմից անհրաժեշտ օպերատիվությամբ նախապատրաստվել է նախարարության կենտրոնական ապարատի նոր վարչական շենքի վերանորոգման համար նախագծահաշվային փաստաթղթերը: Նույն կերպ կազմակերպվել են նոր մասնաշենքի համար անհրաժեշտ գույքի և կահավորանքի ձեռքբերման աշխատանքները:

Այս ոլորտում ստուգումներ են իրականացվել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության բյուջետային վերահսկողության վարչության կողմից, որի արդյունքները ևս վկայում են այն մասին, որ ոլորտի պատասխանատուները պատշաճ կարգով են իրականացնում իրենց պարտականությունները:

Արդյունավետ աշխատանքներ են կատարել նաև արդարադատության նախարարության շահագործման բաժնի աշխատակիցները: Բնորոշ է այն, որ վերջիններս ոչ միայն կարողացել են սեղմ ժամկետում ապահովել համակարգչային տեխնիկայի ձեռքբերումն ու դրանց շահագործումը, այլև կարողացել են հրդեհից փրկել մեծ քանակությամբ համակարգչային և այլ տեխնիկա, գույքագրել այն և անմիջապես ապահովել դրանց շահագործումը նոր պայմաններում:

Հիշյալ ստորաբաժանումը հաջողությամբ է իրականացրել համակարգչային միասնական ցանցի շահագործման աշխատանքները:

Հաշվապահական հաշվառման բաժնի կողմից 2008թ. կատարվել են հետևյալ աշխատանքները՝

- վերականգնվել է 2008թ. փետրվարի 9-ին նախարարության շենքի հրդեհի պատճառով այրված փաստաթղթերի մի մասը, մասնավորապես աշխատողների աշխատավարձերի, բանկային հաշիվների վերաբերյալ տվյալները, մատակարար կազմակերպությունների հետ ճշտվել են դեբիտոր-կրեդիտորական պարտքերը, վերականգնվել են 2007 թվականի թիվ 1 գանձապետական բաժանմունքում եղած հաշվարկային հաշիվների մուտքերի և ելքերի փաստաթղթերը,

- «Հայաստանի Հանրապետության 2008 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան՝ կազմվել, ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության գանձապետական բաժանմունք են ներկայացվել 2008թ. պահպանման ծախսերի նախահաշիվները ըստ ծրագրերի, ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցերը, կնքված պայմանագրերի քաղվածքները, վճարման փոխանցագրերը և հավաստագրերը,

- սահմանված կարգով և ժամկետներում կազմվել, ամփոփվել և Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն են ներկայացվել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2007թ. տարեկան և 2008թ. եռամսյակային հաշվապահական հաշվեկշիռները և հաշվետվությունները բոլոր ծրագրերի գծով,

- ամփոփվել և ֆինանսների նախարարություն են ներկայացվել համակարգում գտնվող պետական ոչ առևտրային կազմակերպությունների հաշվեկշիռները և հաշվետվությունները՝ 2007թ. 4-րդ եռամսյակի և 2008թ. 1-ից 3-րդ եռամսյակների համար,

- կազմվել, ամփոփվել և համապատասխան մարմիններին են ներկայացվել եկամտահարկի ամփոփ հաշվարկները, պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների հաշվարկման, կատարված ծախսերի և վճարումների մասին հաշվետվությունները, վիճակագրական հաշվետվությունները՝ 2007թ. 4-րդ և 2008թ. 1-ին, 2-րդ, 3-րդ եռամսյակների համար,

- «Հայաստանի Հանրապետության 2008 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով արդարադատության նախարարության համակարգի պահպանման ծախսերի համար նախատեսված գումարներին համապատասխան Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն են ներկայացվել բյուջեից վճարումների իրականացման հայտերը (բյուջետային և միջգանձապետական փոխանցագրերը),

- Հայաստանի Հանրապետության վար-

չապետի 2008թ. հուլիսի 4-ի թիվ 441-Ա որոշման համաձայն ֆինանսների նախարարություն է ներկայացվել արդարադատության նախարարության համակարգի 2009թ. բյուջետային ֆինանսավորման հայտը,

- կազմվել, ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության հաստատման են ներկայացվել արտաբյուջետային միջոցների գոյացման և տնօրինման նախահաշիվները և հաշվետվությունները,

- հաստատված նորմատիվներին համապատասխան համայնքների ենթակայությանը հանձնված ՔԿԱԳ բաժիններին փոխանցվել են ֆինանսավորման գումարներ, ամփոփվել են համայնքների կողմից ներկայացված հաշվետվությունները,

- իրականացվել է ՔԿԱԳ վկայականների և բլանկների, նյութական միջոցների և տրնտեսական ապրանքների, հիմնական միջոցների և փոքրարժեք և արագամաշ առարկաների անալիտիկ և սինթետիկ հաշվառումը, դրանց հետագա շարժի հետ կապված գործառնությունների արտացոլումը, դեբիտոր-կրեդիտոր կազմակերպությունների հետ անհրաժեշտության դեպքում կատարվել են փոխադարձ հաշվարկների ստուգում և կազմվել փոխադարձ ակտեր:

*Առկա խնդիրները և դրանց լուծման նախանշված ուղիները:*

Այս ոլորտում խնդիրները համընդհանուր են և հիմնականում կապված են գնումների մասին օրենսդրությունում տեղ գտած թերությունների ու դրանց կիրառման գործնական ընթացակարգերի հետ: Ուստի, նկատի ունենալով, որ Հայաստանի Հանրապետության վարչապետի կողմից արդեն իսկ տրվել են համապատասխան հանձնարարականներ՝ կապված այդ ոլորտի բարելավմանն ուղղված միջոցառումներ իրականացնելու հետ, արդարադատության նախարարությունը կգործի այդ շրջանակներում: Մասնավորապես, ներկայումս քննարկվում է ֆինանսների նախարարության կողմից ներկայացված գնումների մասին նոր հայեցակարգը:

**14. «Դատաիրավական բարեփոխումներ» 2-րդ ծրագրի կառավարման ոլորտ:**

*Արդյունքները:* Հաշվետու ժամանակահատվածում արդարադատության նախարարության «Դատախիրավական բարեփոխումներ ԾԻԳ» ՊՀ-ի կողմից շարունակվել է Համաշխարհային բանկի կողմից հատկացված թիվ 4265 ֆինանսավորման համաձայնագրի և թիվ TF 057514 ճապոնական դրամաշնորհի հատկացման համաձայնագրի միջոցներով 2-րդ դատախիրավական բարեփոխումների ծրագրի իրականացումը: Ավարտվել է Հոլանդիայի կառավարության կողմից «Դատախիրավական բարեփոխումներ» 2-րդ ծրագրի իրականացման նպատակով լրացուցիչ 3 մլն եվրոյի չափով դրամաշնորհային միջոցներ հատկացնելու վերաբերյալ համաձայնագրի կնքումը և դրա վավերացումը, որով առաջին մասնաբաժինը հատկացվել է 2008թ. հուլիս ամսին:

Հաշվետու ժամանակահատվածում նրշված ծրագրի շրջանակներում կատարված աշխատանքներն ենթարկվել են համալիր ստուգման Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատի կողմից: Ստուգման արդյունքները ևս վկայում են, որ այդ ոլորտում չկան էական խախտումներ, իսկ ծրագրային առաջադրանքները գերակատարվել են: Մասնավորապես, վերահսկիչ պալատի կողմից հիշյալ ծրագիրն առանձնացվել է հիմնականում դրական ցուցանիշներով, իսկ առանձին շինարարական կազմակերպությունների կողմից թույլ տված ընթացակարգային խախտումները սեղմ ժամկետում վերացվել են: «Դատախիրավական բարեփոխումներ» 2-րդ վարկային ծրագրի ֆինանսական ցուցանիշների ամփոփումը 2008թ. արդյունքներով ունի հետևյալ պատկերը. 2008թ. համար հաստատված ծրագրի բյուջեով ԱՄՆ դոլարի հաշվարկային արժույթով նախատեսված է եղել իրացնել ընդհանուր առմամբ 6.849.7 ԱՄՆ դոլարի (2.227.248.6 դրամին համարժեք) չափով ծախսեր: Ֆինանսական տարվա արդյունքներով փաստացի կատարվել է 7.042.2 ԱՄՆ դոլարի (2.148.459.7 դրամին համարժեք) չափով ծախսեր, որի արդյունքում բոլոր ծրագրերի գծով կատարողականը կազմել է 102.8% ԱՄՆ դոլարի հաշվարկային արժույթով կամ 96.5% Հայաստանի Հանրապետության դրամի հաշվարկային արժույթով:

Ընդհանուր առմամբ ծրագիրը բաղկացած է վեց հիմնական բաղադրիչներից՝

- դատական համակարգի կառավարման ու վարչարարության ուժեղացում,
- դատարանների շենքերի վերականգնում,
- դատավորների վերապատրաստման դպրոց,
- դատական ակտերի հարկադիր կատարման բարելավում,
- արբիտրաժի ծառայությունների ուժեղացում,
- իրավական տեղեկատվության մատչելիության ընդարձակում և հանրային իրազեկության բարձրացում:

2008թ. ընթացքում բաղադրիչ 3-ով և բաղադրիչ 5-ով իրականացման ենթակա աշխատանքներ չեն ծրագրավորվել: Մնացած չորս բաղադրիչներով 2008թ. ընթացքում, ծրագրով հիմնականում կատարվել են դատական համակարգի կառավարման ու վարչարարության ուժեղացմանն ուղղված, ինչպես նաև դատական շենքերի ենթակառուցվածքների ամրապլնմանն ուղղված մի շարք միջոցառումներ: Մասնավորապես, ծրագրի շրջանակներում կատարվել են հետևյալ աշխատանքները՝

- դատական համակարգի կառավարման, գործերի հոսքերի ավտոմատացման նպատակով համակարգչային ծրագրի մշակման ուղղությամբ՝ «CAST» աշխատանքային անվանումով ծրագիրը բոլոր դատարաններում տեղադրելու համար նախորդ տարվա ընթացքում ձեռք բերված համակարգչային տեխնիկական ամբողջությամբ տեղադրվել է՝ ապահովելով տվյալ ծրագրի ներդրումը և դրա կենտրոնացված, ամբողջական շահագործումը բոլոր դատարաններում:

- դատարանների ավտոմատացման շրջանակներում լրացուցիչ ներկրվել է նաև համակարգչային և կազմտեխնիկայի խմբաքանակ, ինչը հնարավորություն է տվել վերակառուցված և նոր կառուցված բոլոր դատարանների դահլիճներում ևս տեղադրել դատական նիստերի «ՄՐՄ-Ֆեմիդա» աուդիո ձայնագրման համակարգեր,

- 2008թ. մայիս ամսին ավարտվել և հոկ-

տեմբեր ամսից շահագործման է հանձնվել Երևանի Էրեբունի և Նուբարաշեն ընդհանուր իրավասության դատարանի շենքը, ինչով իսկ ավարտվեցին Երևան քաղաքում տեղակայված բոլոր դատարանների շենքերի ենթակառուցվածքների վերականգնմանը ուղղված միջոցառումները,

- միաժամանակ, ծրագրի շրջանակներում նույն քաղաքիչով իրականացվել են մի շարք տեղական և միջազգային մրցույթներ, որոնց արդյունքում կնքված պայմանագրերով իրականացվել են կառուցման և վերակառուցման ենթակա շենքերի նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքները, այդ թվում՝ Գորիս, Բերդ, Վայք, Մարալիկ, Տաշիր, Ստեփանավան, Մասիս, Եղեգնաձոր, Դիլիջան, Սպիտակ, Մեղրի և Չարենցավան քաղաքներում տեղակայված դատարանների շենքերի համար,

- 2008թ. ընթացքում ծրագրի շրջանակներում մեկնարկել են մի շարք դատարանների վերակառուցման և կառուցման աշխատանքները, այդ թվում՝ Գորիս, Վայք, Մարալիկ, Տաշիր, Ստեփանավան, Մասիս քաղաքներում տեղակայված դատարանների շենքերի համար,

- Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի համաձայն՝ 2008թ. գործող վեց մասնագիտացված դատարանների համար գնվել են համակարգչային սարքավորումներ,

- Երևանի քաղաքացիական և Երևանի քրեական դատարանի համար գնվել և տեղադրվել է դատական դահլիճների և աշխատասենյակների կահավորանք,

- Երևանի քաղաքացիական և Երևանի քրեական դատարանի շենքային համալիրում և Երևանի Էրեբունի և Նուբարաշեն ընդհանուր իրավասության դատարանի շենքի համար գրնվել և տեղադրվել են մուտքերի անվտանգության և հսկման համակարգեր,

- Երևանի Էրեբունի և Նուբարաշեն ընդհանուր իրավասության դատարանի շենքի համար գնվել և տեղադրվել են դատական դահլիճների և աշխատասենյակների կահավորանք, անհրաժեշտ քանակի համակարգչային սարքավորումներ,

- դատական ակտերի հարկադիր կա-

տարման ծառայության կարիքների համար մեծ խմբաքանակով գնվել են համակարգչային սարքավորումներ, ինչը հնարավորություն է տվել գրեթե ամբողջությամբ ապահովել ծառայության կարիքները և պատշաճ շահագործել ծրագրի շրջանակներում նախկինում մշակված գործերի կառավարման կենտրոնացված համակարգը,

- «ԱՐԼԻՍ» իրավական տեղեկատվական համակարգը շահագործող «Պաշտոնական տեղեկագիր» ՓԲԸ կարիքների համար գնվել են անհրաժեշտ համալրող համակարգչային սարքեր՝ ծրագրի շահագործումը բնականոն ապահովելու նպատակով,

- 2008թ. հոկտեմբեր ամսից իրականացվում են «ԱՐԼԻՍ» իրավական տեղեկատվական համակարգի ծրագրային ապահովման բարելավման և արդիականացման աշխատանքները,

- 2008թ. սեպտեմբեր ամսից սկսվել է դատական արխիվների արդիականացման, հետազոտության իրականացման նպատակով խորհրդատվական ծառայությունների մատուցումը,

- 2008թ. փետրվար-մարտ ամիսներին իրականացվել է արդարադատության նախարարության և սահմանադրական դատարանի կարիքների համար ձեռք բերված մեծ խմբաքանակի համակարգչային սարքավորումների մատակարարումը,

- 2008թ. ընթացքում ծրագիրը համաֆինանսավորել է վճարել դատարանի ստեղծման տասնամյակի և Երևանում կազմակերպված դատավորների միջազգային միության տարեկան համաժողովի կազմակերպման միջոցառումների ծրագրերը,

- 2008թ. ծրագրի շրջանակներում իրականացվել է Հայաստանի Հանրապետությունում մասնավոր հարկադիր կատարման ծառայության ներդրման նպատակով ծրագրի իրագործելիության ուսումնասիրությունը, որի վերաբերյալ խորհրդատուների կազմած ամփոփ հաշվետվությունը ուսումնասիրության է ներկայացվել շահառուներին,

- Հայաստանում մասնավոր հարկադիր կատարման ծառայության ներդրման ուսում-



նասիրման ծրագրի շրջանակներում իրականացվել է նաև տվյալ խնդրով առնչություն ունեցող միջգերատեսչական խմբի ուսուցողական այցելություն Արևելյան Եվրոպայի մի շարք երկրներ:

*Առկա խնդիրները և դրանց լուծման նախանշված ուղիները:*

Ծրագրի իրականացման ընթացքում հարկ եղավ էական վերանայումներ կատարել, քանզի դատաիրավական բարեփոխումների շրջանակներում կատարված փոփոխությունները թելադրում են դատարանների նոր համակարգ: Ըստ էության, այդ խնդիրն արդեն իսկ լուծվել է: Մասնավորապես, հաշվի առնելով կատարված և սպասվելիք փոփոխությունները, համաշխարհային բանկի հետ քննարկումների արդյունքներով մշակվել են համապատասխան տարբերակներ, որոնք կիրառման մեջ կդրվեն՝ կախված կատարվելիք փոփոխությունների բնույթից ու ծավալից:

Անհարկի ու անհիմն ծախսերի տեղիք կարող էր տալ դատական և դատախազական համակարգերի համար առանձին դպրոցների շինարարությունը: Այս առումով ծրագիրը ևս վերանայվել է, քանի որ Հայաստանի Հանրապետության վարչապետի հանձնարարությամբ ներկայումս արդարադատության նախարարությունում մշակվում է այդ ուսումնական հաստատությունների միավորմանն ուղղված օրենսդրական ակտի նախագիծ:

**15. Նախարարության համակարգում գործող կազմակերպությունների («Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական ինստիտուտ» ՊՈԱԿ, «Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ, «Պաշտոնական տեղեկագիր» ՓԲԸ, «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության թարգմանությունների կենտրոն» ՊՈԱԿ) կառավարման ոլորտ:**

Արդյունքները՝ ըստ կոնկրետ կազմակերպությունների: «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական ինստիտուտ» ՊՈԱԿ-ը գործել է արդարադատության նախարարի 2008թ. փետրվարի 1-ի թիվ 28-Ա հրամանով

հաստատված ծրագրով: Վերջինս ապահովել է ԴԱՀԿ ծառայության առաջատար խմբի պաշտոններ զբաղեցնող 80 ծառայողի, 420 քրեակատարողական ծառայողի և 136 քաղաքացիական ծառայողի վերապատրաստում:

Այս ինստիտուտի ջանքերով հաշվետու ժամանակահատվածում առաջին անգամ լույս տեսավ և ներկայումս կանոնավոր լույս է տեսնում «Արդարադատություն» գիտագործնական հանդեսը, որում լույս են տեսնում ոչ միայն նախարարության աշխատանքներին նվիրված, այլև՝ իրավունքի արդիական հարցադրումներին նվիրված նյութեր:

«Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի գործունեությունը հաշվետու տարում ուղեկցվեց աննախադեպ բարդություններով: Վարչական շենքի հրդեհը, հատկապես մեծ վնաս պատճառեց այս ՊՈԱԿ-ին, քանի որ վնասված փորձագիտական տեխնիկական այլևս պիտանի չէր շահագործման համար: Այս առումով, կարծում են, ՊՈԱԿ-ի ղեկավարությանը հաջողվել է դրսևորել կազմակերպական անհրաժեշտ ունակություններ և ապահովել ոչ միայն կազմակերպության տեղափոխումը ժամանակավոր տարածք (կազմակերպությունը ներկայումս գործում է վարձակալած տարածքում), այլև պահպանել, վերանորոգել, իսկ հետագայում նաև Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումներով հատկացված (2008թ. հոկտեմբերի 2-ի թիվ 1102-Ա որոշմամբ հատկացվել է 30,5 մլն դրամ) տեխնիկայով ապահովել փորձաքննությունների բնականոն ընթացքը:

Ավելին, ՊՈԱԿ-ին հաջողվեց իրականացնել ավելի մեծ ծավալի աշխատանք, քան նախորդ տարվա ընթացքում, ինչի առնչությամբ հարկ եղավ պահուստային ֆոնդից 12,3 մլն դրամի չափով լրացուցիչ գումար հատկացնել:

ՊՈԱԿ-ը գործել է օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան, երբևիցե փորձագիտական եզրակացությունների առնչությամբ խնդիրներ չեն առաջացել, դրժգոհություններ չեն ներկայացվել, կարգապահական պատասխանատվության հիմքեր չեն եղել:



ՊՈԱԿ մուտք է եղել 5307 հայտ, որոնցից 2009թ. է տեղափոխվել միայն 273-ը, իսկ նախորդ տարվանից փոխանցվել է դարձյալ 273-ը: Համեմատության համար նկատենք, որ նախորդ տարվա ընթացքում մուտք է եղել 4563 հայտ: Հիշյալ 5307 հայտից 5184-ն ավարտվել է փորձաքննության կատարմամբ, իսկ մյուսները վերադարձվել են՝ կատարման անհնարինության հիմքով: Ընդունված հայտերով կատարվել է 15 տեսակի և 29 ենթատեսակի, թվով 7651 փորձաքննություն: Կենտրոնի կողմից ուսումնասիրվել է 27780 միավոր տրանսպորտային միջոց:

Տրված փորձագիտական եզրակացությունների առնչությամբ փորձագետները 128 գործով ներկայացել են տարբեր դատական նիստերի և տվել պարզաբանումներ, 237 անգամ գործողվել են Հանրապետության տարբեր մարզեր՝ տեղում փորձագիտական գործողություններ իրականացնելու համար:

ՊՈԱԿ-ի գործունեությունում մեծ տեղ է հատկացվում նաև հանցագործությունների կանխարգելման խնդրին: Մասնավորապես, փորձաքննությունների արդյունքներով Կենտրոնն իրավասու մարմիններին ներկայացրել է իրավախախտումների կանխարգելման 80 առաջարկություն:

Այս ոլորտում խնդիրները հիմնականում երկու բնույթի են: Նախ, հարկ է ապահովել փորձագետների վերապատրաստման բնականոն գործընթացը, հատկապես նորագույն տեխնիկայի և գիտական ձեռքբերումների առնչությամբ: Կարևոր է նաև ժամանակակից պահանջներին համապատասխան տեխնիկական սարքավորումների ձեռքբերումը: Կենտրոնն իր նախաձեռնությամբ որոշ չափով լուծում է հիշյալ խնդիրը, սակայն, հնարավորության դեպքում նպատակահարմար կլինի այդ հարցում ապահովել համարժեք պետական աջակցություն:

Ինչ վերաբերում է տարածքին, ապա դա ժամանակավոր է, ուստի այն նպատակահարմար չէ դարձնել քննարկման նյութ:

«Պաշտոնական տեղեկագիր» ՓԲԸ-ի գործունեությունն իրականացվել է օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապա-

տասխան, ձախողումներ կամ ձգձգումներ չեն արձանագրվել: Բնորոշ է այն, որ 2008թ. դեկտեմբերի 30-ին ընկերությանը հանձնված օրենսդրական փաթեթը հնարավոր եղավ նույն օրը տպագրել և բաշխել:

2008թ. հրատարակվել է 76 «Պաշտոնական տեղեկագիր», 44 «Հայաստանի Հանրապետության գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր», 9 «Երևանի թաղային համայնքների տեղեկագիր», 4 «Քաղաքային և գյուղական համայնքների ակտերի ժողովածու» և ռուսերեն թարգմանությամբ՝ 3 տեղեկագիր:

«Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության թարգմանությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի համար հաշվետու տարին եղել է իր գործունեության առաջին տարին: Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այդ նորաստեղծ կազմակերպությանը հաջողվել է հնարավորինս արագ մտնել աշխատանքային հուն և ապահովել ծրագրային առաջադրանքների կատարումը:

Նշված կենտրոնը իր աշխատանքներն իրականացրել է հետևյալ ուղղություններով՝ ՀՍ ԵՆ 15038 «Թարգմանչական ծառայություններ, ծառայության պահանջներ» ստանդարտի գործնական կիրառում, թարգմանչական աշխատանքներին օժանդակող «Տրադուս» համակարգչային ծրագրի ներդրում, ինտերակտիվ քննարկումների և վերապատրաստման դասընթացների իրականացում և թարգմանությունների ոճաբանական ուղեցույցի մշակում:

Կենտրոնի կողմից հիմնականում իրականացվել են հետևյալ աշխատանքները՝

- նախատեսված 6215 էջի փոխարեն թարգմանվել է 6255 էջ իրավական փաստաթուղթ,

- «Տրադուս» ծրագրի հիշողությունների պահոցում մուտքագրվել է 62330 թարգմանչական միավոր,

- ներդրվել է երկլեզու (հայերեն, անգլերեն) ինտերնետային կայք, որի այցելուների թիվը հասել է 18.624-ի:

Այս ոլորտում կառավարման խնդիրները, թերևս, մասամբ ֆինանսական են, մասամբ՝ կազմակերպչական: Նախ, հատկացված միջոցների շրջանակներում հնարավոր չէ ապա-

հովել անհրաժեշտ ծավալ, բացի այդ, որակյալ թարգմանիչները նախընտրում են բարձր աշխատավարձով աշխատանք, մասնավաճ, որ վերջիններիս ծառայողական կարիերան գրեթե չի հետաքրքրում, ինչով էլ պայմանավորված է թափուր տեղերի առկայությունը:

Կազմակերպչական խնդիրները լուծելի են. մասնավորապես առաջին տարված գործունեության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նախապատվությունը պետք է տալ իրավաբանի մասնագիտությամբ թարգմանիչներին, իսկ կենտրոնում եղած իրավաբանները անհամաչափ ծանրաբեռնված են:

### **16. Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի կառավարման ոլորտ:**

*Արդյունքները:* Հաշվի առնելով արդարադատության հարցադրումների առնչությամբ հնարավորինս սպառնիչ ու միաժամանակ օպերատիվ տեղեկատվություն ստանալու լրատվության միջոցների կողմից ներկայացվող անհամեմատ մեծ պահանջարկը՝ նախարարությունում ամբողջովին վերակազմվել է էլեկտրոնային կայքը: Գրանում անհապաղ գետեղվում է տեղեկատվություն հասարակությանը հուզող, արդարադատության ոլորտին առնչվող յուրաքանչյուր հարցի վերաբերյալ: Կայքը առաջմ երկլեզու է, սակայն, 2009թ. փետրվարի 1-ից այն կլինի եռալեզու: Բնորոշ է նաև այն, որ կայք էջի միջոցով ապահովվում է նաև նախարարության առանձին կառույցների գործունեության գնահատումը հասարակայնության կողմից: Այն, թերևս, լավագույն միջոցն է նախարարության կողմից մշակված և շրջանառության մեջ դրված օրինագծերի հանրային քննարկման և, ընդհանրապես, նախարարության նախաձեռնությունների առնչությամբ հասարակական կարծիքի ուսումնասիրության առումով:

Այս ոլորտի առանձնահատկությունը կայանում է նրանում, որ հարկ է լինում պարբերաբար արձագանքել լրատվության միջոցների կողմից տարածված տեղեկատվությանը: Յավոք, արդարադատության հարցադրումների արհեստական քաղաքականացումը հանգեցրել է նրան, որ ընդդիմադիր քաղաքական ուժերին սպասարկող լրատվության միջոցները անթաքույց ու հետևողականորեն փորձում են տա-

րածել ակնհայտ խեղաթյուրված ու սուկ կոնկրետ քաղաքական նկրտումներով թելադրված տեղեկատվություն: Այդ առումով հատկապես բնորոշ էր հաշվետու տարվա ընթացքում այդպիսի հրապարակումների բնույթը: Գրեթե չի եղել մի օր, որ այս կամ այն կերպ հիշյալ հարցադրումների առնչությամբ նշված լրատվության միջոցները զերծ մնային կեղծ ու չստուգված տեղեկատվություն տարածելուց:

Նախարարության լրատվական ծառայությունը հուսալի համագործակցություն է իրականացրել նաև միջազգային լրատվության միջոցների հետ: Բնորոշ է նաև այն, որ հիշյալ լրատվության միջոցները պարբերաբար իրենց գոհունակությունն են արտահայտել ստացված տեղեկատվության որակի առնչությամբ և պատրաստակամորեն վերանայել են այն նյութերը, որոնք մասամբ չեն համապատասխանել իրականությանը:

Կարծում են, որ նախարարության լրատվության աշխատակիցներին հաջողվել է պատվախնդրությամբ կատարել իրենց աշխատանքը և հասարակությանը տրամադրել հիրավի անաչառ ու հիմնավորված տեղեկատվություն:

Նախարարության տեղեկատվական և հասարակայնության հետ կապերի բաժինը պարբերաբար իրականացրել է առավել տարածված հայալեզու 20 և ռուսալեզու 6 տպագիր մամուլի ամբողջական մոնիտորինգ:

Բաժնի և նախարարի մամուլ քարտուղարի կողմից կազմակերպվել և անցկացվել են նախարարի, նրա տեղակալների և առանձին գերատեսչությունների ղեկավարների թվով չորս մամուլ ասուլիս, արդարադատության ոլորտին առնչվող հարցադրումներով՝ թվով 31 հեռուստահաղորդում և ռադիոհաղորդում: Նախարարի կողմից տարբեր լրատվամիջոցների տրվել է 27 հարցազրույց:

Լրատվության միջոցների մոնիտորինգի արդյունքները վկայում են այն մասին, որ երբևիցե չի արձանագրվել լրատվության միջոցների հարցերն անպատասխան թողնելու կամ անհարկի ուշացումով արձագանքելու դեպք:

*Առկա խնդիրները և դրանց լուծման նախանշված ուղիները:* Ինչպես արդեն նշվեց, հիմ-

նախնդիրներից մեկը արդարադատության ոլորտին առնչվող տեղեկատվությունը պարբերաբար խեղաթյուրելն է, ինչը պայմանավորված է ոչ թե համարժեք տեղեկատվության բացակայությամբ, այլ՝ զուտ քաղաքական անընդունելի նկատառումներով՝ նպատակասլաց կերպով հասարակական թյուր կարծիք ձևավորելու և այն որոշակի քաղաքական նպատակներով, հարկ եղած դեպքում, օգտագործելու միտումով:

Խնդիրն այն է, որ նախարարության լրատվական ծառայությունները հաճախ հարկադրված են լինում անհարկի մեծ ժամանակ տրամադրել ակնհայտ կեղծ տեղեկատվություն հերքելու վրա: Ընդ որում, հաճախ դա հնարավոր չի լինում արագ իրականացնել, քանի որ, ի տարբերություն հիշյալ լրատվամիջոցների, որոնք նյութ տարածելիս բացարձակապես հարկ չեն համարում դրանց իսկությունը ստուգել, նախարարության համապատասխան ծառայությունները հերքումներ պատրաստում են միայն համապատասխան ստուգումների արդյունքում:

Ինչև է, կարծում եմ, հարկ կլինի հետագայում ձեռնարկել հետևյալ միջոցները՝

- հնարավորինս ներդնել ստուգումների այնպիսի ընթացակարգեր, որոնք կպահանջեն առավել սեղմ ժամկետներ,

- նախարարության գործունեության, հատկապես վերահսկողական բնույթի միջոցառումներին, տարաբնույթ քննություններին ու որակավորման ստուգումներին ներգրավել հասարակայնության ներկայացուցիչների: Կարծում եմ, որ իրեն կարդարացնի մաս նախարարության կոլեգիայում հասարակայնության ներկայացուցիչների ներգրավումը,

- հասարակական մեծ հնչեղություն ունեցող յուրաքանչյուր կեղծ տեղեկատվության առնչությամբ կազմակերպել հանրային քննարկումներ,

- որոշ էական հարցերով լրատվության միջոցների՝ իրավական թեմաներով լուսաբանումներ իրականացնող աշխատակիցների համար կազմակերպել սեմինար պարապմունքներ:

#### **17. Եզրափակիչ դրույթներ:**

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ

արձանագրված հիմնախնդիրները և թերությունները ունեն ոչ միայն ընդհանուր, այլև՝ առանձնահատուկ բնույթ, իմ կողմից հաստատվել է ժամանակացույց, ըստ որի նախատեսվում է նախարարության կոլեգիայում կամ օպերատիվ խորհրդակցությունում (տվյալ դեպքում դա կախված է ոլորտի նշանակությունից և առկա հիմնախնդիրների ծավալից ու բնույթից) լսել համապատասխան ոլորտի համար պատասխանատու ստորաբաժանումների ղեկավարների հաշվետվությունները: Միաժամանակ, նշվում է, որ վերը հիշատակված կոնկրետ թերությունները պարբերաբար արդեն իսկ քննարկվել են նախարարի կամ նախարարի համապատասխան տեղակալի մոտ կայացած օպերատիվ խորհրդակցություններում:

*Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարար* **Գ.Դանիելյան**

**15.01.2009թ.**

## ՀԱՍԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԿԹՀԾ 5-ՐԴ ՓՈՒԼԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ

Հարավային Կովկասում թմրամիջոցների հակազդման ծրագրի (ՀԿԹՀԾ) 5-րդ փուլի հիմնական նպատակն է նպաստել Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի կառավարություններին ներդնել թմրամիջոցների հակազդման ոլորտում եվրոպական երկրների լավագույն փորձը և աջակցել եվրոպական հարևանության քաղաքականության ծրագրի՝ թմրամիջոցներին վերաբերող դրույթների իրականացմանը:

Ելնելով իր առջև դրված ծրագրային խնդիրներից, ակտիվ համագործակցում է Հայաստանի Հանրապետության մի շարք պետական մարմինների, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության հետ:

Նշված համագործակցությունն առանձնանում է մի շարք ուղղություններով, որոնք հիմնականում հանգում են հետևյալին՝

1. Թմրամիջոցներին առնչվող Հայաստանի Հանրապետության գործող իրավական ակտերի ուսումնասիրություն, դրանցում փոփոխությունների և լրացումների կատարում՝ Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորություններին համապատասխանեցնելու նպատակով (քրեական օրենսգիրք, վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրք, «Թմրամիջոցների և հոգեմետ նյութերի մասին» օրենք և այլն),

2. 2009-2012 թվականների ընթացքում Հայաստանի Հանրապետությունում թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի ազգային ծրագրի և դրա իրականացման ժամանակացույցի նախագծերի մշակում և ընդունում,

3. Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկի կազմում նարկոլոգիական նոր բաժանմունքի ստեղծում և այդ հիմնարկի տարածքում գտնվող անավարտ շինությունների վերակառուցում՝ որպես նոր բաժանմունք, այդ կապակցությամբ փոխըմբռնման հուշագրի կնքում: Նշված բաժանմունքի մասնագետների համար ուսումնական այցերի կազմակերպում եվրոպական երկրներ:

4. Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության կազմում գործող փորցազիտական հիմնարկի հետ համագործակցության ամրապնդում, փորձագետների մասնագիտական պատրաստվածության բարձրացման նպատակով նրանց համար ուսումնական այցերի կազմակերպում Եվրամիության անդամ-երկրներ, համապատասխան սարքավորումների ձեռքբերում:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՆԱԽԱՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի հետ կապված հարցերը մշտապես գտնվել են համայն մարդկության ուշադրության կենտրոնում և աչքի ընկել առանձնակի արդիականությամբ: Նշված երևույթների դեմ պայքարը անհնար է որևէ մեկ պետության կողմից կամ այդ պետության իրավագործության շրջանակներում: Դրա համար անհրաժեշտ է հուսալի քաղաքական, իրավական կառուցակարգերի առկայություն և շարունակական կուռ համագործակցություն աշխարհի բոլոր պետությունների միջև: Անհրաժեշտ է ստեղծել համապատասխան ոլորտի հարաբերությունները հրստակ կանոնակարգման ենթարկող ներպետական, ինչպես նաև միջազգային-իրավական ակտերի ամբողջական համակարգ, ինչպես նաև ապահովել դրանց պահանջների լիարժեք իրացումը գործնական կյանքում: Միայն նման պայմաններում է կարելի նշված չարիքների դեմ պայքարում ակնկալել որոշակի նվաճումներ:

Վերոգրյալ համատեքստում Հայաստանի Հանրապետության կառավարությունն առանձնակիորեն կարևորում է թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի կազմակերպման համար պատշաճ իրավական հիմքերի ստեղծումը՝ նպատակ ունենալով հանրապետության բնակչությանը հնարավորինս զերծ պահել թմրամիջոցների, հոգեմետ նյութերի կամ դրանց պրեկուրսորների բացասական ազդեցությունից, դրավնասակար հետևանքներից:

Այս կապակցությամբ կարևոր նշանակություն ունեն հիշյալ ոլորտում ծագող հարաբերությունները կանոնակարգող, ՀՀ-ի կողմից վավերացված այնպիսի միջազգային ակտեր, ինչպիսիք են ՄԱԿ-ի՝ «Թմրամիջոցների մասին միասնական» 1961 թվականի, «Հոգեներգործուն նյութերի մասին» 1971 թվականի, «Թմրա-

միջոցների և հոգեներգործուն նյութերի ապօրինի շրջանառության դեմ պայքարի մասին» 1988 թվականի, «Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ» 2000 թվականի կոնվենցիաները և այլն:

Հայաստանի Հանրապետության ներպետական իրավական ակտերի համակարգում իր նորմատիվ բարձր նշանակությամբ առանձնանում է հիշյալ ոլորտում ծագող հարաբերությունները կանոնակարգող «Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի մասին» ՀՀ օրենքը: Գոյություն ունեն նաև այլ օրենսդրական ակտեր, որոնք կոչված են կարգավորման ենթարկելու ներկայացվող հարցերը:

Կարևոր նշանակություն ունեն այնպիսի իրավական ակտեր, ինչպիսիք են ՀՀ քրեական օրենսգիրքը և վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրքը, որոնք կոչված են ապահովելու հասարակական հարաբերությունների հուսալի պաշտպանությունը հակաիրավական ոտնձգություններից:

Այդուհանդերձ, հասարակական կյանքի յուրաքանչյուր ոլորտի կանոնակարգում միայն օրենքի մակարդակով չի կարող ապահովել այդ ոլորտում առաջացող հարաբերությունների իրավական կարգավորման պատշաճ մակարդակ: Դրա համար անհրաժեշտ են նաև ՀՀ Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով սահմանված պահանջների գործնական իրացումն ապահովող իրավական այլ կառուցակարգեր:

Դրանց թվում իր կարևոր նշանակությամբ առանձնանում է 2009-2012 թվականների ընթացքում Հայաստանի Հանրապետությունում թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի ազգային ծրագրի, ինչպես նաև դրա իրականացման ժամանակացույցի ընդունումը ՀՀ կառավարության որոշման տեսքով:

Ընդ որում, նման պրակտիկա գոյություն ունի աշխարհի այնպիսի երկրներում, ինչպիսիք են Մեծ Բրիտանիան, ԱՄՆ-ն, Չեխիան, Լատվիան, Լիտվան, Էստոնիան, Բուլղարիան, Ղազախստանը և այլն: Նշված ծրագիրը մշակվել է ՀՀ արդարադատության նախարարության կողմից՝ Հայաստանում «Հարավային Կովկասում թմրամիջոցների հակազդման ծրագրի» 5-րդ փուլի փորձագետների հետ համատեղ: Այն նպատակ ունի կատարելագործել Հայաստանի Հանրապետությունում թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի կազմակերպման պետական և հասարակական կառուցակարգերը, ինչպես նաև ապահովել դրանց արդյունավետ գործառնությունը:

Ծրագրի առջև դրված են այնպիսի կարևոր խնդիրներ, ինչպիսիք են հակաթմրամոլային գործունեությունը կանոնակարգող իրավական ակտերի կատարելագործումը, թմրամիջոցների և թմրամոլության վերաբերյալ միասնական տեղեկատվական համակարգի ներդրումը և կատարելագործումը, թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի առաջարկի և պահանջարկի կանխումը, թմրամոլության առաջնային կան-

խարգելումը, թմրամիջոցներից կախում ունեցող անձանց բուժման արդյունավետության բարձրացումը և սոցիալական վերականգնման համակարգի ներդրումը և այլն:

Նախատեսված են այդ խնդիրների իրականացմանն ուղղված անհրաժեշտ ռազմավարություններ, դրանց իրականացման արդյունքում ակնկալվող համապատասխան արդյունքներ:

Ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման համար մշակվել է նաև համապատասխան ժամանակացույցի նախագիծ:

Այսպիսով, 2009-2012 թվականների ընթացքում Հայաստանի Հանրապետությունում թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի ազգային ծրագրի, ինչպես նաև դրա իրականացման ժամանակացույցի ընդունումը կարող է իրապես նպաստել այդ ոլորտում ՀՀ որդեգրած պետական քաղաքականության սկզբունքների առավել լիարժեք իրացմանը, դրա համար անհրաժեշտ իրավական հիմքերի կատարելագործմանը:

Ստորև ներկայացվում է նշված նախագիծը:

Սույնով հանրային քննարկման է դրվում «2009-2012 թվականների ընթացքում Հայաստանի Հանրապետությունում թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի ազգային ծրագիրը և ծրագրի իրականացման ժամանակացույցը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը:

Նշված նախագծի վերաբերյալ կարծիքները և առաջարկությունները կարող են ներկայացվել գրավոր ՀՀ արդարադատության նախարարություն (0078, Երևան, Հալաբյան 41/ա հասցեով) կամ հետևյալ ինտերնետային փոստի հասցեով՝ [arts98us@yahoo.com](mailto:arts98us@yahoo.com) :



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ ՈՐՈՇՈՒՄ**

\_\_\_\_\_ 2009 թվականի N \_\_\_\_\_ -Ն

**2009-2012 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԹՄՐԱՍՈԼՈՒԹՅԱՆ ԵՎ ԹՄՐԱՍԻՋՈՑՆԵՐԻ ԱՊՕՐԻՆԻ ՇՐՋԱՆԱԹՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԾՐԱԳԻՐԸ ԵՎ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հաստատել՝

1) 2009-2012 թվականների ընթացքում Հայաստանի Հանրապետությունում թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի ազգային ծրագիրը՝ համաձայն հավելված 1-ի:

2) 2009-2012 թվականների ընթացքում Հայաստանի Հանրապետությունում թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի ազգային ծրագրի իրականացման ժամանակացույցը՝ համաձայն հավելված 2-ի:

2. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարին՝

քննարկել 2009-2012 թվականների ընթացքում Հայաստանի Հանրապետությունում թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի ազգային ծրագրի ֆինանսավորման հնարավորության հարցը ծրագրի իրականացման ժամանակացույցով նշված տարիների բյուջետային գործընթացների շրջանակներում:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրվանից:

**ԱԶԳԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ**  
**2009-2012 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԸՆԹԱՅՔՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ**  
**ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԹՄՐԱՍՈՒՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԹՄՐԱՍԻԶՈՑՆԵՐԻ**  
**ԱՊՕՐԻՆԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ**

**1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարությունն առանձնակիորեն կարևորում է թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի կազմակերպումը՝ նպատակ ունենալով Հանրապետության բնակչությանը հնարավորինս զերծ պահել թմրամիջոցների բացասական ազդեցությունից, դրա վնասակար հետևանքներից:

Այս կապակցությամբ վավերացվել են հիշյալ ոլորտում ծագող հարաբերությունները կանոնակարգող միջազգային պայմանագրեր, ինչպես նաև ընդունվել են համապատասխան ներպետական իրավական ակտեր:

Այսպես՝ Հայաստանի Հանրապետությունը 1993 թվականից ի վեր վավերացրել է Միավորված Ազգերի Կազմակերպության՝ «Թմրամիջոցների մասին միասնական» 1961 թվականի, «Հոգեմեղման նյութերի մասին» 1971 թվականի, «Թմրամիջոցների և հոգեմեղման նյութերի ապօրինի շրջանառության դեմ պայքարի մասին» 1988 թվականի, «Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ» 2000 թվականի կոնվենցիաները:

2002 թվականի դեկտեմբերի 26-ին Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից ընդունվել է «Թմրամիջոցների և հոգեմեղման նյութերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը: Այն կարգավորում է թմրամիջոցների և հոգեմեղման նյութերի շրջանառության հետ կապված հարաբերությունները, ինչպես նաև քաղաքացիների առողջության, պետության և հասարակության անվտանգության ապահովման նպատակով սահմանում է դրանց ապօրինի շրջանառությունը կանխար-

գելելու պետական քաղաքականության իրավական հիմքերը և թմրամոլության դեմ պայքարի հիմնական միջոցները:

2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրքը պատասխանատվություն է սահմանում թմրամիջոցների, հոգեմեղման նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառության հետ կապված հանցավոր արարքների համար:

Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի նախկին խմբագրությամբ պատասխանատվություն էր նախատեսվում նաև առանց բժշկի նշանակման թմրամիջոցներ գործածելու համար: Սակայն 2008 թվականի մայիսի 26-ին կատարված օրենսդրական փոփոխությունների արդյունքում Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի՝ առանց բժշկի նշանակման թմրամիջոցներ գործածելու համար պատասխանատվություն սահմանող 271-րդ հոդվածը ճանաչվեց ուժը կորցրած: Փոխարենը վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգիրքը լրացվեց 44<sup>1</sup>-րդ հոդվածով, որը պատասխանատվություն է նախատեսում առանց բժշկի նշանակման թմրամիջոցներ կամ հոգեմեղման նյութեր գործածելու համար: Այն նաև սահմանում է, որ այն անձը, ով առանց բժշկի նշանակման թմրամիջոցներ կամ հոգեմեղման նյութեր գործածելու կապակցությամբ բժշկական օգնություն ստանալու համար կամովին դիմել է համապատասխան բժշկական կազմակերպություն, ազատվում է այդ հոդվածով նախատեսված իրավա-

խախտման համար վարչական պատասխանատվությունից:

Նույն սկզբունքով առանց իրացնելու նպատակի մանր չափերով թմրամիջոցների կամ հոգեմետ նյութերի ապօրինի շրջանառությունը ապաքրեականացվեց և դրա համար սահմանվեց վարչական պատասխանատվություն:

Մեկ այլ օրենսդրական նորամուծությամբ թմրամիջոցների և հոգեմետ նյութերի մանր չափերը ամրագրվեցին վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում, իսկ դրանց զգալի, խոշոր և առանձնապես խոշոր չափերը՝ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում՝ որպես հավելվածներ:

Բացի այդ, Միավորված Ազգերի զարգացման ծրագրի (այսուհետ՝ ՄԱԶԾ) կողմից իրականացվող և Եվրամիության կողմից ֆինանսավորվող Հարավային Կովկասում թմրամիջոցների հակազդման ծրագրի հիմնադրող փուլի ակտիվ մասնակցությամբ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կողմից մշակվել է «Թմրամիջոցների և հոգեմետ նյութերի մասին Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծ, որն ընդունվել է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից 2008 թվականի սեպտեմբերի 8-ին:

Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից նույնպես ընդունվել են մի շարք իրավական ակտեր, որոնք ևս կոչված են կանոնակարգելու քննարկվող ոլորտում ծագող հարաբերությունները:

Մասնավորապես, Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի օգոստոսի 17-ի թիվ 496 որոշմամբ ստեղծվել է Հայաստանի Հանրապետությունում թմրամիջոցների հսկման մշտական հանձնաժողով, իսկ 2001 թվականի մայիսի 29-ի թիվ 392 որոշմամբ հաստատվել հանձնաժողովի կանոնադրությունը: Նշված որոշմամբ որպես հանձնա-

ժողովի գործունեության առարկա ամրագրվել է Հայաստանի Հանրապետությունում թմրամիջոցների, հոգեմետ գործուն, նյութերի ու դրանց ստացման բաղադրիչների հսկողության և թմրամիջոցներին ու հոգեմետ գործուն նյութերին առնչվող գործունեությունը լիցենզավորելու մասին հայտերի վերաբերյալ առաջարկությունների մշակումը:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի նոյեմբերի 27-ի թիվ 1714-Ն որոշմամբ ստեղծվել է Հայաստանի Հանրապետությունում թմրամիջոցների և հոգեմետ գործուն նյութերի շրջանառության կանոնակարգման ու ապօրինի շրջանառության կանխարգելման միջգերատեսչական հանձնաժողով (այսուհետ՝ Միջգերատեսչական հանձնաժողով): Այդ որոշման համաձայն՝ Միջգերատեսչական հանձնաժողովը գործում է Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետի ղեկավարությամբ և դրա կազմում ընդգրկված են Հայաստանի Հանրապետության՝ սույն ոլորտի շահագրգիռ մարմինների ներկայացուցիչներ: Միջգերատեսչական հանձնաժողովին հանձնարարվել է յուրաքանչյուր տարի՝ մինչև նոյեմբերի 1-ը կազմել և ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացնել «Թմրամիջոցների և հոգեմետ նյութերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի ծրագիր:

2001 թվականից ի վեր Հայաստանի Հանրապետությունում իրականացվում է Հարավային Կովկասում թմրամիջոցների հակազդման հիշյալ ծրագիրը: Այն, 2003 թվականից սկսած, հրապարակում է թմրամիջոցների վերաբերյալ ազգային տարեկան զեկույցներ, իսկ իրականացման հիմնադրող փուլում ծրագրի կարևորագույն խնդիրներից է հռչակվել աջակցել թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի ծրագրի մշակմանը և ընդունմանը:

Այնուամենայնիվ, չնայած վերոգրյալ իրավական ակտերի առկայությանը, Հայաս-

տանի Հանրապետությունում թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի հետ կապված շատ հարցեր շարունակում են մնալ չլուծված:

Մասնավորապես, մինչ օրս գոյություն չունի թմրամիջոցների և թմրամոլության վերաբերյալ միասնական տեղեկատվական համակարգ: Թմրամիջոցների կամ հոգեմետ նյութերի գործածմանը, դրանցից կախվածության պատճառների բացահայտմանն առնչվող գիտական հետազոտությունները խիստ սակավաթիվ են, իսկ դրանց արդյունքում ստացվող տվյալները որոշ դեպքերում՝ իրարամերժ: Օրինակ՝ «ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից այս ոլորտում կատարված ուսումնասիրության համաձայն՝ 2000 թվականին թմրամիջոց գործածող անձանց հաշվարկային թիվը միայն Երևան քաղաքում կազմել է 19.000-ից 20.000, որոնցից շուրջ 2.000-ը եղել են ներարկային թմրամիջոց գործածողներ: Իսկ Առողջապահության համաշխարհային կազմակերպության տվյալների համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում ներարկային թմրամիջոց գործածող անձանց հաշվարկային թիվը 2004 թվականին կազմել է 7000-ից 11.000:

Բավարար չափով չեն իրականացվում թմրամոլության առաջնային կանխարգելմանն ուղղված համակարգված միջոցառումներ: Առանձնակիորեն կարևորվում է թմրամիջոցներ կամ հոգեմետ նյութեր գործածող անձանց տրամադրվող բժշկական և սոցիալ-հոգեբանական ծառայությունների որակի բարելավման անհրաժեշտությունը: Հայաստանի Հանրապետությունում թմրամիջոցներից կախվածություն ունեցող անձանց բուժումը ներկայում իրականացվում է ինչպես հիվանդանոցային, այնպես էլ արտահիվանդանոցային պայմաններում՝ պետական պատվերի շրջանակներում: Վերոգրյալ համատեքստում կարևոր նշանակություն ունի նաև թմրամիջոցներից կախվածություն ունեցող անձանց բուժման ոլորտի անձնակազմի վերապատրաստման և

կրթական ծրագրերի կատարելագործումը:

Համակարգային լուծում պահանջող արդիական խնդիր է թմրամիջոցների, հոգեմետ նյութերի ու դրանց պրեկուրսորների ապօրինի առաջարկի և ապօրինի շրջանառության կանխմանն ուղղված միջոցառումների մշակումը:

Այսպիսով, թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր) մշակվել է՝ հաշվի առնելով թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի ոլորտում առկա բացերն ու թերությունները, դրանք վերացնելու, գործող կառուցակարգերն արդիականացնելու հրատապ անհրաժեշտությունը, ինչպես նաև համաշխարհային փորձի և տարածաշրջանում գոյություն ունեցող իրավիճակի զարգացման առանձնահատկությունները:

## 2. ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ, ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾԸ

Ծրագրի հիմնական նպատակն է կատարելագործել Հայաստանի Հանրապետությունում թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի կազմակերպման պետական և հասարակական կառուցակարգերը, ապահովել դրանց արդյունավետ գործառնությունը:

Ծրագրի հիմնական խնդիրներն են՝

1. հակաթմրամիջոցային գործունեությունը կանոնակարգող իրավական ակտերի կատարելագործումը, թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի իրավական ակտերի ու իրավակիրառ գործունեության ներդաշնակեցումը Հայաստանի Հանրապետության՝ համապատասխան ոլորտի միջազգային իրավական ակտերի պահանջներին,

2. թմրամիջոցների և թմրամոլության վերաբերյալ միասնական տեղեկատվական համակարգի ներդրումը և կատարելագործումը,

3. թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի առաջարկի և պահանջարկի կանխումը,

4. թմրամոլության առաջնային կանխարգելումը,

5. թմրամիջոցներից կախում ունեցող անձանց բուժման արդյունավետության բարձրացումը և սոցիալական վերականգնման համակարգի ներդրումը,

6. նարկոլոգիական ծառայության արդիականացումը և գիտական-տեղեկատվական պատշաճ հագեցվածության ապահովումը,

7. իրավասու պետական մարմինների, ինչպես նաև թմրամոլության կանխարգելման և բուժման ոլորտում մասնագիտացած բժշկական հիմնարկների ներուժի զարգացումը,

8. թմրամիջոցներից կախվածություն ունեցող անձանց բուժման ոլորտի անձնակազմի վերապատրաստման և կրթական ծրագրերի կատարելագործումը,

9. թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի ոլորտում միջազգային, ինչպես նաև միջգերատեսչական համագործակցության ամրապնդումը:

Սույն Ծրագրում ներկայացված ռազմավարություններն ու գործողությունները ուղղված են Հայաստանի Հանրապետությունում թմրամիջոցների և թմրամոլության դեմ արդյունավետ պայքարին և ներառում են 9 հիմնական բաժին՝

1. թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի ոլորտը կանոնակարգող Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի ուսումնասիրությունը և ներպետական իրավական ակտերի կատարելագործումը,

2. թմրամիջոցների և թմրամոլության վերաբերյալ տեղեկատվական միասնական համակարգի ներդրումը և կատարելագործումը,

3. թմրամոլության առաջնային կանխարգելումը,

4. թմրամիջոցներ կամ հոգեմետ նյութեր գործածող անձանց տրամադրվող բժշկական և սոցիալ-հոգեբանական ծառայությունները,

5. թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառության կանխումը,

6. միջազգային համագործակցությունը,

7. մոնիթորինգը և գնահատումը,

8. կառավարումը, համակարգումը և համագործակցությունը,

9. ֆինանսավորումը և ֆինանսական միջոցների հավաքագրումը:

**3. ԹՄՐԱՍՈՒՈՒԹՅԱՆ ԵՎ ԹՄՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԱՊՕՐԻՆԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՈՒՆՈՐՏԸ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՂ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄԸ**

**Նպատակ 1. Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի ուսումնասիրությունը և ներպետական իրավական ակտերի կատարելագործումը**

**Ուսումնասիրություն 1.** Իրականացնել Հայաստանի Հանրապետության՝ համապատասխան ոլորտի միջազգային պայմանագրերի, այդ թվում՝ Սիավորված Ազգերի Կազմակերպության միջազգային կոնվենցիաների, Եվրոպական հարևանության քաղաքականության գործողությունների ծրագրի դրույթների վերլուծություն և ապահովել Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում դրանց առավել ամբողջական իրացումը:

**Ուսումնասիրություն 2.** Իրականացնել թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի ոլորտը կանոնակարգող Հայաստանի Հանրապետության ներպետական իրավական ակտերի համակարգային վերլուծություն և անհրաժեշտության դեպքում ներկայացնել առաջարկություններ դրանցում փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ:

**Ռազմավարություն 3.** Հայաստանի Հանրապետության ներպետական իրավական ակտերում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի պաշտոնական հայերեն տեքստերում միասնականացնել թմրամիջոցներին և հոգեմետ նյութերին առնչվող հասկացությունները:

**Նպատակ 2. Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի և ներպետական իրավական ակտերի արդյունավետ կիրառելիության ապահովումը**

**Ռազմավարություն 1.** Կատարել Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի և ներպետական իրավական ակտերի՝ թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարին առնչվող դրույթների կիրառման պրակտիկայի վերլուծություն և ներկայացնել առաջարկություններ դրանց կատարելագործման վերաբերյալ:

**Ռազմավարություն 2.** Մշակել թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի ոլորտի իրավակիրառ գործունեության հետ կապված մեթոդական ուղեցույցներ՝ Հայաստանի Հանրապետության դատարանների, իրավապահ և այլ շահագրգիռ մարմինների ու կազմակերպությունների համար:

**Ռազմավարություն 3.** Ապահովել «Թմրամիջոցների և հոգեմեդրոնոն նյութերի ապօրինի շրջանառության դեմ պայքարի մասին» 1988 թվականի Միավորված Ազգերի Կազմակերպության միջազգային կոնվենցիայով նախատեսված իրավական փոխօգնության հարցերով ներպետական իրավասու մարմնի նշանակումը:

**Ռազմավարություն 4.** Իրականացնել Հայաստանի Հանրապետության պետական սահմանների արդյունավետ վերահսկողությանն առնչվող իրավակիրառ գործունեության ուսումնասիրություն, անհրաժեշտության դեպ-

քում ներկայացնել առաջարկություններ դրա կատարելագործման ուղղությամբ:

**Ակնկալվող արդյունքները՝**

1. կատարելագործվեն Հայաստանի Հանրապետության օրենքները և այլ իրավական ակտերը, կապահովվի դրանց լիարժեք համապատասխանեցումը Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորություններին,

2. կապահովվի Հայաստանի Հանրապետության օրենքների և մյուս իրավական ակտերի արդյունավետ կիրառումը,

3. կհստակեցվեն Հայաստանի Հանրապետության դատարանների, իրավապահ և այլ մարմինների մոտեցումները՝ կապված թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի ոլորտը կանոնակարգող իրավական ակտերի դրույթների մեկնաբանության հետ,

4. կապահովվի Հայաստանի Հանրապետության՝ քննարկվող ոլորտի միջազգային պայմանագրերի հստակ գործառնությունը:

**4. ԹՄՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԵՎ ԹՄՐԱՄՈԼՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՄԻԱՄՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԵՐԴՐՈՒՄԸ ԵՎ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄԸ**

**Նպատակ 1. Թմրամիջոցների և թմրամոլության վերաբերյալ տեղեկատվական, ինչպես նաև թմրամոլության մոնիտորինգի և գնահատման միասնական համակարգի ներդրումն ու կատարելագործումը**

**Ռազմավարություն 1.** Թմրամիջոցների և թմրամոլության վերաբերյալ տեղեկատվական միասնական համակարգի ներդրման նպատակով Հարավային Կովկասում թմրամիջոցների հակազդման ծրագրի հինգերորդ փուլի շրջանակներում «Ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգա-



յին ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերության կազմում ստեղծված թմրամիջոցների և թմրամոլության մոնիտորինգի կենտրոնի (այսուհետ՝ Թմրամիջոցների և թմրամոլության մոնիտորինգի կենտրոն) հետագա գործունեության համար ստեղծել պատշաճ իրավական հիմքեր:

**Ռազմավարություն 2.** Թմրամիջոցների և թմրամոլության հետ կապված խնդիրներին վերաբերող տեղեկատվության պատշաճ հավաքագրման, վերլուծության և տարածման նպատակով ապահովել համապատասխան մարմինների և կազմակերպությունների կողմից թմրամիջոցների վերաբերյալ տվյալների ժամանակին տրամադրումը Թմրամիջոցների և թմրամոլության մոնիտորինգի կենտրոնին: Ապահովել համապատասխան պետական մարմինների և հասարակական կազմակերպությունների ակտիվ ներգրավվածությունը այդ գործընթացին:

**Ռազմավարություն 3.** Թմրամիջոցների և թմրամոլության մոնիտորինգի կենտրոնի աշխատանքների արդյունավետության բարձրացման նպատակով ուսումնասիրել և աստիճանաբար ներդնել թմրամիջոցների վերաբերյալ համաճարակաբանական տեղեկատվության հավաքագրման, վերլուծության և տրամադրման միջազգայնորեն ճանաչված լավագույն եղանակներն ու փորձը՝ հիմք ընդունելով Թմրամիջոցների և թմրամոլության մոնիտորինգի եվրոպական կենտրոնի (համակարգչային համացանցի կայք էջ՝ [www.emcdda.europa.eu](http://www.emcdda.europa.eu)) ուղեցույցները: Ստացված տեղեկատվության և ձեռք բերված արդյունավետ փորձի փոխանակման նպատակով նպաստել սերտ և արդյունավետ միջազգային համագործակցության զարգացմանը:

**Ռազմավարություն 4.** Մշակել և ներդնել Թմրամիջոցների և թմրամոլության մոնիտորինգի եվրոպական կենտրոնի ուղեցույցների պահանջներին համապատասխանող թմրամիջոցների չարաշահման համաճարակաբանական հսկողության համակարգ:

**Ռազմավարություն 5.** Ապահովել թմրա-

միջոցների և թմրամոլության վերաբերյալ տեղեկատվական համակարգի հատուկ պաշտպանությունը և խորհրդապահական (կոնֆիդենցիալ) բնույթը:

**Ուսուցումների և թմրամոլության ոլորտի գիտական մոտեցումների արդիականացումը, տվյալ ոլորտի համաշխարհային գիտական փորձի ներդրման ապահովումը**

**Ռազմավարություն 1.** Մշակել և իրականացնել հետազոտություններ՝ թմրամիջոցների գործածման իրավիճակի բացահայտման, միտումների և զարգացումների գնահատման և դրանց պատճառահետևանքային կապի վեր հանման, ինչպես նաև հետագա գործունեության ոլորտների նախանշման նպատակով:

**Ռազմավարություն 2.** Ուսումնասիրել քննարկվող ոլորտի համաշխարհային առաջատար գիտական փորձը և միջոցներ ձեռնարկել Հայաստանի Հանրապետությունում դրա ներդրման ուղղությամբ:

**Ակնկալվող արդյունքները՝**

1. Թմրամիջոցների վերաբերյալ տեղեկատվական միասնական համակարգի ներդրման նպատակով կստեղծվեն պատշաճ իրավական հիմքեր Թմրամիջոցների և թմրամոլության մոնիտորինգի կենտրոնի գործունեության համար,

2. Թմրամիջոցների և թմրամոլության մոնիտորինգի եվրոպական կենտրոնի ուղեցույցների հիման վրա կներդրվեն թմրամիջոցների վերաբերյալ համաճարակաբանական տեղեկատվության հավաքագրման, վերլուծության և տրամադրման միջազգայնորեն ճանաչված լավագույն եղանակներն ու փորձը,

3. կնշակվի և կներդրվի Թմրամիջոցների և թմրամոլության մոնիտորինգի եվրոպական կենտրոնի ուղեցույցների պահանջներին համապատասխանող թմրամիջոցների չարաշահման համաճարակաբանական հսկողության համակարգ,

4. կապահովվի թմրամիջոցների վերաբերյալ տեղեկատվական համակարգի հատուկ պաշտպանությունը և խորհրդապահական (կոնֆիդենցիալ) բնույթը,

5. տվյալ ոլորտում իրականացված հետազոտությունների արդյունքների կիրառման շնորհիվ կբարձրանա թմրամիջոցներին և թմրամոլությանն առնչվող հեռանկարային ծրագրերի արդյունավետությունը:

## 5. ԹՄՐԱՄՈՒԼՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄԸ

### նպատակ 1. Թմրամոլության կանխարգելումը դեռահասների և երիտասարդների շրջանում

**Ռ-ազմավարություն 1.** Մշակել դեռահասների և երիտասարդների շրջանում թմրամոլության կանխարգելման ժամանակակից և գիտականորեն հիմնավորված մոտեցումներ:

**Ռ-ազմավարություն 2.** Դեռահասների և երիտասարդների շրջանում ներդնել «Հավասարը՝ հավասարին» մեթոդով ուսուցման համակարգ և իրականացնել ուսուցում այդ համակարգով:

**Ռ-ազմավարություն 3.** Իրականացնել դեռահասների և երիտասարդների արտասույնական գործունեության և հանգստի հետ կապված ծրագրեր՝ նրանց մոտ թմրամիջոցների գործածման նկատմամբ սոցիալական անձեռնմխելիության խթանման նպատակով:

**Ռ-ազմավարություն 4.** Հանրակրթական դպրոցների և ուսումնական այլ հաստատությունների ուսումնական ծրագրերում ընդգրկել թմրամոլության կանխարգելմանն առնչվող դասաժամեր:

**Ռ-ազմավարություն 5.** Բարձրացնել հանրակրթական դպրոցներում և ուսումնական այլ հաստատություններում համապատասխան առարկաներ դասավանդող անձանց իրազեկության մակարդակը թմրամոլության և դրա կանխարգելմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ:

**Ռ-ազմավարություն 6.** Չեռնարկել միջոցներ թմրամոլության և դրա հասցրած

վնասի վերաբերյալ դեռահաս երեխաների օրինական ներկայացուցիչների (ծնողներ, որդեգրողներ, խնամակալներ, հոգաբարձուներ) իրազեկության բարձրացմանն ուղղությամբ՝ թմրամոլության կանխարգելման գործընթացին նրանց ակտիվ ներգրավվածությանն ապահովման նպատակով:

**Ռ-ազմավարություն 7.** Ապահովել դեռահասների և երիտասարդների շրջանում թմրամոլության կանխարգելման նախաձեռնություններին հասարակական կազմակերպությունների ներգրավումը:

### Նպատակ 2. Թմրամոլության կանխարգելումը ազատությունից զրկված անձանց շրջանում

**Ռ-ազմավարություն 1.** Ակտիվացնել թմրամոլության կանխարգելմանն ուղղված միջոցառումները ազատությունից զրկված անձանց շրջանում:

**Ռ-ազմավարություն 2.** Ազատությունից զրկված անձանց շրջանում ներդնել «Հավասարը՝ հավասարին» մեթոդով ուսուցման համակարգ և իրականացնել ուսուցում այդ համակարգով:

**Ռ-ազմավարություն 3.** Չարգացնել ձերբակալված անձանց պահելու վայրերի և քրեակատարողական հիմնարկների ներուժը՝ թմրամոլության կանխարգելման նպատակով:

### Նպատակ 3. Թմրամոլության կանխարգելումը Հայաստանի Հանրապետության ժամկետային զինծառայողների շրջանում

**Ռ-ազմավարություն 1.** Իրականացնել թմրամոլության կանխարգելմանն ուղղված միջոցառումներ ժամկետային զինծառայողների շրջանում:

**Ռ-ազմավարություն 2.** Ժամկետային զինծառայողների շրջանում ներդնել «Հավասարը՝ հավասարին» մեթոդով ուսուցման համակարգ և իրականացնել ուսուցում այդ հա-

մակարգով:

**Ռ-ազմավարություն 3.** Չարգացնել զորամասերի, զորամիավորումների և զինվորական հիմնարկների ներուժը՝ թմրամոլության կանխարգելման նպատակով:

**Նպատակ 4. Թմրամոլության կանխարգելումը զանգվածային լրատվության միջոցների օգնությամբ**

**Ռ-ազմավարություն 1.** Հանրային և մասնավոր հեռուստառադիոընկերությունների հետ համատեղ մշակել երկարաժամկետ կայուն աշխատանքային կանոնակարգ՝ ուղղված Հանրապետությունում թմրամոլության կանխարգելման արտացոլմանը, այդ թվում՝ հատուկ հաղորդումների, թմրամոլության հասցրած վնասի վերաբերյալ հայտարարությունների, թեմատիկ ֆիլմերի շարունակական հեռարձակման միջոցով:

**Ռ-ազմավարություն 2.** Թմրամոլության կանխարգելման նպատակով իրականացվող միջոցառումները պարբերաբար արտացոլել զանգվածային լրատվության միջոցներում, կանոնավոր դարձնել Հայաստանի Հանրապետությունում թմրամոլության կանխարգելման համար պատասխանատու մարմինների և կազմակերպությունների մասնակցությունը հեռուստառադիոհաղորդումներին, մամլո ասուլիսներին:

**Ռ-ազմավարություն 3.** Կազմակերպել հեռուստառադիոհաղորդումների հատուկ շարքի հեռարձակում՝ ցուցադրելով թեմատիկ տեսահոլովակներ: Օգտագործել մամուլը և զանգվածային լրատվության մյուս միջոցները՝ թմրամոլության և դրա հասցրած վնասի վերաբերյալ բնակչության իրազեկության բարձրացման համար:

**Ռ-ազմավարություն 4.** Ստեղծել համակարգչային համացանցի հանգույց և մշտապես թարմացնել դրանում տեղ գտած՝ Հայաստանի Հանրապետությունում թմրամոլության դեմ պայքարն արտացոլող նյութերը:

**Ռ-ազմավարություն 5.** Թմրամոլության

հետ կապված հարցերի, դրա դեմ պայքարի մոտեցումների վերաբերյալ լրագրողների իրազեկության բարձրացման նպատակով կազմակերպել սեմինարներ, դասընթացներ:

**Ակնկալվող արդյունքները՝**

1. դեռահասների և երիտասարդների շրջանում կներդրվի «Հավասարը՝ հավասարին» մեթոդով ուսուցման համակարգ և կիրականացվի ուսուցում այդ համակարգով,

2. հանրակրթական դպրոցների և ուսումնական այլ հաստատությունների ուսումնական ծրագրերում կընդգրկվեն թմրամոլության կանխարգելման առնչվող դասաժամեր,

3. կբարձրանա հանրակրթական դպրոցներում և ուսումնական այլ հաստատություններում համապատասխան առարկաներ դասավանդող անձանց իրազեկության մակարդակը թմրամոլության և դրա կանխարգելման ուղղված միջոցառումների վերաբերյալ,

4. կբարձրանա դեռահաս երեխաների օրինական ներկայացուցիչների (ծնողներ, որդեգրողներ, խնամակալներ, հոգաբարձուներ) իրազեկության աստիճանը թմրամոլության և դրա հասցրած վնասի վերաբերյալ,

5. Հասարակական կազմակերպությունները ներգրավված կլինեն դեռահասների և երիտասարդների շրջանում թմրամոլության կանխարգելման նախաձեռնություններին,

6. Ազատությունից զրկված անձանց շրջանում կներդրվի «Հավասարը՝ հավասարին» մեթոդով ուսուցման համակարգ և կիրականացվի ուսուցում այդ համակարգով,

7. Կիրականացվեն թմրամոլության կանխարգելման ուղղված միջոցառումներ ժամկետային զինձառայողների շրջանում,

8. Ժամկետային զինձառայողների շրջանում կներդրվի «Հավասարը՝ հավասարին» մեթոդով ուսուցման համակարգ և կիրականացվի ուսուցում այդ համակարգով,

9. Թմրամոլության կանխարգելման նպատակով իրականացվող միջոցառումները պարբերաբար կներկայացվեն զանգվածային լրատվության միջոցներում, կանոնավոր կդառնան Հայաստանի Հանրապետությունում

թմրամոլության կանխարգելման համար պատասխանատու մարմինների և կազմակերպությունների մասնակցությունը հեռուստառադիոհաղորդումներին, մամլո ասուլիսներին,

10. Կստեղծվի համակարգչային համացանցի միասնական հանգույց և մշտապես կթարմացվեն դրանում տեղ գտած՝ Հայաստանի Հանրապետությունում թմրամոլության դեմ պայքարն արտացոլող նյութերը:

11. Կբարձրանա թմրամոլության հետ կապված հարցերի, դրա դեմ պայքարի մոտեցումների վերաբերյալ լրագրողների իրազեկության աստիճանը:

**6. ԹՄՐԱՄԻՋՈՑՆԵՐ ԿԱՄ ՀՈԳԵՄԵՏ ՆՅՈՒԹԵՐ ԳՈՐԾԱԾՈՂ ԱՆՁԱՆՑ ՏՐԱՍՎԻԿՎՈՂ ԲԺՇԿԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**Նպատակ 1. Թմրամիջոցներ կամ հոգեմետ նյութեր գործածող անձանց վաղ հայտնաբերումը և ուղեգրումը համապատասխան բուժհաստատություններ**

**Ռ-ազմավարություն 1.** Ապահովել սերտ համագործակցություն թմրամիջոցներ կամ հոգեմետ նյութեր գործածող անձանց շրջանում փոխօգնության, խնամքի, աջակցության և կանխարգելման ծրագրեր իրականացնող կազմակերպությունների և նարկոլոգիական ծառայություն մատուցող բժշկական հաստատությունների (այսուհետ՝ նարկոլոգիական բուժհաստատություններ) միջև:

**Ռ-ազմավարություն 2.** Ապահովել սերտ համագործակցություն առողջության առաջնային պահպանման հաստատությունների և նարկոլոգիական բուժհաստատությունների միջև:

**Ռ-ազմավարություն 3.** Միջոցներ ձեռնարկել թմրամոլությամբ հիվանդ անձանց նկատմամբ խարանի և խտրականության վերացման ուղղությամբ:

**Ռ-ազմավարություն 4.** Միջոցներ ձեռնարկել նարկոլոգիական բուժհաստատու-

թյուններից դուրս խորհրդատվական և հոգեբանական աջակցության կենտրոններ հիմնելու ուղղությամբ: Այդ կենտրոնները պետք է ապահովեն թմրամոլության հետ կապված կամավոր և անանուն խորհրդատվություն, հոգեբանական աջակցության, անհրաժեշտության դեպքում՝ նաև ուղեգրեն համապատասխան նարկոլոգիական բուժհաստատություններ:

**Ռ-ազմավարություն 5.** Ապահովել հասարակական կազմակերպությունների ներգրավումը թմրամիջոցներ կամ հոգեմետ նյութեր գործածող անձանց շրջանում խորհրդատվական և սոցիալ-հոգեբանական աջակցության, նրանց բուժման և վերականգնման ծրագրերի բոլոր փուլերում:

**Նպատակ 2. Թմրամիջոցներ կամ հոգեմետ նյութեր գործածող անձանց՝ ժամանակակից և գիտականորեն հիմնավորված բուժման, վերականգնման և վնասի նվազեցման ծառայությունների տրամադրումը**

**Ռ-ազմավարություն 1.** Ձեռնարկել միջոցներ նարկոլոգիական բուժհաստատությունների վերանորոգման, հիվանդանոցային պայմանների բարեկարգման և համապատասխան բուժսարքավորումներով համալրման ուղղությամբ:

**Ռ-ազմավարություն 2.** Ձեռնարկել միջոցներ նարկոլոգիայի ոլորտի մասնագետներ պատրաստող հաստատությունների գիտական և կրթական մակարդակի բարձրացման ուղղությամբ:

**Ռ-ազմավարություն 3.** Ապահովել նարկոլոգիայի ոլորտի բժիշկների և միջին բուժանձնակազմի պատշաճ շարունակական կրթությունը, մասնագիտացումը և վերապատրաստումները:

**Ռ-ազմավարություն 4.** Ապահովել հոգեբաններ և սոցիալական ոլորտի աշխատողներ պատրաստող և (կամ) վերապատրաստում ապահովող գիտակրթական հաստատությունների կողմից համապատասխան մասնագետների ուղեգրումը նարկոլոգիական և վնասի

նվազեցման ծրագրեր իրականացնող կազմակերպություններ:

**Ռազմավարություն 5.** Ապահովել նարկոլոգիական բուժհաստատությունների կողմից բուժման տարբեր ձևերի և (կամ) մեթոդների կիրառումը (ապաթունավորում, փոխարինող բուժում, հոգեթերապևտիկ արդյունավետ միջոցառումներ և ավանդական բուժում):

**Ռազմավարություն 6.** Աջակցել վնասի նվազեցման ծրագրեր իրականացնող կազմակերպությունների ներուժի զարգացմանը և դրանց կողմից թմրամիջոցներ կամ հոգեմետ նյութեր գործածող անձանց տրամադրվող ծառայությունների լիարժեքության ապահովմանը (երակների խնամք, գերդոզավորումների կանխարգելում, արյան միջոցով փոխանցվող վարակների կանխարգելում և այլն):

**Նպատակ 3. Թմրամիջոցներից կամ հոգեմետ նյութերից կախվածությամբ անձանց հետբուժական սոցիալական վերինտեգրումը**

**Ռազմավարություն 1.** Մշակել տեղական ինքնակառավարման մարմինների և համայնքային կազմակերպությունների կողմից իրականացվելիք՝ թմրամիջոցներ կամ հոգեմետ նյութեր գործածող անձանց համար նախատեսված սոցիալական աջակցության և զբաղվածության ծրագրեր:

**Ակնկալվող արդյունքները՝**

1. կապահովվի սերտ համագործակցություն թմրամիջոցներ կամ հոգեմետ նյութեր գործածող անձանց շրջանում փոխօգնության, խնամքի, աջակցության և կանխարգելման ծրագրեր իրականացնող կազմակերպությունների և նարկոլոգիական բուժհաստատությունների միջև,

2. կձեռնարկվեն միջոցներ թմրամոլությամբ հիվանդ անձանց նկատմամբ խարանի և խտրականության վերացման ուղղությամբ,

3. կհիմնվեն խորհրդատվական և հոգեբանական աջակցության կենտրոններ նարկոլոգիական բուժհաստատություններից դուրս,

4. կապահովվի հասարակական կազմակերպությունների ներգրավումը թմրամիջոցներ կամ հոգեմետ նյութեր գործածող անձանց շրջանում խորհրդատվական և սոցիալ-հոգեբանական աջակցության, նրանց բուժման և վերականգնման ծրագրերի բոլոր փուլերում,

5. կձեռնարկվեն միջոցներ նարկոլոգիական բուժհաստատությունների վերանորոգման, հիվանդանոցային պայմանների բարելավման և համապատասխան բուժսարքավորումներով համալրման ուղղությամբ,

6. կբարձրացվի նարկոլոգիայի ոլորտի մասնագետներ պատրաստող հաստատությունների գիտական և կրթական մակարդակը,

7. կապահովվի նարկոլոգիայի ոլորտի բժիշկների և միջին բուժանձնակազմի պատշաճ շարունակական կրթությունը, մասնագիտացումը և վերապատրաստումները,

8. կզարգացվի վնասի նվազեցման ծրագրեր իրականացնող կազմակերպությունների ներուժը,

9. կմշակվեն և կիրառործվեն տեղական ինքնակառավարման մարմինների և համայնքային կազմակերպությունների կողմից իրականացվելիք՝ թմրամիջոցներ կամ հոգեմետ նյութեր գործածող անձանց համար նախատեսված աջակցության և զբաղվածության ծրագրեր:

**7. ԹՄՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ, ՀՈԳԵՄԵՏ ՆՅՈՒԹԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ՊՐԵԿՈՒՐՍՈՐՆԵՐԻ ԱՊՕՐԻՆԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԿԱՆ ՈՒՄԸ**

**Նպատակ 1. Թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի առաջարկի կանխումը**

**Ռազմավարություն 1.** «Պետական սահմանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին և այլ իրավական ակտերին համապատասխան ապահովել սահմանային արդյունավետ վերահսկողություն, ինչպես նաև իրականացնել սահմանների համալիր կառա-

վարման ծրագրեր՝ Հայաստանի Հանրապետություն թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի ներմուծումը կանխելու նպատակով:

**Ռազմավարություն 2.** Օտարերկրյա պետություններից Հայաստանի Հանրապետություն թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի ներմուծումը կանխելու և նշված ոլորտում սերտ փոխգործակցություն ապահովելու նպատակով կնքել համապատասխան միջպետական համաձայնագրեր:

**Ռազմավարություն 3.** Կատարելագործել թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառության հետ կապված հանցագործությունների բացահայտման նպատակով Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված իրավասու մարմինների կողմից նշված նյութերի վերահսկվող փոխադրումների և ստուգողական գնումների իրականացման, ինչպես նաև դրանց բռնագրավման համակարգը:

**Ռազմավարություն 4.** Կատարելագործել թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների հետ կապված գործունեությանն առնչվող հաշվետվողական և այդ գործունեության գրանցման համակարգը:

**Ռազմավարություն 5.** Կանխել թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների հոսքը օրինական շրջանառությունից դեպի ապօրինի շրջանառություն:

**Ռազմավարություն 6.** Ակտիվացնել ազատությունից զրկված անձանց շրջանում թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառության կանխման միջոցառումները:

**Ռազմավարություն 7.** Ակտիվացնել զինծառայողների շրջանում թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառության կանխման միջոցառումները:

**Ռազմավարություն 8.** Ապահովել թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրե-

կուրսորների ապօրինի շրջանառությունից ստացված եկամուտների օրինականացման կանխմանն ուղղված միջոցների անշեղ իրացումը:

## **Նպատակ 2. Իրավասու մարմինների և կազմակերպությունների կարողությունների հզորացում և նրանց միջև համագործակցության ամրապնդում**

**Ռազմավարություն 1.** Ապահովել իրավապահ և իրավասու այլ պետական մարմինների նյութատեխնիկական և կադրային պատշաճ հագեցվածությունը:

**Ռազմավարություն 2.** Ապահովել նարկոլոգիական ծառայության արդիականացումը և գիտական-տեղեկատվական պատշաճ հագեցվածությունը, ինչպես նաև թմրամոլության կանխարգելման և բուժման ոլորտում մասնագիտացած բժշկական հիմնարկների նյութատեխնիկական ներուժի ամրապնդումը:

**Ռազմավարություն 3.** Իրավապահ մարմինների համակարգում գործող հատուկ ուսումնական հաստատությունների կազմում ստեղծել թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառության, թմրամոլության կանխարգելման հետ կապված հարցերն ուսումնասիրող ստորաբաժանումներ:

**Ռազմավարություն 4.** Ակտիվացնել աշխատանքները Հայաստանի Հանրապետության տարածքում հսկողության տակ գտնվող թմրամիջոցների և հոգեմետ նյութերի ու դրանց ստացման բաղադրիչների ցանկերի և ցուցակների կազմման սկզբունքների, կառուցվածքի ու դրանցում ներառվելիք՝ ապօրինի շրջանառության մեջ հայտնաբերված թմրամիջոցների մասնաչափերի վերաբերյալ առաջարկություններ մշակելու ուղղությամբ:

**Ռազմավարություն 5.** Ապահովել թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառության հետ կապված իրավախախտումների, նման գործունեությանն առնչվող ֆիզիկական և իրավա-



բանական անձանց վերաբերյալ օպերատիվ տեղեկատվական-վերլուծական համակարգի ներդրումը և ստացված տեղեկատվության փոխանակման ապահովումը համապատասխան մարմինների հետ:

**Ակնկալվող արդյունքները՝**

1. կապահովվի Հայաստանի Հանրապետության սահմանային վերահսկողության համակարգի արդյունավետությունը՝ Հայաստանի Հանրապետություն թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի ներմուծումը կանխելու նպատակով: Հայաստանի պետական սահմաններով տեղաշարժը կդառնա առավել դյուրին,

2. օտարերկրյա պետություններից Հայաստանի Հանրապետություն թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի ներմուծումը կանխելու և նշված ոլորտում սերտ փոխգործակցություն ապահովելու նպատակով կկնքվեն համապատասխան միջպետական համաձայնագրեր,

3. կկատարելագործվի թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների հետ կապված գործունեությանն առնչվող հաշվետվողական և այդ գործունեության գրանցման համակարգը,

4. կկատարելագործվի թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառության հետ կապված հանցագործությունների բացահայտման նպատակով Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված իրավասու մարմինների կողմից նշված նյութերի վերահսկվող փոխադրումների և ստուգողական գնումների իրականացման, ինչպես նաև դրանց բռնագրավման համակարգը,

5. կկանխվի թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների հոսքը օրինական շրջանառությունից դեպի ապօրինի շրջանառություն, ինչպես նաև թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառությունից ստացված եկամուտների օրինականացումը,

6. կիրականացվեն ազատությունից զրկված անձանց, ինչպես նաև զինծառայողների շրջանում թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառության կանխման միջոցառումներ,

7. կապահովվի նարկոլոգիական ծառայության արդիականացումը և գիտական-տեղեկատվական պատշաճ հագեցվածությունը, ինչպես նաև կամրապնդվի թմրամոլության կանխարգելման և բուժման ոլորտում մասնագիտացած բժշկական հիմնարկների նյութատեխնիկական ներուժը,

8. կներդրվի թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառության հետ կապված իրավախախտումների, նման գործունեությանն առնչվող ֆիզիկական և իրավաբանական անձանց վերաբերյալ օպերատիվ տեղեկատվական-վերլուծական համակարգ և կապահովվի ստացված տեղեկատվության փոխանակումը համապատասխան մարմինների հետ:

**8. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ**

**Ռ-ազմավարություն 1.** Հայաստանի Հանրապետության կառավարության և ՄԱԶԾ-ի միջև շարունակել համագործակցությունը Հարավային Կովկասում թմրամիջոցների հակազդման ծրագրի հինգերորդ փուլի հետագա իրականացման ուղղությամբ:

**Ռ-ազմավարություն 2.** Թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի կազմակերպման նպատակով ապահովել լայն համագործակցություն Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված միջազգային կազմակերպությունների հետ:

**Ռ-ազմավարություն 3.** Ընդլայնել և բարելավել համագործակցությունը օտարերկրյա իրավապահ մարմինների ու մասնագիտացված միջազգային կազմակերպությունների հետ:

**Ռ-ազմավարություն 4.** Կազմակերպել

ուսուցողական հատուկ դասընթացներ, քննարկումներ, ինչպես նաև ուսուցողական այցեր թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի զարգացած համակարգերի ուսումնասիրության և Հայաստանի Հանրապետությունում դրանց աստիճանական ներդրման նպատակով:

#### Ակնկալվող արդյունքները՝

1. սույն Ծրագրի իրագործմանն օժանդակելու նպատակով կշարունակվի համագործակցությունը ՄԱԶԾ-ի հետ՝ Հարավային Կովկասում թմրամիջոցների հակազդման ծրագրի հինգերորդ փուլի շրջանակներում,

2. կապահովվի լայն համագործակցություն Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված միջազգային կազմակերպությունների, ինչպես նաև օտարերկրյա իրավապահ մարմինների ու մասնագիտացված միջազգային կազմակերպությունների հետ,

3. կկազմակերպվեն միջազգային ուսուցողական դասընթացներ, քննարկումներ, ինչպես նաև ուսուցողական այցեր թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի զարգացած համակարգեր ունեցող երկրներ:

### 9. ՄՈՆԻՏՈՐԻՆԳԸ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Ռազմավարություն 1. Ստեղծել սույն ծրագրի մոնիտորինգի և գնահատման համակարգ:

Ռազմավարություն 2. Պարբերաբար կատարել ծրագրի իրականացման արդյունքների գնահատում:

#### Ակնկալվող արդյունքները՝

1. Հայաստանի Հանրապետությունում կստեղծվի թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի ազգային ծրագրի մոնիտորինգի և գնահատման ամբողջական համակարգ,

2. Ծրագրի իրականացման արդյունքների գնահատումը կկատարվի պարբերաբար:

### 10. ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ, ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄԸ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

#### **Թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի համակարգումը՝ համապետական մակարդակով**

1. Սույն ծրագրով նախատեսված միջոցառումների ընդհանուր համակարգումն իրականացնում է Միջգերատեսչական հանձնաժողովը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության «Հայաստանի Հանրապետությունում թմրամիջոցների և հոգեներգործուն նյութերի շրջանառության կանոնակարգման ու ապօրինի շրջանառության կանխարգելման միջգերատեսչական հանձնաժողովի աշխատակարգը հաստատելու մասին» 2004 թվականի մայիսի 13-ի թիվ 725-Ն որոշմամբ իր առջև դրված հիմնական խնդիրներին համապատասխան:

2. Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից իրականացվող միջոցառումների համակարգումը կատարում են այդ մարմինների համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումները և պատասխանատու անձինք:

#### **2. Թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի համակարգումը՝ մարզային մակարդակով**

1. Մարզային մակարդակով իրականացվող միջոցառումների համակարգումը կատարում են թմրամիջոցների և հոգեներգործուն նյութերի շրջանառության կանոնակարգման ու ապօրինի շրջանառության կանխարգելման մարզային հանձնաժողովները:

2. Այդ հանձնաժողովները ստեղծվում են համապատասխան մարզպետների որոշումներով:

#### **3. Համագործակցությունը**

Ծրագրի իրականացման համագործակցող կողմերն են՝

- 1) Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությունը,
- 2) Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունը,
- 3) Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությունը,
- 4) Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունը,
- 5) Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը,
- 6) Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարությունը,
- 7) Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը,
- 8) Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը,
- 9) Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ոստիկանությունը,
- 10) Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն,
- 11) Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայությունը,
- 12) Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությունը,
- 13) Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը,
- 14) Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտը,
- 15) Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի առողջապահության հարցերի մշտական հանձնաժողովը,
- 16) զանգվածային լրատվության միջոցները,
- 17) ՄԱԶԾ-ի կողմից իրականացվող և Եվրամիության կողմից ֆինանսավորվող Հարավային Կովկասում թմրամիջոցների հակազդման ծրագրի 5-րդ փուլը,

18) հասարակական և միջազգային կազմակերպությունները:

### **11. ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՈՒՄԸ**

Սույն Ծրագրի ֆինանսավորումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից և օրենքով չարգելված այլ աղբյուրներից՝ ոչ կառավարական և մասնավոր ոլորտների հատկացումներ, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների տրամադրած աջակցություն, ներառյալ՝ Հարավային Կովկասում թմրամիջոցների հակազդման ծրագրի հինգերորդ փուլի հատկացրած ֆինանսական աջակցությունը:

Կայուն և կանխատեսելի ֆինանսավորում երաշխավորելու համար անհրաժեշտ է՝

**Ուազմավարություն 1.** Միջոցների հավաքագրում և ռեսուրսների մոբիլիզացում:

**Ուազմավարություն 2.** Միջոցների բանական օգտագործում:

**ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ**  
**2009-2012 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ**  
**ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԹՄՐԱՍՈՒՄԻ ԵՎ**  
**ԹՄՐԱՍԻՋՈՑՆԵՐԻ ԱՊՕՐԻՆԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԴԵՄ**  
**ՊԱՅՔԱՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ**

NN ը/կ	Միջոցառման անվանումը	Կատարման համար պատասխանատու մարմինը	Կատարման ժամկետը	Ֆինանսավորման աղբյուրը
1	2	3	4	5
<b>1. Թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի ոլորտը կանոնակարգող Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի ուսումնասիրությունը և ներպետական իրավական ակտերի կատարելագործումը</b>				
<b>Նպատակ 1. Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի ուսումնասիրությունը և ներպետական իրավական ակտերի կատարելագործումը</b>				
1.1.1	Իրականացնել Հայաստանի Հանրապետության՝ համապատասխան ոլորտի միջազգային պայմանագրերի, այդ թվում՝ Սիավորված Ազգերի Կազմակերպության միջազգային կոնվենցիաների, Եվրոպական հարևանության քաղաքականության գործողությունների ծրագրի դրույթների վերլուծություն և ապահովել Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում դրանց առավել ամբողջական իրացումը	ՀՀ առողջապահության նախարարություն ՀՀ արդարադատության նախարարություն ՀՀ ոստիկանություն ՀՀ գլխավոր դատախազություն ՀՀ դատական դեպարտամենտ (համաձայնությամբ)	2009-2012թթ.	ՀՀ պետական բյուջեով նախատեսված միջոցներ և ֆինանսավորման այլ աղբյուրներ
1.1.2	Իրականացնել թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի ոլորտը կանոնակարգող Հայաստանի Հանրապետության ներպետական իրավական ակտերի համակարգային վերլուծություն և անհրաժեշտության դեպքում ներկայացնել առաջարկություններ դրանցում փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ	ՀՀ առողջապահության նախարարություն ՀՀ արդարադատության նախարարություն ՀՀ ոստիկանություն ՀՀ գլխավոր դատախազություն ՀՀ դատական դեպարտամենտ (համաձայնությամբ)	2009-2012թթ.	ՀՀ պետական բյուջեով նախատեսված միջոցներ և ֆինանսավորման այլ աղբյուրներ
1.1.3	Միջոցներ ձեռնարկել Հայաստանի Հանրապետության ներպետական իրավական ակտերում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի պաշտոնական հայերեն տեքստերում թմրամիջոցների և հոգեմետ նյութերի անվանումների հասկացությունները միասնականացնելու ուղղությամբ	ՀՀ առողջապահության նախարարություն ՀՀ արդարադատության նախարարություն ՀՀ ոստիկանություն ՀՀ գլխավոր դատախազություն ՀՀ արտաքին գործերի նախարարություն ՀՀ-ում թմրամիջոցների հսկման մշտական հանձնաժողով	2009-2010թթ.	ՀՀ պետական բյուջեով նախատեսված միջոցներ և ֆինանսավորման այլ աղբյուրներ
<b>Նպատակ 2. Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի և ներպետական իրավական ակտերի արդյունավետ կիրառելիության ապահովումը</b>				

1.2.1	Կատարել Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի և ներպետական իրավական ակտերի՝ թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարին առնչվող դրույթների կիրառման պրակտիկայի վերլուծություն և ներկայացնել առաջարկություններ դրանց կատարելագործման վերաբերյալ	ՀՀ առողջապահության նախարարություն ՀՀ արդարադատության նախարարություն ՀՀ ոստիկանություն ՀՀ գլխավոր դատախազություն ՀՀ դատական դեպարտամենտ (համաձայնությամբ)	2009-2012թթ.	ՀՀ պետական բյուջեով նախատեսված միջոցներ և ֆինանսավորման այլ աղբյուրներ
1.2.2	Մշակել թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի ոլորտի իրավակիրառ գործունեության հետ կապված մեթոդական ուղեցույցներ՝ Հայաստանի Հանրապետության դատարանների, իրավապահ և այլ շահագրգիռ մարմինների ու կազմակերպությունների համար	ՀՀ արդարադատության նախարարություն ՀՀ ոստիկանություն ՀՀ գլխավոր դատախազություն ՀՀ դատական դեպարտամենտ (համաձայնությամբ)	2009-2011թթ.	ՀՀ պետական բյուջեով նախատեսված միջոցներ և ֆինանսավորման այլ աղբյուրներ
1.2.3	Ապահովել «Թմրամիջոցների և հոգեներգործուն նյութերի ապօրինի շրջանառության դեմ պայքարի մասին» 1988 թվականի Սիավորված Ազգերի Կազմակերպության միջազգային կոնվենցիայով նախատեսված իրավական փոխօգնության հարցերով ներպետական իրավասու մարմնի նշանակումը	ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ արտաքին գործերի նախարարություն	2009-2010թ.	ՀՀ պետական բյուջեով նախատեսված միջոցներ և ֆինանսավորման այլ աղբյուրներ
1.2.4	Իրականացնել Հայաստանի Հանրապետության պետական սահմանների արդյունավետ վերահսկողությանն առնչվող իրավակիրառ գործունեության ուսումնասիրություն, անհրաժեշտության դեպքում ներկայացնել առաջարկություններ դրա կատարելագործման ուղղությամբ	ՀՀ ոստիկանություն ՀՀ գլխավոր դատախազություն ՀՀ պետական եկամտոտների կոմիտե ՀՀ ազգային անվտանգության ծառայություն	2009-2012թթ.	ՀՀ պետական բյուջեով նախատեսված միջոցներ և ֆինանսավորման այլ աղբյուրներ

**2. Թմրամիջոցների և թմրամոլության վերաբերյալ տեղեկատվական միասնական համակարգի ներդրումը և կատարելագործումը**

**Նպատակ 1. Թմրամիջոցների և թմրամոլության վերաբերյալ տեղեկատվական, ինչպես նաև թմրամոլության մոնիտորինգի և գնահատման միասնական համակարգի ներդրումն ու կատարելագործումը**

2.1.1	Կատարել փոփոխություններ ակադեմիկոս Ս.Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտի կանոնադրությունում՝ դրանում ամրագրելով թմրամիջոցների և թմրամոլության մոնիտորինգի կենտրոնի իրավական կարգավիճակը սահմանող նորմեր	ՀՀ առողջապահության նախարարություն	2009թ.	Լրացուցիչ ֆինանսական հատկացումներ չեն պահանջվում
2.1.2	Ապահովել համապատասխան մարմինների և կազմակերպությունների կողմից թմրամիջոցների վերաբերյալ տվյալների ժամանակին տրամադրումը թմրամիջոցների և թմրամոլության մոնիտորինգի կենտրոնին: Ապահովել համապատասխան պետական մարմինների և հասարակական կազմակերպությունների ակտիվ ներգրավվածությունը այդ գործընթացին	ՀՀ առողջապահության նախարարություն ՀՀ արդարադատության նախարարություն ՀՀ գլխավոր դատախազություն ՀՀ ոստիկանություն ՀՀ ազգային անվտանգության ծառայություն ՀՀ պետական եկամտոտների կոմիտե ՀՀ դատական դեպարտամենտ (համաձայնությամբ)	2009-2012թթ.	ՀՀ պետական բյուջեով նախատեսված միջոցներ

2.1.3	Ուսումնասիրել և աստիճանաբար ներդնել թմրամիջոցների վերաբերյալ համաճարակաբանական տեղեկատվության հավաքագրման, վերլուծության և տրամադրման միջազգայնորեն ճանաչված լավագույն եղանակներն ու փորձը՝ հիմք ընդունելով թմրամիջոցների և թմրամոլության մոնիտորինգի եվրոպական կենտրոնի ուղեցույցները:	ՀՀ առողջապահության նախարարություն	2009-2012թթ.	ՀՀ պետական բյուջեով նախատեսված միջոցներ և ֆինանսավորման այլ աղբյուրներ
2.1.4	Իրականացնել հետազոտություն բնակչության շրջանում՝ թմրամիջոցների գործածման բնույթը և տարածվածությունը գնահատելու նպատակով	ՀՀ առողջապահության նախարարություն	2009-2012թթ.	ՀՀ պետական բյուջեով նախատեսված միջոցներ և ֆինանսավորման այլ աղբյուրներ
2.1.5	Բացահայտել բնակչության շրջանում թմրամիջոցների խնդրահարույց գործածման բնույթը և տարածվածությունը	ՀՀ առողջապահության նախարարություն ՀՀ ոստիկանություն	2009-2012թթ.	ՀՀ պետական բյուջեով նախատեսված միջոցներ և ֆինանսավորման այլ աղբյուրներ
2.1.6	Թմրամիջոցների հետ կապված վարակիչ հիվանդությունների (հեպատիտ C) նկատմամբ սահմանել պետական վիճակագրական հաշվետվության համակարգ	ՀՀ առողջապահության նախարարություն	2009թ.	ՀՀ պետական բյուջեով նախատեսված միջոցներ
2.1.7	Պարզել թմրամիջոցների գործածմամբ պայմանավորված մահացության ցուցանիշները	ՀՀ առողջապահության նախարարություն	2009-2012թթ.	ՀՀ պետական բյուջեով նախատեսված միջոցներ և ֆինանսավորման այլ աղբյուրներ
2.1.8	Մշակել չափորոշիչներ՝ հերձվողի մարմնի հյուսվածքներում և(կամ) կենսահեղուկներում հայտնաբերված թմրամիջոցներից առաջացած մահվան պատճառը բացահայտելու համար	ՀՀ առողջապահության նախարարություն	2009թ.	Լրացուցիչ ֆինանսական հատկացումներ չեն պահանջվում
2.1.9	Սահմանել ախտաբանաանատոմիական հերձումների դեպքում հերձվողի հյուսվածքներում և(կամ) կենսահեղուկներում թմրամիջոցների հայտնաբերմանն ուղղված տոքսիկոլոգիական հետազոտության պարտադիր իրականացման կարգ	ՀՀ առողջապահության նախարարություն	2009թ.	Լրացուցիչ ֆինանսական հատկացումներ չեն պահանջվում
2.1.10	Ապահովել թմրամիջոցների և թմրամոլության վերաբերյալ տեղեկատվական համակարգի հատուկ պաշտպանությունը և խորհրդապահական (կոնֆիդենցիալ) բնույթը	ՀՀ առողջապահության նախարարություն	2009-2012թթ.	ՀՀ պետական բյուջեով նախատեսված միջոցներ
2.1.11	Կազմակերպել թմրամիջոցների և թմրամոլության մոնիթորինգի և համաճարակաբանության ոլորտի մասնագետների վերապատրաստման դասընթացներ, սեմինարներ, ինչպես նաև ուսուցողական ուղևորություններ՝ նշված ոլորտի միջազգային լավագույն փորձի ուսումնասիրության և Հայաստանի Հանրապետությունում դրա աստիճանական ներդրման ապահովման նպատակով	ՀՀ առողջապահության նախարարություն	2009-2012թթ.	ՀՀ պետական բյուջեով նախատեսված միջոցներ և ֆինանսավորման այլ աղբյուրներ
<b>Նպատակ 2. Թմրամիջոցների և թմրամոլության ոլորտի գիտական մոտեցումների արդիականացումը, տվյալ ոլորտի համաշխարհային գիտական փորձի ներդրման ապահովումը</b>				
2.2.1	Մշակել և իրականացնել հետազոտություններ՝ թմրամիջոցների գործածման իրավիճակի բացահայտման, միտումների և զարգացումների գնահատման և դրանց պատճառահետևանքային կապի վեր հանման, ինչպես նաև հետագա գործունեության ոլորտների նախանշման նպատակով	ՀՀ առողջապահության նախարարություն	2009-2012թթ.	ՀՀ պետական բյուջեով նախատեսված միջոցներ և ֆինանսավորման այլ աղբյուրներ



2.2.2	Ուսումնասիրել քննարկվող ոլորտի համաշխարհային առաջատար գիտական փորձը և միջոցներ ձեռնարկել Հայաստանի Հանրապետությունում դրա ներդրման ուղղությամբ	ՀՀ առողջապահության նախարարություն	2009-2012թթ.	ՀՀ պետական բյուջեով նախատեսված միջոցներ և ֆինանսավորման այլ աղբյուրներ
<b>3. Թմրամոլության առաջնային կանխարգելումը</b>				
<b>Նպատակ 1. Թմրամոլության կանխարգելումը դեռահասների և երիտասարդների շրջանում</b>				
3.1.1	Մշակել և ընդունել անհրաժեշտ իրավական ակտեր՝ դեռահասների և երիտասարդների շրջանում թմրամոլության կանխարգելման միջոցառումների կանոնակարգման համար	ՀՀ առողջապահության նախարարություն ՀՀ կրթության և գիտության նախարարություն	2009-2010թթ.	ՀՀ պետական բյուջեով նախատեսված միջոցներ և ֆինանսավորման այլ աղբյուրներ
	Դեռահասների ու երիտասարդների համար մշակել «Հավասարը՝ հավասարին» մեթոդով ուսուցման ձեռնարկ և անհրաժեշտ ուսումնական նյութեր	ՀՀ առողջապահության նախարարություն ՀՀ կրթության և գիտության նախարարություն	2009-2012թթ.	ՀՀ պետական բյուջեով նախատեսված միջոցներ և ֆինանսավորման այլ աղբյուրներ
3.1.2	Զարգացնել դեռահասների և երիտասարդների շրջանում «Հավասարը՝ հավասարին» մեթոդով ուսուցման համակարգը և յուրաքանչյուր տարի իրականացնել ուսուցում այդ համակարգով	ՀՀ առողջապահության նախարարություն ՀՀ կրթության և գիտության նախարարություն	2009-2012թթ.	ՀՀ պետական բյուջեով նախատեսված միջոցներ և ֆինանսավորման այլ աղբյուրներ
	Անցկացնել սեմինար-խորհրդակցություններ՝ ընդհանուր կրթական և «Հավասարը՝ հավասարին» մեթոդով ուսուցման ծրագրերի միջև գործնական համագործակցություն ապահովելու նպատակով	ՀՀ առողջապահության նախարարություն ՀՀ կրթության և գիտության նախարարություն	2009-2012թթ.	ՀՀ պետական բյուջեով նախատեսված միջոցներ և ֆինանսավորման այլ աղբյուրներ
3.1.3	Իրականացնել դեռահասների և երիտասարդների արտաուսումնական գործունեության և հանգստի հետ կապված ծրագրեր՝ նրանց մոտ թմրամիջոցների գործածման նկատմամբ սոցիալական անձեռնմխելիության խթանման նպատակով	ՀՀ կրթության և գիտության նախարարություն	2009-2012թթ.	ՀՀ պետական բյուջեով նախատեսված միջոցներ և ֆինանսավորման այլ աղբյուրներ
3.1.4	Հանրակրթական դպրոցների և ուսումնական այլ հաստատությունների ուսումնական ծրագրերում ընդգրկել թմրամոլության կանխարգելմանն առնչվող դասաժամեր	ՀՀ կրթության և գիտության նախարարություն	2009-2012թթ.	ՀՀ պետական բյուջեով նախատեսված միջոցներ
3.1.5	Կազմակերպել սեմինարներ, վերապատրաստման դասընթացներ հանրակրթական դպրոցներում և ուսումնական այլ հաստատություններում համապատասխան առարկաներ դասավանդող անձանց թմրամոլության և դրա կանխարգելմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ իրագրության մակարդակի բարձրացման նպատակով	ՀՀ կրթության և գիտության նախարարություն	2009-2012թթ.	ՀՀ պետական բյուջեով նախատեսված միջոցներ և ֆինանսավորման այլ աղբյուրներ
	Երիտասարդական կենտրոնների աշխատակիցների համար անցկացնել համապատասխան սեմինար-վարժանքներ	ՀՀ առողջապահության նախարարություն ՀՀ կրթության և գիտության նախարարություն	2009-2012թթ.	ՀՀ պետական բյուջեով նախատեսված միջոցներ և ֆինանսավորման այլ աղբյուրներ
3.1.6	Մշակել և դեռահաս երեխաների օրինական ներկայացուցիչներին (ծնողներ, որդեգրողներ, խնամակալներ, հոգաբարձուներ) անվճար տրամադրել թմրամոլության և դրա հասցրած վնասի վերաբերյալ գրքույկներ և ուսումնական այլ նյութեր՝ նրանց իրագրության բարձրացման և թմրամոլության կանխարգելման գործընթացին նրանց ակտիվ ներգրավվածության ապահովման նպատակով	ՀՀ առողջապահության նախարարություն ՀՀ կրթության և գիտության նախարարություն	2009-2010թթ.	ՀՀ պետական բյուջեով նախատեսված միջոցներ և ֆինանսավորման այլ աղբյուրներ

3.1.7	Ապահովել դեռահասների և երիտասարդների շրջանում թմրամոլության կանխարգելման նախաձեռնությունների և հասարակական կազմակերպությունների ներգրավումը	ՀՀ առողջապահության նախարարություն ՀՀ կրթության և գիտության նախարարություն	2009-2012թթ.	ՀՀ պետական բյուջեով նախատեսված միջոցներ
<b>Նպատակ 2. Թմրամոլության կանխարգելումը ազատությունից զրկված անձանց շրջանում</b>				
3.2.1	Մշակել և ընդունել անհրաժեշտ իրավական ակտեր՝ ձեռքարկված անձանց պահելու վայրերում և քրեակատարողական հիմնարկներում թմրամոլության կանխարգելման միջոցառումների կանոնակարգման համար	ՀՀ արդարադատության նախարարություն ՀՀ ոստիկանություն	2009-2010թթ.	ՀՀ պետական բյուջեով նախատեսված միջոցներ և ֆինանսավորման այլ աղբյուրներ
3.2.2	Ազատությունից զրկված անձանց շրջանում ներդնել «Հավասարը՝ հավասարին» մեթոդով ուսուցման համակարգ և յուրաքանչյուր տարի իրականացնել ուսուցում այդ համակարգով	ՀՀ արդարադատության նախարարություն	2009-2012թթ.	ՀՀ պետական բյուջեով նախատեսված միջոցներ և ֆինանսավորման այլ աղբյուրներ
3.2.3	Մշակել և ընդունել անհրաժեշտ իրավական ակտեր՝ ազատությունից զրկված անձանց թմրամոլության ու դրա հասցրած վնասի հետ կապված կամավոր խորհրդատվություն և հետազոտություն տրամադրելու վերաբերյալ	ՀՀ արդարադատության նախարարություն	2009-2010թթ.	ՀՀ պետական բյուջեով նախատեսված միջոցներ և ֆինանսավորման այլ աղբյուրներ
3.2.4	Ձեռքարկված անձանց պահելու վայրերի և քրեակատարողական հիմնարկների անձնակազմներին, ինչպես նաև ազատությունից զրկված անձանց անվճար տրամադրել տեղեկատվական-կրթական նյութեր թմրամոլության և դրա հասցրած վնասի, ինչպես նաև նշվածի հետ կապված կամավոր խորհրդատվության և հետազոտության վերաբերյալ	ՀՀ արդարադատության նախարարություն ՀՀ ոստիկանություն	2009-2012թթ.	ՀՀ պետական բյուջեով նախատեսված միջոցներ և ֆինանսավորման այլ աղբյուրներ
3.2.5	Կազմակերպել սեմինար-խորհրդակցություններ, հատուկ դասընթացներ ձեռքարկված անձանց պահելու վայրերի և քրեակատարողական հիմնարկների կրտսեր և ավագ սպայակազմի համար՝ այդ հիմնարկներում թմրամոլության կանխարգելման ծրագրերի իրականացման արդյունավետության բարձրացման նպատակով	ՀՀ արդարադատության նախարարություն ՀՀ ոստիկանություն	2009-2012թթ.	ՀՀ պետական բյուջեով նախատեսված միջոցներ և ֆինանսավորման այլ աղբյուրներ
3.2.6	Յուրաքանչյուր տարի ձեռքարկված անձանց պահելու վայրերի և քրեակատարողական հիմնարկների անձնակազմի համար կազմակերպել ուսուցողական սեմինարներ «Հավասարը՝ հավասարին» մեթոդով ուսուցման և թմրամոլության կանխարգելման իրականացման համար	ՀՀ արդարադատության նախարարություն ՀՀ ոստիկանություն	2009-2012թթ.	ՀՀ պետական բյուջեով նախատեսված միջոցներ և ֆինանսավորման այլ աղբյուրներ
3.2.7	Կազմակերպել ձեռքարկված անձանց պահելու վայրերի և քրեակատարողական հիմնարկների ավագ սպայակազմի ուսուցողական ուղևորություններ նշված հիմնարկներում թմրամոլության կանխարգելման ծրագրերի հաջող իրականացման փորձ ունեցող երկրներ	ՀՀ արդարադատության նախարարություն ՀՀ ոստիկանություն	2009-2012թթ.	ՀՀ պետական բյուջեով նախատեսված միջոցներ և ֆինանսավորման այլ աղբյուրներ
<b>Նպատակ 3. Թմրամոլության կանխարգելումը Հայաստանի Հանրապետության ժամկետային զինծառայողների շրջանում</b>				
3.3.1	Մշակել և ընդունել անհրաժեշտ իրավական ակտեր՝ ժամկետային զինծառայողների շրջանում թմրամոլության կանխարգելման միջոցառումների կանոնակարգման համար	ՀՀ պաշտպանության նախարարություն	2009-2010թթ.	ՀՀ պետական բյուջեով նախատեսված միջոցներ և ֆինանսավորման այլ աղբյուրներ

3.3.2	Ժամկետային զինծառայողների շրջանում ներդրել «Հավասարը՝ հավասարին» մեթոդով ուսուցման համակարգը և յուրաքանչյուր տարի իրականացնել ուսուցում այդ համակարգով	ՀՀ պաշտպանության նախարարություն	2009-2012թթ.	ՀՀ պետական բյուջեով նախատեսված միջոցներ և ֆինանսավորման այլ աղբյուրներ
3.3.3	Մշակել և ընդունել անհրաժեշտ իրավական ակտեր՝ ժամկետային զինծառայողներին թմրամոլության ու դրա հասցրած վնասի հետ կապված կամավոր խորհրդատվություն և հետազոտություն տրամադրելու վերաբերյալ	ՀՀ պաշտպանության նախարարություն	2009-2010թթ.	ՀՀ պետական բյուջեով նախատեսված միջոցներ և ֆինանսավորման այլ աղբյուրներ
3.3.4	Ժամկետային զինծառայողներին անվճար տրամադրել տեղեկատվական-կրթական նյութեր թմրամոլության և դրա հասցրած վնասի, ինչպես նաև նշվածի հետ կապված կամավոր խորհրդատվության և հետազոտության վերաբերյալ	ՀՀ պաշտպանության նախարարություն	2009-2012թթ.	ՀՀ պետական բյուջեով նախատեսված միջոցներ և ֆինանսավորման այլ աղբյուրներ
3.3.5	Կազմակերպել սեմինար-խորհրդակցություններ, հատուկ դասընթացներ զինված ուժերի և այլ զորքերի սպայական կազմի համար՝ դրանցում թմրամոլության կանխարգելման ծրագրերի իրականացման արդյունավետության բարձրացման նպատակով	ՀՀ պաշտպանության նախարարություն	2009-2012թթ.	ՀՀ պետական բյուջեով նախատեսված միջոցներ և ֆինանսավորման այլ աղբյուրներ
3.3.6	Յուրաքանչյուր տարի զինված ուժերի և այլ զորքերի սպայական կազմի համար կազմակերպել ուսուցողական սեմինարներ «Հավասարը՝ հավասարին» մեթոդով ուսուցման և թմրամոլության կանխարգելման իրականացման համար	ՀՀ պաշտպանության նախարարություն	2009-2012թթ.	ՀՀ պետական բյուջեով նախատեսված միջոցներ և ֆինանսավորման այլ աղբյուրներ
3.3.7	Կազմակերպել զինված ուժերի և այլ զորքերի սպայական կազմի ուղևորություններ այդ ոլորտում թմրամոլության կանխարգելման ծրագրերի հաջող իրականացման փորձ ունեցող երկրներ	ՀՀ պաշտպանության նախարարություն	2009-2012թթ.	ՀՀ պետական բյուջեով նախատեսված միջոցներ և ֆինանսավորման այլ աղբյուրներ
<b>Նպատակ 4. Թմրամոլության կանխարգելումը զանգվածային լրատվության միջոցների օգնությամբ</b>				
3.4.1	Հանրային և մասնավոր հեռուստառադիոընկերությունների հետ համատեղ մշակել երկարաժամկետ կայուն աշխատանքային կանոնակարգ՝ ուղղված հանրապետությունում թմրամոլության կանխարգելման արտացոլմանը, այդ թվում՝ հատուկ հաղորդումների, թմրամոլության հասցրած վնասի վերաբերյալ հայտարարությունների, թեմատիկ ֆիլմերի շարունակական հեռարձակման միջոցով	Միջգերատեսչական հանձնաժողով	2009-2010թթ.	Լրացուցիչ ֆինանսական հատկացումներ չեն պահանջվում
3.4.2	Թմրամոլության կանխարգելման նպատակով իրականացվող միջոցառումները պարբերաբար արտացոլել զանգվածային լրատվության միջոցներում, կանոնավոր դարձնել Հայաստանի Հանրապետությունում թմրամոլության կանխարգելման համար պատասխանատու մարմինների և կազմակերպությունների մասնակցությունը հեռուստառադիոհաղորդումներին, մամլո ասուլիսներին, ինչպես նաև՝ հողվածներով	Միջգերատեսչական հանձնաժողով	2009-2012թթ.	ՀՀ պետական բյուջեով նախատեսված միջոցներ և ֆինանսավորման այլ աղբյուրներ
3.4.3	Կազմակերպել հեռուստառադիոհաղորդումների հատուկ շարքի հեռարձակում՝ ցուցադրելով թեմատիկ տեսահոլովակներ: Օգտագործել մամուլը և զանգվածային լրատվության մյուս միջոցները՝ թմրամոլության և դրա հասցրած վնասի վերաբերյալ բնակչության իրազեկության բարձրացման համար	Միջգերատեսչական հանձնաժողով	2009-2012թթ.	ՀՀ պետական բյուջեով նախատեսված միջոցներ և ֆինանսավորման այլ աղբյուրներ

3.4.4	Ստեղծել համակարգչային համացանցի հանգույց և մշտապես թարմացնել դրանում տեղ գտած՝ Հայաստանի Հանրապետությունում թմրամոլության դեմ պայքարն արտացոլող նյութերը	Միջգերատեսչական հանձնաժողով	2009-2010թթ.	ՀՀ պետական բյուջեով նախատեսված միջոցներ և ֆինանսավորման այլ աղբյուրներ
3.4.5	Թմրամոլության հետ կապված հարցերի, դրա դեմ պայքարի մոտեցումների վերաբերյալ լրագրողների իրազեկության բարձրացման նպատակով կազմակերպել սեմինարներ, դասընթացներ	Միջգերատեսչական հանձնաժողով	2009-2012թթ.	ՀՀ պետական բյուջեով նախատեսված միջոցներ և ֆինանսավորման այլ աղբյուրներ
<b>4. Թմրամիջոցներ կամ հոգեմետ նյութեր գործածող անձանց տրամադրվող բժշկական և սոցիալ-հոգեբանական ծառայությունները</b>				
<b>Նպատակ 1. Թմրամիջոցներ կամ հոգեմետ նյութեր գործածող անձանց վաղ հայտնաբերումը և ուղեգրումը համապատասխան բուժաստատություններ</b>				
4.1.1	Ապահովել սերտ համագործակցություն թմրամիջոցներ կամ հոգեմետ նյութեր գործածող անձանց շրջանում փոխօգնության, խնամքի, աջակցության և կանխարգելման ծրագրեր իրականացնող կազմակերպությունների և նարկոլոգիական ծառայություն մատուցող բժշկական հաստատությունների (այսուհետ՝ նարկոլոգիական բուժաստատություններ) միջև	ՀՀ առողջապահության նախարարություն	2009-2012թթ.	Լրացուցիչ ֆինանսական հատկացումներ չեն պահանջվում
4.1.2	Ապահովել սերտ համագործակցություն առողջության առաջնային պահպանման հաստատությունների և նարկոլոգիական բուժաստատությունների միջև	ՀՀ առողջապահության նախարարություն	2009-2012թթ.	Լրացուցիչ ֆինանսական հատկացումներ չեն պահանջվում
4.1.3	Անցկացնել սեմինարներ, խորհրդակցություններ, ինչպես նաև հատուկ դասընթացներ թմրամոլությամբ հիվանդ անձանց նկատմամբ խարանի և խտրականության վերացման ուղղությամբ	ՀՀ առողջապահության նախարարություն ՀՀ արդարադատության նախարարություն ՀՀ ոստիկանություն ՀՀ կրթության և գիտության նախարարություն	2009-2012թթ.	ՀՀ պետական բյուջեով նախատեսված միջոցներ և ֆինանսավորման այլ աղբյուրներ
4.1.4	Միջոցներ ձեռնարկել նարկոլոգիական բուժաստատություններից դուրս խորհրդատվական և հոգեբանական աջակցության կենտրոններ հիմնելու ուղղությամբ: Այդ կենտրոնները պետք է ապահովեն թմրամոլության հետ կապված կամավոր և անանուն խորհրդատվություն, հոգեբանական աջակցություն, անհրաժեշտության դեպքում՝ նաև ուղեգրեն համապատասխան նարկոլոգիական բուժաստատություններ	ՀՀ առողջապահության նախարարություն	2009-2012թթ.	ՀՀ պետական բյուջեով նախատեսված միջոցներ և ֆինանսավորման այլ աղբյուրներ
4.1.5	Ապահովել հասարակական կազմակերպությունների ներգրավումը թմրամիջոցներ կամ հոգեմետ նյութեր գործածող անձանց շրջանում խորհրդատվական և սոցիալ-հոգեբանական աջակցության, նրանց բուժման և վերականգնման ծրագրերի բոլոր փուլերում	ՀՀ առողջապահության նախարարություն ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	2009-2012թթ.	ՀՀ պետական բյուջեով նախատեսված միջոցներ
<b>Նպատակ 2. Թմրամիջոցներ կամ հոգեմետ նյութեր գործածող անձանց՝ ժամանակակից և գիտականորեն հիմնավորված բուժման, վերականգնման և վնասի նվազեցման ծառայությունների տրամադրումը</b>				
4.2.1	Ձեռնարկել միջոցներ նարկոլոգիական բուժաստատությունների վերանորոգման, հիվանդանոցային պայմանների բարեկարգման և համապատասխան բուժարքավորումներով համալրման ուղղությամբ	ՀՀ առողջապահության նախարարություն	2009-2012թթ.	ՀՀ պետական բյուջեով նախատեսված միջոցներ և ֆինանսավորման այլ աղբյուրներ

4.2.2	Չեռնարկել միջոցներ նարկոլոգիայի ոլորտի մասնագետներ պատրաստող հաստատությունների գիտական և կրթական մակարդակի բարձրացման ուղղությամբ	ՀՀ առողջապահության նախարարություն	2009-2012թթ.	ՀՀ պետական բյուջեով նախատեսված միջոցներ և ֆինանսավորման այլ աղբյուրներ
4.2.3	Ապահովել նարկոլոգիայի ոլորտի բժիշկների և միջին բուժանձնակազմի պատշաճ շարունակական կրթությունը, մասնագիտացումը և վերապատրաստումները	ՀՀ առողջապահության նախարարություն	2009-2012թթ.	ՀՀ պետական բյուջեով նախատեսված միջոցներ և ֆինանսավորման այլ աղբյուրներ
4.2.4	Ապահովել հոգեբաններ և սոցիալական ոլորտի աշխատողներ պատրաստող և (կամ) վերապատրաստում ապահովող գիտակրթական հաստատությունների կողմից համապատասխան մասնագետների ուղեգրումը նարկոլոգիական և վնասի նվազեցման ծրագրեր իրականացնող կազմակերպություններ	ՀՀ առողջապահության նախարարություն	2009-2012թթ.	ՀՀ պետական բյուջեով նախատեսված միջոցներ և ֆինանսավորման այլ աղբյուրներ
4.2.5	Ապահովել նարկոլոգիական բուժհաստատությունների կողմից բուժման տարբեր ձևերի և (կամ) մեթոդների կիրառումը (ապաթունավորում, փոխարինող բուժում, հոգեթերապիա արդյունավետ միջոցառումներ և ավանդական բուժում)	ՀՀ առողջապահության նախարարություն	2009-2012թթ.	ՀՀ պետական բյուջեով նախատեսված միջոցներ և ֆինանսավորման այլ աղբյուրներ
	Աջակցել վնասի նվազեցման ծրագրեր իրականացնող կազմակերպությունների ներուժի զարգացմանը և դրանց կողմից թմրամիջոցներ կամ հոգեմետ նյութեր գործածող անձանց տրամադրվող ծառայությունների լիարժեքության ապահովմանը (երակների խնամք, գերդոզավորումների կանխարգելում, արյան միջոցով փոխանցվող վարակների կանխարգելում և այլն)	ՀՀ առողջապահության նախարարություն	2009-2012թթ.	ՀՀ պետական բյուջեով նախատեսված միջոցներ և ֆինանսավորման այլ աղբյուրներ
<b>Նպատակ 3. Թմրամիջոցներից կամ հոգեմետ նյութերից կախվածությամբ անձանց հետբուժական սոցիալական վերինտեղումը</b>				
4.3.1	Մշակել տեղական ինքնակառավարման մարմինների և համայնքային կազմակերպությունների կողմից իրականացվելիք՝ թմրամիջոցներ կամ հոգեմետ նյութեր գործածող անձանց համար նախատեսված սոցիալական աջակցության և զբաղվածության ծրագրեր	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ՀՀ տարածքային կառավարման նախարարություն	2009-2012թթ.	ՀՀ պետական բյուջեով նախատեսված միջոցներ և ֆինանսավորման այլ աղբյուրներ
<b>5. Թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառության կանխումը</b>				
<b>Նպատակ 1. Թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի առաջարկի կանխումը</b>				
5.1.1	«Պետական սահմանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին և այլ իրավական ակտերին համապատասխան ապահովել սահմանային արդյունավետ վերահսկողություն, ինչպես նաև իրականացնել սահմանների համալիր կառավարման ծրագրեր՝ Հայաստանի Հանրապետություն թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի ներմուծումը կանխելու նպատակով	ՀՀ ազգային անվտանգության ծառայություն ՀՀ պետական եկամուտների կոմիտե	2009-2012թթ.	ՀՀ պետական բյուջեով նախատեսված միջոցներ և ֆինանսավորման այլ աղբյուրներ
5.1.2	Օտարերկրյա պետություններից Հայաստանի Հանրապետություն թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի ներմուծումը կանխելու և նշված ոլորտում սերտ փոխգործակցություն ապահովելու նպատակով միջոցներ ձեռնարկել համապատասխան միջպետական համաձայնագրեր կնքելու ուղղությամբ	ՀՀ արտաքին գործերի նախարարություն ՀՀ ոստիկանություն ՀՀ առողջապահության նախարարություն ՀՀ արդարադատության նախարարություն	2009-2012թթ.	ՀՀ պետական բյուջեով նախատեսված միջոցներ

5.1.3	Մշակել և ընդունել թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների վերահսկվող փոխադրումների և ստուգողական գնումների իրականացման կարգը, ինչպես նաև նշված նյութերի բռնագրավման համակարգը կանոնակարգող իրավական ակտեր	ՀՀ գլխավոր դատախազություն ՀՀ ոստիկանություն ՀՀ պետական եկամուտների կոմիտե ՀՀ ազգային անվտանգության ծառայություն ՀՀ առողջապահության նախարարություն ՀՀ արդարադատության նախարարություն	2009-2012թթ.	ՀՀ պետական բյուջեով նախատեսված միջոցներ և ֆինանսավորման այլ աղբյուրներ
5.1.4	Մշակել և ընդունել թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների հետ կապված գործունեությանն առնչվող հաշվետվողական և այդ գործունեության գրանցման համակարգը կատարելագործող իրավական ակտեր, գործող ակտերում կատարել անհրաժեշտ փոփոխություններ	ՀՀ գլխավոր դատախազություն ՀՀ ոստիկանություն ՀՀ առողջապահության նախարարություն ՀՀ արդարադատության նախարարություն	2009-2012թթ.	ՀՀ պետական բյուջեով նախատեսված միջոցներ և ֆինանսավորման այլ աղբյուրներ
5.1.5	Կատարելագործել օրինական շրջանառությունից դեպի ապօրինի շրջանառություն թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների հոսքի կանխումը կանոնակարգող իրավական ակտերը	ՀՀ գլխավոր դատախազություն ՀՀ ոստիկանություն ՀՀ առողջապահության նախարարություն ՀՀ արդարադատության նախարարություն	2009-2012թթ.	ՀՀ պետական բյուջեով նախատեսված միջոցներ և ֆինանսավորման այլ աղբյուրներ
5.1.6	Ակտիվացնել ազատությունից զրկված անձանց շրջանում թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառության կանխման միջոցառումները	ՀՀ արդարադատության նախարարություն ՀՀ ոստիկանություն	2009-2012թթ.	Լրացուցիչ ֆինանսական հատկացումներ չեն պահանջվում
5.1.7	Ակտիվացնել զինձառայողների շրջանում թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառության կանխման միջոցառումները	ՀՀ պաշտպանության նախարարություն	2009-2012թթ.	Լրացուցիչ ֆինանսական հատկացումներ չեն պահանջվում
5.1.8	Ապահովել թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառությունից ստացված եկամուտների օրինականացման կանխմանն ուղղված միջոցների անշեղ իրացումը	ՀՀ գլխավոր դատախազություն ՀՀ ոստիկանություն ՀՀ ազգային անվտանգության ծառայություն ՀՀ կենտրոնական բանկ (համաձայնությամբ)	2009-2012թթ.	ՀՀ պետական բյուջեով նախատեսված միջոցներ և ֆինանսավորման այլ աղբյուրներ

**Նպատակ 2. Իրավասու մարմինների և կազմակերպությունների կարողությունների հզորացումը և նրանց միջև համագործակցության ամրապնդումը**

5.2.1	Ապահովել իրավապահ և իրավասու այլ պետական մարմինների նյութատեխնիկական և կադրային պատշաճ հագեցվածությունը	ՀՀ արդարադատության նախարարություն ՀՀ առողջապահության նախարարություն ՀՀ ոստիկանություն ՀՀ գլխավոր դատախազություն ՀՀ ազգային անվտանգության ծառայություն ՀՀ պետական եկամուտների կոմիտե	2009-2012թթ.	ՀՀ պետական բյուջեով նախատեսված միջոցներ և ֆինանսավորման այլ աղբյուրներ
5.2.2	Ապահովել նարկոլոգիական ծառայության արդիականացումը և գիտական-տեղեկատվական պատշաճ հագեցվածությունը, ինչպես նաև թմրամոլության կանխարգելման և բուժման ոլորտում մասնագիտացած բժշկական հիմնարկների նյութատեխնիկական ներուժի ամրապնդումը	ՀՀ առողջապահության նախարարություն	2009-2012թթ.	ՀՀ պետական բյուջեով նախատեսված միջոցներ և ֆինանսավորման այլ աղբյուրներ



5.2.3	Իրավապահ մարմինների համակարգում գործող հատուկ ուսումնական հաստատությունների կազմում ստեղծել թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառության, թմրամոլության կանխարգելման հետ կապված հարցերն ուսումնասիրող ստորաբաժանումներ	ՀՀ ոստիկանություն ՀՀ գլխավոր դատախազություն ՀՀ ազգային անվտանգության ծառայություն ՀՀ պետական եկամուտների կոմիտե	2009-2012թթ.	ՀՀ պետական բյուջեով նախատեսված միջոցներ և ֆինանսավորման այլ աղբյուրներ
5.2.4	Ալտիվացնել աշխատանքները Հայաստանի Հանրապետության տարածքում հսկողության տակ գտնվող թմրամիջոցների և հոգեմետ նյութերի ու դրանց ստացման բաղադրիչների ցանկերի և ցուցակների կազմման սկզբունքների, կառուցվածքի ու դրանցում ներառվելիք՝ ապօրինի շրջանառության մեջ հայտնաբերված թմրամիջոցների մասնաչափերի վերաբերյալ առաջարկություններ մշակելու ուղղությամբ	ՀՀ-ում թմրամիջոցների հսկման մշտական հանձնաժողով	2009-2012թթ.	Լրացուցիչ ֆինանսական հատկացումներ չեն պահանջվում
5.2.5	Ապահովել թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառության հետ կապված իրավախախտումների, նման գործունեությանն առնչվող ֆիզիկական և իրավաբանական անձանց վերաբերյալ օպերատիվ տեղեկատվական-վերլուծական համակարգի ներդրումը և ստացված տեղեկատվության փոխանակման ապահովումը համապատասխան մարմինների հետ	ՀՀ ոստիկանություն ՀՀ գլխավոր դատախազություն ՀՀ ազգային անվտանգության ծառայություն ՀՀ արդարադատության նախարարություն ՀՀ պետական եկամուտների կոմիտե	2009-2012թթ.	ՀՀ պետական բյուջեով նախատեսված միջոցներ և ֆինանսավորման այլ աղբյուրներ

**6. Միջազգային համագործակցությունը**

6.1	Հայաստանի Հանրապետության կառավարության և ՄԱԶԾ-ի միջև շարունակել համագործակցությունը Հարավային Կովկասում թմրամիջոցների հակագրման ծրագրի հիմնգերբորդ փուլի հետագա իրականացման ուղղությամբ	ՀՀ արտաքին գործերի նախարարություն		Միջազգային կազմակերպությունների միջոցներով
6.2	Թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի կազմակերպման նպատակով սպահովել լայն համագործակցություն Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված միջազգային կազմակերպությունների հետ	ՀՀ արտաքին գործերի նախարարություն		Լրացուցիչ ֆինանսական հատկացումներ չեն պահանջվում
6.3	Ընդլայնել և բարելավել համագործակցությունը օտարերկրյա իրավապահ մարմինների ու մասնագիտացված միջազգային կազմակերպությունների (Ինտերպոլ, Եվրասպոլ) հետ	ՀՀ գլխավոր դատախազություն ՀՀ ոստիկանություն ՀՀ ազգային անվտանգության ծառայություն		Լրացուցիչ ֆինանսական հատկացումներ չեն պահանջվում

**7. Մոնիտորինգը և գնահատումը**

7.1	Ապահովել թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի ազգային ծրագրի իրականացման պարբերական մոնիտորինգը և գնահատումը	Միջգերատեսչական հանձնաժողով		ՀՀ պետական բյուջեով նախատեսված միջոցներ և ֆինանսավորման այլ աղբյուրներ
7.2	Ապահովել ծրագրի մոնիտորինգի և գնահատման տարեկան արդյունքների ամփոփումը և հրապարակումը	Միջգերատեսչական հանձնաժողով		ՀՀ պետական բյուջեով նախատեսված միջոցներ և ֆինանսավորման այլ աղբյուրներ

	<b>8. Կառավարումը, համակարգումը և համագործակցությունը</b>		2009-2012թթ.	Լրացուցիչ ֆինանսական հատկացումներ չեն պահանջվում
<b>9. Ֆինանսավորումը և ֆինանսական միջոցների հավաքագրումը</b>				
9.1	Կազմակերպել և անցկացնել դոնորների ազգային կոնֆերանս	Միջգերատեսչական հանձնաժողով ՀՀ ֆինանսների նախարարություն	2009-2012թթ.	Լրացուցիչ ֆինանսական հատկացումներ չեն պահանջվում
9.2	Զարգացնել հասարակական ոլորտի ներուժը ֆինանսական միջոցների հավաքագրման ուղղությամբ	Միջգերատեսչական հանձնաժողով ՀՀ ֆինանսների նախարարություն	2009-2012թթ.	Լրացուցիչ ֆինանսական հատկացումներ չեն պահանջվում
9.3	Մշակել և ներդնել կառուցակարգեր, որոնք կապահովեն տարբեր մարմինների և կազմակերպությունների կողմից սույն ժամանակացույցով նախատեսված միջոցառումների համակարգված իրականացումը	Միջգերատեսչական հանձնաժողով	2009-2012թթ.	Լրացուցիչ ֆինանսական հատկացումներ չեն պահանջվում